

ANDASTAN

ARTS ET
LETTRES

Մանգրիկ
Գրական

ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԻԵՍՏԻ

Ա. ԱԼԻԳՍԱՆԵԱՆ
ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷԱՍԵԱՆ
ԵՂԻՇԷ ԱՅՎԱԶԵԱՆ
Վ. ԵՐԱՆԳԵԱՆ
ՏՈՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ
ՀՐԱԶ ԶԱՐԳԱՐԵԱՆ
ՌՈՒԲԷՆ ԶԱՐԵԱՆ
Թ. ԹՈՐԱՆԵԱՆ
ՆԱԶԱՐԷԹ ԹՕՓԱԼԵԱՆ
Զ. ՈՐԲՈՒՆԻ
ՀՐ. Ն. ԹՈՐՈՍԵԱՆ
ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ
Լ. ՄԻՐԶՈՅԵԱՆ
Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ
ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ
ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ
Vahé GODEL
Jean GROFFIER
Ժ. ՊԱԶԱՆ
Ժ. ՓՐԵՎԵՐ
Ֆ. ՎԻԼԼՈՆ
Գ. ՔԵՐԷՍԹԷՃԵԱՆ
Գ. ՖԵՆԷՐՃԵԱՆ

ԳԱՌՉՈՒ
ՍՕՆԱ ԹՕՓԱԼԵԱՆ
ԺԻՐԱԳՕ
Բ. ԹՕՓԱԼԵԱՆ
Տ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
ԹՈՐՈՍԵԱՆ
ԺԵՐԱՆԵԱՆ
ՇԱՐԹ
ՏԱՏՐԵԱՆ
Զ. ՄՈՒԹԱՖԵԱՆ

16

1966

Fonds A.R.A.M



ԱՆԴԱՍՏԱՆ

Պարբերական

Գրականության և Արուեստի

*

16

ANDASTAN

REVUE ARMENIENNE

ARTS ET LITTÉRATURE

Directeur : P. TOPALIAN

PARIS

1965

Fonds A.R.A.M



Faint, illegible text or markings below the top stamp.

18

AMERICAN


LIBRARY

OF THE

UNIVERSITY OF

CHICAGO

1933



ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ (*)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Առաւօ՛ տ պարզ, եւ խաղաղիկ եւ բարի,
Քու կիսաբաց շուրթ երով դուն կը հակիս,
Մըտերմութեամբ խոտի, ծաղկի ու քարի,
Համբոյր տալու սիրադայլայլ իմ երգիս:

Առաւօ՛ տ պարզ, եւ քաղցրութեամբ շաքարի,
Որ կը հալիս ծոցիկն ուչիմ թանաքիս,
Ես աղքատիկ տէրն աղքատիկ քանքարի,
Քեզ կ'ընծայեմ տաղիս հետ սիրտս ու հոգիս:

Առաւօ՛ տ պարզ, եւ ճրիօրէն երկնատուր,
Նոր աշխարհին վրայ բացուէ՛ զերդ ոսկի դուռ,
Տաքցո՛ւր խեղճերն, որոնք լալով քեզ կուզան:

Առաւօ՛ տ պարզ, դուն դեռ թըռչնիկ անփետուր,
Որ կը մեռնիս մեր ոտքին տակ առաթուր,
Տո՛ւր որ հոսի երգս աղբիւրէդ կուսական:

Տ Ա Պ Ա Ն Ա Գ Ի Ր

Հոս է թաղուած վարդն, որ երբեք չի թողմիր,
ձառագայթին պէս այգուն.

Զի արիւնէն ծաղկեցաւ վա՛րդը կարմիր,
Կարօտներովն իր թագուն:

Հոս է թաղուած սիրտն, որ երբեք չի մեռնիր,
Լուսնակին պէս տանիքիս.

Զի հոն կաթեց Աստուծոյ սէրն անպատիր,
Եւ արցունքն հէք Մայրիկիս:


Երբոր կարդաս, անցո՛րդ մարդ, դուն մի՛
տխրիր,

Տե՛ս, շուրթերս իմ կը ժրպտին.

Զի քարին տակ երկինք մը կայ լուսալիւր,
Կոյս դայլայլովն արտոյտին:

Ա. Տ.

Վիմամպլը, 1949



(*) Հայ ֆերթոզութեան համար մեծ կորուստ մըն է Ահարոնի մահը (Փետ. 1965): Իր եղբոր՝ Գրիգոր Տատուրեանի կը պարտինք այս երկու անտիպ հնչեակներու արտագրումը, որոնք մաս կը կազմեն Մագաղաթներ հատորին:

ԳՈՒՊԱՐ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ

Մէն մի բաղխումէ վերջ, արիւնթաթախ Տեղակալ, կը քաշուիմ խրճիթս: Այժմ, պարզ մահկանացու, կը համաձայնիմ տալ պարտուած ոստիին, ինչքան մաս որ ուզէ, գրաւուած կայքերէն: Հիմա, որ ալ Տեղակալը չեմ, այժմ որ ալ Յաղթանակը տարուած է, ես իմ խրճիթս ալ կուտամ՝ ոստիին պարտուած:

Ո՞ր խորհրդաւոր Վեհապետին համար է, որ՝ մոլեռա՛նդ, հիւինոսացա՛ծ, կ'առնեմ զէն ու զրահ, ու կը մեկնիմ խելայեղ, դէպի գուպարներն աններող:

ԽԵՂՃ, ՄԱՐԴ

Շիլ մատուակներ տուին քեզի, խեղճ մարդ, իմ եղբա՛յրս, դաշխուրաններով հասարակ գինի, մերթ՝ քացախ, միշտ՝ թոյն:

Ես սակա՛յն, ինչպէ՛ս, ինչպէ՛ս կ'ուզէիր արբենալ... Գողցան ոսկիներդ, մի առ մի: Քեզ քչեցին կրպակներէ ներս անհամար:

Ինչպէ՞ս չըլլաս՝ ծարաւի՛, անձկահա՛ր, տագնապալի՛ր: Ա՛, ինչո՞ւ չտայիր ամբողջ գանձդ Մատուակին ամէնագօր, տէր համայն այգիներուն, որ ապահովէր քեզի գինին՝ անապական արբեցութեանց...:

ՄԻԱԿ ԱՓՍՈՍԱՆՔՍ

- Կ'ափսոսա՞ս փառքը', ոսկի'ն:
- ≡ Ո'չ իսկ մէկ անգամ:
- Կ'ափսոսաս կեանքը՞:
- ≡ Ան տուաւ ինչ որ կրնայի առնել:
- Թերեւս՝ Արուե՞ստը:
- ≡ Ո'չ միշտ:
- Այն ատեն՝ Սէրը:
- ≡ Ա՛, ա'ն էր որ եկաւ, երբ եկաւ այն բոլոր
անգամներուն եւ ես՝ չճանչցայ զայն:
- Ո՞րն է, ո՞րն է հապա քու ափսոսանքդ:
- ≡ Այն բոլո՞ր, այն բոլո՞ր ըոպէները ուր պէտք
է որ սիրէի եւ չսիրեցի: Ատիկա պարտք մըն էր որ
առած էի Աստուծմէ եւ զոր երբեւէ, ալ երբեւէ պի-
տի չկրնամ վերադարձնել:

Հ. Զ.



ԿԵԱՆՔԻ ՄԱՌԱԽՈՒՂԻՆ ՄԵԶԷՆ

Մըջիւններու պէս որ օրն ի բուն կ'աշխատին պարէն ամբարելու՝ ես ալ ամէն տեղ կ'երթամ, յուսալով որ որեւէ անակնկալ ուրախութիւն կը հանդիպի: Ամբողջ կեանքս կարծես թէ երկարատեւ ու յաջորդական ճիգ մըն է՝ հաճոյք որոնելու: Ամէ'ն արարքիս տակ թաքուն շարժառիթ մը կայ, ամէն շարժումս որեւէ ներքին մղումով կը բացատրուի ու միշտ շարժառիթը նոյնն է — քիչ մը ուրախութիւն... բոլոր մարդոց պէս եմ ու կը նայիմ մուրացիկի մը որ իր լերկ ու պաղատագին ափը երկարած է անցորդներուն ու կ'ըսէ՝

— Գթացէք այս ախուր եւ ապերջանիկ մարդուն, տեսէք որքան աղքատ է...

1. ՄԱՀՈՒԱՆ ՈՒ ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

... Հիմա, ահա կը մտածեմ ես ալ մահուան մասին ու հետզհետէ յուզումս կը մեծնայ: Ու ես ինծի կ'ըսեմ — եթէ վաղը հարկ ըլլայ մեռնիլ, պատրաստ ես: Գիտեմ որ շատ բաներ կան կատարելիք որ չեմ կատարած, գործեր կան որ մնացած են կիսատ, երգեր՝ որ մնացած են անաւարտ: Հարկ եղած զօրութեամբ չեմ ապրած եւ եթէ պէտք ըլլար վերսկսիլ կեանքը, անշուշտ տարբեր ձեւով պիտի ապրէի:

Տարիներու ընթացքին զանց առած եմ շատ բաներ՝ որոնց կարեւորութիւնը հետզհետէ կը շեշտուի ու ընդհակառակը՝ կարեւորութիւն ընծայած եմ զանցառելի, զուր եւ անիմաստ բաներու: Ապրած եմ

կծկուած ինքզինքիս վրայ, ինչպէս խղունջ մը իր պատեանին մէջ ու միայն արեւոտ եւ լաւ օրերու է որ գլուխս հանած եմ դուրս: Հակառակ բոլոր ճայներուն որ բարձրացած են հոգիէս՝ եղած եմ անձնասէր, ինքնաբաւ, դժկամ ու բծախնդիր: Խորապէս արհամարհած եմ մարդիկը՝ իրենց տգիտութեան, գոեհկութեան, գէշ ու խոտելի կողմերուն համար, գիտնալով հանդերձ թէ արհամարհելով չէ որ ուրիշները կարելի է բարձրացնել: Մարդոց իրական ու մեծ ցաւերուն դիմաց՝ ցոյց տուած եմ միայն անօգուտ եւ զուր գլխութիւն մը, խորշած եմ մարդոց թշուառութենէն ու աշխատած եմ հեռուէն անցնիլ, գիտնալով հանդերձ որ ոչ մէկ առաքինութիւն կայ տառապանքէն խոհական քայլերով հեռանալուն մէջ: Աղքատ, տարաբախտ ու մառախուղի մէջ ապրող մարդոց հետ՝ որ գրեթէ միշտ շրջապատած են զիս՝ եղած եմ կարծես օտար, դրսեցի մարդու մը պէս որ առօրեայ կեանքին չի խառնուիր ու պաշտպանած եմ աւելորդ յամառութեամբ՝ իմ ներքին խաղաղութիւնս: Մէկ լուսքով՝ եղած եմ չէզոք ու անվնաս մարդ մը, որ կեանքին մէջէն կ'անցնի առանց յաղթանակի եւ առանց վէրքի, մինչդեռ գիտեմ որ անընդհատ պէտք է գինուոր ըլլալ որեւէ բանակի, պէտք է անընդհատ մտնել գուպարի, հարուածել, հարուածուիլ, յաղթել...:

Բայց ինչ որ չեմ ներեր ինքզինքիս՝ ատիկա մեծ եւ դատապարտելի խարշանքն է որ հոգիիս մէջ կը կրեմ մարդոց կամայ թէ ահամայ բոլոր տգեղութիւններուն եւ թշուառութիւններուն հանդէպ: Չափազանցուած ու յանցաւոր սիրով մը սիրած եմ բոլոր գեղեցիկ բաները: Հարուստ սենեակի մը ներքինը կամ լաւ յարգարուած գրասեղան մը, մաքուր եւ անթերի հագուստներ, խաղաղ ու բաւարար դիւրակեցութիւն մը, լամբարին լոյսը պատուհանին ետին եւ կրակը որ մեր մրսկուն ու տրտում մարմինը կը տաքցնէ, գիրք մը ծունկերուդ վրայ ու գլանիկ մը շրթներուդ, ահա՛ ամբողջ երազս, իմ թշուառական ու խեղճ երազս որ կրցած եմ իրագործել: Միթէ կ'արժէ՞ ապրիլ ու շնչել այսքան գժուճ ու յետին հեռանկարներով: Կը զգամ որ ո՛չ:

Ի հարկէ այս բոլորէն դուրս՝ սիրած եմ նաեւ գեղեցկութիւնը առ հասարակ ու ինքն իր մէջ: Կը յիշեմ որ խելայեղ ու ազշահար կեցած եմ վերջալուսային դաշտանկարներու առջեւ: Սիրած եմ անասուններու աննկարագրելի բարութիւնը եւ անոնց գեղեցկութիւնը դաշտին մէջ, հերկի օրերուն, երբ բեղուն հողը կը պատուռի ու կ'արտաշնչէ: Սիրած եմ ջուրերը որ կը խոխոջեն, լիճերը որ խաղաղութեամբ կը ննջեն լուսնի լոյսին տակ, արշալոյսները որ կը բացուին ու գիւղաքաղաքին հրաշալի երեկոները: Աղբիւրներուն երգը գուռերուն մէջ ու աղջիկներուն առողջ եւ ուրախ ծիծաղը ցանկապատներէ սերս: Ծիծեռնակ մը որ կը ծլուրլայ կտուրի մը տակ ու ջուրը որ կը գլգլայ՝ կուժին մէջ: Սիրած եմ երկինքի պատառներ որ կը շողան, դաշտանկարներ որ կապոյտ մշուշով մը կը պարածածկուին, ցորենի արտեր որ կը ծփան հովէն, գեղին եւ լայն ճամբաներ որ կ'երկարին հեռուն, գէպի անհուն տարածութիւնները:

Սիրած եմ երգի կտորներ, եղանակներ, բառեր՝ որ — օ՛ր բառերը որ սիրած եմ — ամբողջ մեր հին մագաղաթ բուրոզ ու ոսկեղինիկ լեզուն: Սիրած եմ բանաստեղծութիւնները, խոնարհ մարդոց կեանքի պատմութիւնները, ու պատահած է որ արտասուեմ՝ գիրքի մը մէկ էջին վրայ:

Անգամ մը կեցած եմ յուզումնահար, դաշտի ճամբու մը եզերքը, գլխաբաց ու խանդաղատանքով լի, լսելու համար հեռաւոր մատուռի մը զանգակին ձայնը, քաղցրաթախիծ ու անցելայոյզ: Պատահած է որ ամբողջ հասակովս ծունկի գամ, պրգտիկ ու նորաբաց ծաղիկի մը առջեւ, զգալով ստեղծագործութեան ամբողջ խորհուրդը: Սիրած եմ լոյսի խաղերը գիւղաքաղաքին փողոցներուն մէջ, նախիրին վերադարձը իրիկուան ճամբաներէն, կովերը որ կ'անցնին բառաչելէն, յորդ ու լեցուն ծիծերով: Նորածին գառնուկներն ու ուլերը՝ իրենց բրդոտ ու փափուկ մորթերով եւ մայելէ՛ն, մայելէ՛ն...: Սիրած եմ աղջիկներ որ իմս չեղան բնաւ, մարդիկ որ զիս չսիրեցին, մանուկներ որ ուրիշինն

են, տղա՛ք, սիրած եմ ամբողջ աշխարհը, մեծ ու կորստաբեր սիրով մ՛ը:

Սիրած եմ աչքեր՝ շողուն ու լուսաւալ, որոնց խորը արտասուքի կաթիլներ կը դողան: Սիրած եմ պայծառ ու քաղցր դէմքեր որ կը ժպտին, ձայներ որ կը հնչեն հեռաւոր ու քաղցր երգերու պէս ու ձեռքեր որ մաքուր են եւ սպիտակ եւ որոնց վրայ մարդ կ'ուզէ յուզումէն արտասուել...:

Բայց ո՞վ է որ չի սիրեր գեղեցկութիւնը եւ ի՛նչ հոգեկան մեծութիւն կայ, ի՛նչ հերոսութիւն զայն սիրելուն մէջ: Կեղեցիկ աղջկան մը առջեւ ամենայեալին արարածն իսկ կը մնայ շփոթահար ու խռով: Մնաց որ սխալ եմ երբ կ'ըսեմ թէ գեղեցկութիւնը սիրած եմ ինքն իր մէջ: Զայն սիրած եմ ինձ պարգեւած ուրախութեան եւ երջանկութեան համար՝ եսասիրաբար, շահախնդրաբար: Ու ամէն անգամ եւ ամէն գեղեցկութեան առջեւ՝ եղած եմ ընչաքաղց ու անօթի մարդու մը պէս՝ որ ամէն բան կը ցանկայ իրեն համար:

Ահա՛ այսպէս մարդ մը եղած եմ ես, հասարակ ու սովորական մանր քաղքենի մը որ հողին վրայ կը սողայ: Ու ինչ որ զիս կը զայրացնէ, իմ վստահութիւնս է թէ այս սողերը կրնան փոքրիկ փոփոխութիւններով ստորագրել իմ շուրջս ապրող բոլոր մարդիկը, առանց բացառութեան: Արդէն պէտք է ձեզի ըսեմ, որ ես այսպէս մարդ մը չեմ եղած ու ամբողջ կեանքիս ընթացքին՝ անընդհատ կռիւ մղած եմ, իմ հոգիիս խորը ազատօրէն ապրող այս հեռաւոր մարդուն դէմ: Ես ձեզ խաբեցի, ընկերներ՛ իմ, ես ուզեցի որ յստակ առուակի մը պէս ըլլամ ու դուք ձեր ախուր պատկերը տեսնէք իմ պայծառ ջուրերու վրայ: Ես միշտ գիտցած եմ, սկիզբները անորոշ կերպով, բայց հետզհետէ աւելի պարզութեամբ՝ թէ դիւրին, հասարակ ու սովորական բան է գեղեցկութիւնը այս եղանակով սիրելը, այս եղանակով փնտռելը: Կը զգամ ու զգացած եմ միշտ որ եթէ գեղեցիկ են կնոջ մը սպիտակ, մաքուր ու անթերի ձեռքերը որ աշխատանք չեն տեսած, նոյնքան ու գուցէ աւելի գեղեցիկ նաեւ մօր մը կարկամ ու բարի ձեռքերը որ մաշած, հինցած, գունաթափ ե-

դած են լուսացքի տաշտին մէջ: Օ՛ մարդոց թշուա-
ռական, մանր-քաղքենի ու գճուճ երազը, որքա՛ն
քեզ կ'արհամարհեմ, որքա՛ն ամօթահար եմ, այն-
քան երկար ատեն քեզ շուրջս տեսած, քեզի հետ կե-
նակցած ըլլալուս համար:

Կեանքի մէջ, այս բոլորէն վեր, պէտք է փըն-
տըռել ուրիշ, ո՛, ուրիշ գեղեցկութիւն մը...:

Ես կը մտածեմ մահուան մասին. սպիտակ, հե-
ռաւոր. կը մտածեմ:

Պայքարի մասին, ո՛, գիտէ՞ք...:

Յեղափոխութեան մը մասին որ...:

վ. Շ.



ԵՍ ԻՆԾԻ ՀԵՏ

(Մ տ ա ծ ու մ ն ե ր)

Նայեցէք ի՛նչպէս կը վազէ ժամանակը :

Ժամանակը շարունակ անցեալ կ'ըլլայ, բայց երբեք չի մոռնար որ, անդամ մը անցեալ եղած է : Ներկային փակած՝ ներկան կ'երազէ : Իր անցեալին՝ որ ներկան է : Ապառնին որ կը գլորի վերէն վար, անցեալ ըլլալէ առաջ, կը մտածէ թէ պիտի հանդի ներկայի հանգրուանին, բայց ուր հանդիստ չունի . վասնզի կը շարտուի անմիջապէս անցեալին մէջ, ներկայի յիշատակներով թարտուն եւ որ անցեալին անցեալն է :

Ո՞ւր է յառաջգիմութիւնը :

Ժամանակը խնչափառի քայլերով կ'ընթանայ, միշտ դէպի ետ, երթալ երազելու համար անցեալին ծոցը :

Ներկան է վերջին եւ մնայուն իրականութիւնը, բայց դատապարտուած է երազ չունենալու :

*

Միայն արուեստն է տէրն ու տիրականը անցեալին : Երազին պէս անցեալին տարրերովը յղփացած՝ ան ամէն ինչ կը բերէ ներկային : Ներկայի բանտին մէջ խեղդուկ՝ որ յաւիտենականութիւնն է :

*

Երբ կը քալեմ, կը քալեմ դէպի ապագան, նոյնիսկ երբ ետ կը քալեմ :

Ասոր համար կ'ըսեն որ մարդը ազատ է : Բայց անոր ազատութիւնը մահկանացու է :

Ժամանակը, զարմանալի, երբեք ետ չի կրնար քալել : Ժամանակը դատապարտեալ մըն է, որ ազատութիւն չունի բայց անմահ է :

Ապազայ ամէն վայրկեան անցեալ կ'ըլլայ : Անցեալը անոր գերեզմաննոցն է : Մարդուն անցեալն ալ իր գերեզմաննոցն է, բայց չիմուած է անոր մահովը . մինչդեռ ժամանակին գերեզմաննոցը անոր կեանքն է, որովհետեւ ան տարածութիւնն է :

Տարածութիւնը խտացած, կայուն, մշտնջենական ժամանակն է :

*

«Եղիցի լոյս եւ եղեւ լոյս» : Բայց ինքը՝ Աստուած իրեն վերապահեց խաւարը : Անտեսանելի՛ իր խաւարէ պալատին մէջ :

Լոյսը մարդուն համար, որպէսզի անտես չառնուին տեւականօրէն իրեն տղեղութիւնները : Գեղեցկութեան ծարաւով ապրելու համար տղեղութիւններու աշխարհին մէջ :

*

Մարդը զաւաթ մը ջուր տուողին «չնորհակալութիւն» կ'ըսէ, բայց երբեք Սնոր՝ որ այդ ջուրը ստեղծեց :

*

Գոռողը այն է որ չնորհակալ ըլլալ չի գիտեր :

*

Ժամանակը, կ'ըսեմ, կը մաշեցնէ :

Արդարեւ, անդադար, ան կը սղոցէ կեանքին արմատը :

Մեծ հերոսները անոնք են որ՝ յաղթանակներ տարին ու անհետացան՝ իլուած սղոցին ատամներէն : Հերոսները անոնք են որ՝ այդ մաշեցնող սղոցը կը մաշեցնեն ութսուն, հարիւր տարիներ :

Ըլլալ այդ հերոսը ամէն բանէ վեր :

Բայց ի՞նչ ընելու համար :

*

Ամէն ինչ ձեւ է : Գոյութիւնը կ'արտայայտուի ձեւերով : Ո՛չ կ'ըսեմ, ձեւն է գոյութիւնը, այն՝ որուն իրականութիւն կ'ըսենք : Ինչ որ չեմ հասկնար այն է որ իրապաշտները ըլլան եւ ոչ թէ գաղափարապաշտները ձեւը ժխտողները :

Ի՞նչ տարբերութիւն կայ ձեւը ժխտողին եւ գաղափարապաշտին միջեւ :

Պէտք է մտածել :

Մտածել... բայց ինչպէս մտածել առանց զգալու : Զգացումը մտածումէն առաջ է : Ամէն տեղ տիեզերքի մէջ կարգ ու կանոն կայ : Մէկ բանը միւսին հտեւ չարուած : Երբեք քով ըովի : Գրեթէ զինուորական կարգ ու կանոն :

Մտածել կը նշանակէ ամփոփել ինչ որ զգացումը տարտըղնած է : Զգալ՝ տարրագտել, վերլուծել, ցրուել, բայց չլալ վէրքին համար զոր զգացումը կը բանայ սիրտին մէջ :

Մտածումը կը համադրէ, օգնութեան կը հասնի : Այս է մտածումին պարտականութիւնը : Ուրիշ ոչինչ : Ուրիշին թափածը կը ժողվէ :

Laquais !

Փրկել զգացումը ստորագասի մը հսկողութենէն : Միակ իրաւունքի ճամբան՝ բարձրացնել զանն, աւելի վեր, միշտ աւելի վեր, մինչեւ որ հասնի երկինք : Մինչեւ որ անհետանայ երկիրը : Մինչեւ որ չփոթուի երկինքին հետ :

Այն ատեն սկսիլ ապրիլ :

Զգալ յուզուիլ է :

Յուզումը աւելն է որ կը բարձրանայ ձողունէն ու յանկարծ ձեւ կ'առնէ, վարդ կ'ըլլայ իր բազմաթիւ թերթերով : Բայց ինչքան կարճատեւ :

Վաղը թերթերը պիտի իյնան իրարու ետեւէ ու դադրին ձեւ ըլլալէ : Ի՞նչ պատրանք :

Ո՞վ պիտի ըսէ կսկիծը որ կայ աւելին եւ իր ծաղկեցուցած ձեւերուն միջեւ գտնուող տարածութեան վրայ :

Կեանքը՝ այս կսկիծը :

*

Պարտէզին մէջ վարդենին ծաղկեր է : Դեռ երէկ անոնք անտեսանելի էին, անձեւ :

Երէկ վարդերը չկային : Կային, բայց դեռ ձեւ չէին : Իրականութիւնը՝ ձեւ : Իսկ ձեւը՝ պատրանք :

Վաղը վարդերը պիտի վերադառնան անտեսանելիին, անտեսանելիին անսահման շտեմարանը, անյայտին՝ ուրկէ եկան եւ ուր պիտի վերադառնան :

Ես ալ ձեւ մըն եմ :

*

Այդպէս՝ ճափոնական նկարչութիւնը :

Սպիտակ թուղթ : Անհուն, չէզոք տարածութիւն մը : Յանկարծ անհունը ձեւ կ'առնէ, անհունը կը ծնանի, ծիւ կ'արձակէ, կ'ըլլայ ճիւղ : Ճիւղ մը՝ որ աստ պիտի կորսուի միւս ծայրը, անհունին մէջ :

Եւ թուչուն մը կ'երգէ ճիւղին վրայ իր օրհասական երգը, տերեւի մը հովանիին տակ, տրտում ու մելամաղձոտ :

Ոչ մէկ ձեռք, ոչ մէկ վրձին դպած ըլլալ կը թուի այդ թուղթին :

Անհուն սպիտակութեան վրայ վարագոյր մը բացուեցաւ եւ ահա պիտի գոցուի արդէն :

*

Օրուան ամէնէն դեղեցիկ պահը առաւօտն է : Արեւածագը : Մարդիկ, որքը ձգած, արագաքայլ կը դիմեն աշխատանքի վայրերը, շինելու, կառուցանելու, ստեղծելու համար :

Քաղաքներուն, դաշտերու արահետներուն մէջ, մարդը ճակատաբաց գրոհ կուտայ երկինքին :

Բայց կէսօր թէ իրիկուն ճակատը պնակներուն վրայ ծըռած, ան ախոսներով կը յօշոտէ կեանքը : Կը քանդէ :

Ամօթալի բան մը կայ այդ տեսարանին մէջ : Ատոր համար չէ՞ որ ան կը մեկուսանայ իր որքը : Կը զգայ որ անվայել բան մը կայ իր ըրածին մէջ :

Կը քանդէ կեանքը, կը սպաննէ, ոճրադուրծը, կեանքը մահի վերածելու համար :

Մահն է որ կեանք պիտի ըլլայ նորէն :

*

Ամենամեծ անդթութիւնը մարդուն, այն է որ միշտ արշալոյսին կը գործադրէ մահապատիժը :

Երբ արեւը կը սկսի ծագիլ :

Երբ կեանքը կը վերսկսի :

*

Ապացոյց որ միշտ կողմնակալութիւն կայ մտածումին եւ ամէն բանի մէջ, քանի որ դահիճը կը կոչուի ընտրութիւն — վերը ըրած խղաննեղութիւնս :

Թերեւս ընկերութեան մեծագոյն պատիւն է սպաննել կեանքի վերսկսումի պահուն, երբ լոյսը կը ծագի, որպէսզի մարդը մեռնի գոնէ յարութեան յոյսով :

Յոյսը՝ քաջութեան այս մուրացկանը :

*

Մահը, ինքը, ժամ չունի : Սուրը կը զարնէ ճիտին ուզած ատենը : Բայց մանաւանդ գիշերը, երբ մարդկութիւնը քաշուած է հրապարակէն :

Այս ալ թերեւս անոր գթութեան զլացումն է :

*

Երեւակայութիւնը զգացումին ստնտուն է : Ինչքան շատ կաթ տայ, այնքան կը մեծնայ երեխան :

*

— Բայց սիրտս ուզում է, ըստե կրն մը :
 Կոտորէ սիրտդ, եթէ կ'ուզես ապրիլ :
 Բայց ինչպէ՞ս ապրիլ առանց սիրտի :

*

Հանճարը, սուրբը, այն է որ կամքը գերադրահանով կը
 զործածէ :

*

Ամէն անգամ որ մէկը կայ՝ սէրը կայ : Երկուքով՝ կը
 սկսի ատելութիւնը :

Սէրը կը ծնի երկուքէն : Բայց վայ այն սէրին որ չի վե-
 րադառնար միութեան :

Կենալ չկայ : Պէտք է քալել կամ դէպի առաջ՝ մահ, կամ
 դէպի ետ՝ անէութեան :

*

Երբ կը գրեմ՝ ամբողջ ժողովուրդ մը նստած է դիմացս :
 Ամբողջ մարդկութիւն մը : Կը զգամ անոր ներկայութիւնը՝
 որ սակայն բացակայութիւնն է եւ երբ կը խօսիմ անոր հետ,
 զրիչիս ծայրով բացակայութիւնը կ'ըլլայ ներկայութիւն եւ
 ես կը հաղորդուիմ անոր հետ : Իմ բացակայութիւնս որ իմ
 մինակութիւնս է, ինքն ալ կը փոխուի ներկայութեան : Այս-
 պէս երկու ներկայութիւնները իրար կը խառնուին, իրարու
 կը հաղորդուին :

*

Արուեստը մինակութեան տուամն է :

Ոգի ի բռին, սուր ճանկերս լարած, կը կառչիմ ներկա-
 յին, մինչ ժամանակը ամէն երկվայրկեան, ամէն մէկ մի-
 լիոներորդ երկվայրկեան զիս կը շարունակէ անցեալին մէջ :
 Անցեալին մէջ մարդկութիւն չկայ : Կայ միայն անոր յիշա-
 տակը, ոչ իսկ մարդեղինութիւն : Անցեալը մինակութեան
 դժոխքն է : Ատոր համար կը կառչիմ ներկային տառապան-
 քով, արիւնոտած ձեռքերով :

Արուեստը՝ ներկային կառչելու փորձ :

2. Ո.

Ա

(ՀԱՏՈՒԱԾ ՄԸ ԱՆՏԻՊ ՎԷՊԵՆ)

ԱՅԴ առաւօտ, երկինքի պայծառ կապոյտէն զով անդորրութիւն մը կը մաղուէր վար: Անոր զուարթ մթնոլորտէն յանկարծ պայթող թաթառի մը նման՝ բատիոյին ալիքներէն շահեր էր զգայացունց լուրին որոտը: Յաջորդ քառորդ ժամուան հետ, համալսարանի բոլոր շէնքերէն ներս եւ ամէն դասարանի մէջ ու միջանցքի երկայնքին՝ ապշութեան ու վախի անդոհանք մը ծանրացեր էր: Ուսանող տղոց եւ աղջիկներու խումբեր կը խոնուէին որեւէ պատի տակ, սենեակի մէջ կամ լուացարանի անկիւն, եւ կը խօսէին, երբեմն զաղտնի փրփուքով, յաճախ ազմկոտ վէճով: Ուսուցիչներ կը բարեւէին զիրար ինչպէս երէկ, կամ անցեալ տարի, բայց աչքերնուն մէջ կասկածի ցուրտ ակնարկ մը, որ կարծես կը հարցնէր.— «Արդե՞ք աս ալ մատնող մըն է»: Եւ կը խօսակցէին վերապահ, տարտամ, դէմքերնին մթաղնած երկիւղի ու վրդովումի մոռյլով:

Առտուան առաջին հաղորդման պահուն, մինչ բառերը հեւքոտ վազքով մը կը խուժէին իր շրթներէն դուրս՝ լրատուն յայտներ էր փոթորիկին մօտալուտ ճայթիւնը: — Քննիչ յանձնախումբը երկու օրէն պիտի մտնէր համալսարան, ուր պիտի վարէր շարք մը դռնբաց նիստեր: Արդէն կը նախատեսուէր, որ անոնց յարուցած փոշին ու աւերը բաւական մեծ համբաւներ պէտք է թաղէին իրենց տակ: Անանուն աղբիւրէ բղխած զեկոյցը հաւաստեր էր, թէ տասնեակ մը ծանօթ դաստիարակներ պիտի կանչուէին վկայութեան: Եւ դժուար չէր գուշակել, որ իբրեւ հետեւանք պիտի տապալէին կարգ մը ամպիոններու գլուխներ: Իսկ անոնց կողմէ սերմանուած խոզվարար դաղափարներ եւ ծածուկ շարժումներ, իրենց քօղերէն մերկացուած՝ պիտի սրբուէին:

«Շատ հաւանօրէն, քանի մը փրոֆէսէօրներ պիտի նա-

խընտրեն պահոււթիւլ հինգերորդ Բարեփոխման վահանին հտեւ, եւ պիտի մերժեն պատասխանել յանձնախումբի հարցումներուն, առարկելով թէ ատիկա կրնայ վտանգել զիրենք... բայց այդ լուսթիւնը արդէն խոստովանանք պիտի չըլլա՞ր իրենց անցեալ մեղքերուն», հեղինանքի հատու շեշտով ճարճատեր էր լրաքաղին ձայնը :

Զեկոյցին մէջ, որ չաղախուեր էր պղտոր կասկածի մը մշուշուած գրգռութեան խմորով՝ միայն յիշուեր էր Փրոֆ. Ճէյմզ Պրուքս, իբրեւ ամէնէն շարաշուք ազդեցութիւնը : Ան կ'ամբաստանուէր յանցանքով մը, որ ահարկու էր իր տարտամութեան մէջ : Անոր դէմ հանուած մեղադրանքն այն էր, որ Պրուքս կը թունաւորէր իր խնամքին յանձնուած ուսանող սերունդին անմեղ միտքերը, երբ զանոնք տարակոյտով կը վարակէր ամերիկեան բարձրադոյն արժէքներու եւ իտէալներու հանդէպ, կամ անոնց կը ներարկէր այլասերող հակումներ, որ կեանքի չփորձուած ուղիներ խուզարկեն, եւ ցնորական վարկածներ տարրալուծեն :

« — Հակամերիկեան մտածման եւ դասերու լծուած մարմիններու հետ՝ Փրոֆ. Ճէյմզի դործակցելուն փաստերը առատ եւ անհերքելի են », կ'եզրակացնէր անյայտ դատախազը : « Զանոնք լսելէ ետք, որեւէ ճշմարիտ ամերիկացի չի կրնար խուսափիլ շարժարող հարցումէ մը. — Ի՞նչպէս հնարաւոր դարձեր է, ի՞նչ աններելի անհոգութեան արդիւնք եղեր է, որ երկար տարիներ, մեր որդիներն ու դուստրերը կը թեւու նուիրական գործը լքուած ըլլայ այսքան մուլթ շարժառիթ եւ վատ նպատակ ունեցող մարդոց զթուլթեան » :

Պրուքս անտեղեակ էր դէպքին, երբ նախագահ Նորթրնի սենեակը մտաւ : Ան կանչեր էր զինք ըսելու համար, որ շարունակէ աւանդել իր ընթացիկ դասերը, առանց ազդուելու « դժբախտ պատահարէն » : Եւ աւելցուցեր էր, ձայնին մէջ անձկութիւն, ու տխրօրէն շարժելով զլուսխը .

— Եթէ բան մը կ'արժէ, կրնաս ապահով զգալ, Ճէյմզ, թէ հակառակ... այս միջադէպին, քու անձիդ հանդէպ իմ վստահութիւնս եւ համակրանքս կը մնան անփոփոխ :

Ինք շուարած զարմանքով նայեցաւ անոր, եւ .

— Բայց ինչդրեմ, պարոն Նախագահ, չեմ հասկնար, նորբա՞ն մը պատահեր է որ... հարցուց :

— Ա՛, ուրեմն դեռ չե՞ս լսած, պատասխանեց ան, եւ պահ մը լուռ՝ ակնարկը ձգեց սեղանին վրայ դիզուած թուղթերուն : Յետոյ պատմեց եղելութիւնը, իր խօսքերը զուսպ ու

յամաք պահելու յայտնի ճիգով մը: Եւ աւարտելէն ետք՝
յարեց:

— Գիտեմ, հարկ չկայ քեզի դիտել տալու, ձէյմզ, բայց
կը վախնամ թէ դէշ ճգնաժամ մը պիտի անցնենք բոլորս, —
դո՛ւն, ես, այս ամբողջ հաստատութիւնը... Ի՞նչպէս ըսեմ...
մեր համոզումները, մեր կորովը պիտի դարձունին անողոք
փորձաքարի...: Երանի՛ թէ, երբ դուրս գանք տազնապի եր-
կար դիշերին մէջէն՝ մեզմէ որեւէ մէկը, ուսուցիչ կամ աշա-
կերտ, իր վարմունքէն ամշնալու պատճառ չունենայ...:

Երբ միջանցք ելաւ, օդի գով հոսանք մը պարուրեց
Պրուքսի քրտնած ճակատն ու քունքերը: Թերեւս հարուածին
անակնկալ թափն էր, խորհեցաւ, որ յանկարծ իր կողորդէն
մինչեւ աղիքներուն մէջ այդ փրուզումը սփռեց: Եւ անհուն
պարապի մը տրամութիւնն ու սոսկումը պատեցին զինք:
Միտքը հաշմուե՞ր էր եւ աչքերուն դէմ ի՞նչ գորշ մառախուղ
էր որ կը ծփար...: Անոր մուժին ետեւէն կը տեսնէր ծա-
նօթ դէմքեր, որոնք խօսքով կամ ժպիտով կը բարեւէին
զինք, ամէն առտուան պէս: Բայց իրա՞ւ անսովոր քնքշու-
թիւն մը կար անոնց մրմունջին եւ ակնարկին մէջ: Եւ դար-
ձեալ, կարծես մտածումը իր գանկին պատերը կը ճանկուտէր,
արիւնած եղունգներով: Եւ ինք կը լսէր անոր ճիշը. — Ահա
երեսուն տարի է, յաւակնեցար ըլլալ ընկերային խոցերու
վիրաբոյժ, արդար, յանդուգն: Իսկ հիմա, տե՛ս, կոպիտ
մատներ, միտքի խաւարին նշդրակը թաթխած ատելութեան
չարաւին մէջ, կը մխրձին քո՛ւ մարմինիդ մէջ: Եւ ցաւին
կոտտանքը, յուսահատ լքումին հետ, կը կլանէր զինք:

Յաջորդ անկիւնէն դարձաւ ձախ, բայց փոխանակ դա-
սարան ուղղուելու, մտաւ լուացարան: Խառնակ, բռնկած
խորհուրդներ կը տրոփէին ճակատին ետեւ ու կ'այլէին զայն:
— Ուրեմն ի գո՞ւր գիտութեան լոյսը եւ ճշմարիտին սէրը,
եւ ազնիւին ձգտումը փոխանցեր էր բիւրաւոր հոգիներու...:
Մինչ սառն ջուրով ողողեց երեսը, դանդաղօրէն սրբուեցաւ
եւ սանտրեց մագերը, յամենալով, զինք պատող մացառու-
տին մէջէն ելքի բաւիղ մը փնտռելով: Կը նայէր, կը ժպտէր
մտնող եւ ելող ստուերներուն: Իսկ լեզուն ու քիմքը կը չոր-
նային ջերմէն: Ուրեմն, մէկ ժամէ ի վեր իրենք դարձուեր էին
նաւարեկութեան մը աղէտէն: Ինք բառ չէր արտասանած
եւ թարթիչ չէր շարժած: Բայց ահա իր կեանքը, արմատէն
խլուած ծառի մը նման՝ կը մատնուէր կոյր ուրականի մը
մազիւններու ծռատումին: — Միայն Ապտուա՞ծ գիտէ, թէ

այս փոթորիկը որքան չարիք պիտի թափէ մեր դուռին, չնչաց: Եւ մտածեց իր կնոջ ու զաւակներուն: — Իմ թանկազին, իմ խեղճ սիրելիներս: Բայց առաջին պահը արդէն իր սկսէր եւ շտապով ելաւ դուրս: Իսկ շուրջի որմերէն հեղձուցիչ ծանրութիւն մը կ'իջնէր վար ու կը հոսէր իր վրայ, կը ճնշէր զինք: Եւ յանկարծ, սուր բեւեռի մը նման՝ հարցումը խրեցաւ միտքին մէջ, — ուսուցիչնե՞ր ի՞նչպէս պիտի վարուէին իրեն հետ, մանաւա՞նդ աշակերտները ի՞նչպէս պիտի ընդունէին զինք: Իսկ իրեն անծանօթ շիրթի եւ վախի այս տարօրինակ զգացումը, ուրկէ՞ կը խուժէր իր վրայ:

Գլխահակ, մտաւ դասարան եւ քալեց դէպի ամպիոն: Կաշիէ պայտասակը դբաւ առջեւի սեղանին, մեղմօրէն հազաց եւ տարտամ ակնարկը յառեց դէմի տղոց եւ աղջիկներու անձկոտ դէմքերուն: Եւ կարծես ներքին հրամանի մը անսալով՝ բոլոր ուսանողները կանգնեցան ոտքի լուռ, արձանացած: Պահ մը անշարժ, անոնք նայեցան իրարու: Եւ մէկէն, աշակերտներ սկսան ծափահարել, նախ վարանելով, յետոյ աղմըկալի խանդով: Պրուքս ձեռքերը պարզեց անոնց եւ տրտում ժպիտով մը.

— Ոնդրե՛մ, հանդա՛րտ, ըսաւ, ատոր հարկ չկայ... Կիտէ՛ք, ես կռիւի դաշտէն յաղթական դարձող հերոս մը չեմ, այլ... ատեան տարուող ամբաստանեալ մը... որուն վրիստոր յանցանքը թերեւս մարդ ծնած ըլլալն է: Եւ չոր քրքշայ ու աւելցուց, — ուրեմն անցնինք մեր դասին: Բայց նախ... խորապէս շնորհակալ եմ ձեզի, զիս հպարտ եւ երջանիկ ըրիք...:

Եւ նստան: Չայնը կը խեղդուէր յուզումէն, եւ աչքերը լեցուեր էին արցունքով:

*

Ամբողջ հաստատութեան մէջ խոռովքի եւ երկիւղի մըթնորոտ մը կուտակուեր էր: Ուսանող եւ դասախօս, ամէնքը պիտէին ու երբ Քննիչ Յանձնախումբը արշաւէր որեւէ համայնքէ ներս, կամ մտնէր համալսարան մը, հոն խորշակի նման կը փոթորկէր, եւ անոր աօրեայ կենցաղին վճիտ հոսանքը կը վերածէր աղմոտ յարձանուտի մը: Լրագրողներ եւ թերթեր, որոնք լուրէ եւ ճշմարտութեանէ աւելի՝ աժան համբաւի ու դիւրին շահի խայծերուն կը վազէին՝ ամէն աննշան միջադէպ կամ սուտ վերադրում չափազանց կը խոչորցնէին, եւ մանաւանդ՝ մութ շարժառիթի մը տիղմով կը պղտորէին

զանոնք : Եւ հիմնարկութեան վարկը, որ անոր ամէնէն թանկագին աւանդը եւ հրապոյրն էր, յանկարծ կ'աղճատուէր կասկածին մուրով ու սարսափին մանրէով : Իսկ ատիկա դորձ ստուեր մը պիտի ձգէր իրենց վկայուած տխուրոսին եւ գալիք սասարէզին վրայ :

Վասնզը բոլորին համար այնքան բիրտ ու թանճրացած կ'երեւէր, որ կարծես կրնային տեսնել ու շօշափել անոր ճանկերը : Շատեր կ'ամչնային զայն յիշել իրենց զրոյցին մէջ, որովհետեւ կը վախնային անոր չարիքին դէմ խօսիլ : Ոմանք զայն կը նկատէին բնական պատահար մը, անձրեւին կամ կարկուտին նման, որ կարելի էր արդիւիւ, բայց որուն պէտք էր օգնել, որ շուտով անցնէր, իր չարն ու բարին ձգելով : Եւ կային ուրիշներ, որոնք կը խորհէին թէ դէպքը կը նմանէր հրդեհի մը, կամ համաճարակի մը : Եթէ մարդիկ հեղօրէն յանձնուէին անոնց բոցերուն ու շարաւին՝ անոնք մշտապէս պիտի ճարակէին, մինչեւ որ խանձէին ամէն կենդանի շունչ, եւ մարէին ամէն լոյս, եւ գիշատէին ամէն բարխող սիրտ . . . : Բայց չէ՞ որ կային հրշէջները եւ կային բժիշկները, եւ . . .

Դադարի պահերուն եւ ճաշի միջոցին՝ աշակերտներ փոքր կամ մեծ խումբերով կը հաւաքուէին որեւէ սենեակի ու միջանցքի, կամ յարկի ու անկիւնի մէջ, եւ կը շարունակէին նոյն անաւարտ վէճերը, երբեմն մեղմ ու զուսպ, եւ յաճախ բորբոքած, աղմկալի : Յետոյ, քանի մը վայրկեան, ձեռքերու բռն շարժումներ կը գալարուէին, աչքերու մէջ կը ցոլային բարկութեան կայծեր, եւ ձայներու խառնուրդը կը վերածուէր ժխորի, ուր կը խեղդուէին բառերու հանդարտ կամ ցասկոտ, եւ թաւ կամ զիւ հնչիւնները : Եւ երբ կը ծաւալէր զանգին հեւքոտ կանչը՝ անոնք կը ցրուէին քայլերու եւ միտքերու հակոտնեայ ուղիներով, ամէնքն ալ համակուած անզօր վիճակի մը դառնութեամբ, եւ մտատանջ՝ անստոյգ գալիքին հանդէպ :

Իրիկուան արձակումէն ետք, պարտէզի ընդարձակ մարդին վրայ, ուսանողներու դուռներ, ստուար հօտի մը նման փոքր երամներու բաժնուած, դեռ կը փորձէին իրենց շուտումը կամ գայրոյթը թօթափել : Լայն դարպասին մօտ, շոճիի մը հովանիին տակ խոռուեր էին քսանի չափ տղաք եւ աղջիկներ, դասադրքեր ու տետրակներ գրկած :

— Եթէ ինծի հարցնէք, դո՛չեց յուզումէն պրկուող բերան մը, երբ Յանձնախումբին գայլերը այս դուռնէն ներս խու-

յ են՝ զանոնք քարկոծելով կը քշենք փողոց, եւ վե՛րջ:

— Ատիկա շատ յիմար բան կ'ըլլայ, եկաւ մեզանոյ ձայնի մը պատասխանը: Ի՛նչ է, կ'ուզես անոնց ապացոյց տալ, որ արար աշխարհին պոռան, թէ ճի՞շտ են իրենց սուտերը, եւ հոս մեզմէ վանտալնե՞ր կը պատրաստեն:

— Ուրեմն ի՛նչ, կանչեց երրորդ մը, թողունք որ փրոֆէսէօր Պրուքսի նման փայլուն դաստիարակ մը խորո՞յկը հանեն...: Ան իր ամբողջ կեանքը նուիրեր է, որ մեզի պէս ապուշներէն մա՛րդ շինէ... լա՛ւ, բայց ատիկա այնքա՞ն ծանր յանցանք է, որ զինք փճացնեն...:

— Դէ՛, վայրկեան մը կեցէ՛ք, յարեց բամբ ձայն մը: Տեսնենք հարկ կա՞յ այսպէս իրար անցնելու: Վերջապէս, մենք ի՞նչ գիտնանք: Անշուշտ Փրոֆ. Պրուքս եւ միւսները կասկածելի բաներ մը ըրեր են, թէ ոչ Մերակոյտի Յանձնախումբ մը ի զուր տեղ...:

— Աա՛, տէր Աստուած, ուրեմն այս նուիրական պատե՛րուն մէ՞ջ ալ ատանկ տիմար խօսքեր պիտի լսէինք, բացա՛կանչեց Քէլի: Բայց Տիք, սիրելիս այս քանի՛ տարի է որ կ'ապրիս, Գրիստոսի սիրոյն, լուսինին վրա՞յ...: Չե՞ս լսեր, չե՞ս կարդար, աղ մարդուկները ո՛ւր որ իրենց կիսճերը կը նետեն՝ ամէն բան տակն ու վրայ կ'ընեն: Նայէ՛, այս մեր երկիրը կը ճանչցուէր իբրեւ ազատներու եւ քաջերու տուն, իսկ հիմա գիտե՞ս ամէնէն առատ ի՛նչ ունի... լրտես եւ մատնիչ, ամէն տեղ, իրարու դէմ: Ատոնք աշխարհին առջեւ մեզ ամօթով ծածկեցին, դեռ բաւական չէ՞...:

— Յրէ՛նք, դուն չես պատճառարաներ, քարոզ կուտաս... Պրուքսի եւ միւսներու մասին, եւ...:

— Շատ լաւ, ընդմիջեց Քէլի, շա՛տ աղէկ, առնենք Փրոֆ. Պրուքսը: Բայց երկինքի սիրոյն, Տի՛ք, դուն զինք չե՞ս ճանչնար: Սա մարդը երեսուն տարի է հոս դաս կուտայ, եթէ չարագործ մըն էր, կամ կարմիր էր, կամ դաւաճան էր, ա՛յսքան երկար ժամանակ տնօրէն, ուսուցիչներ, խնամա՛կալներ չտեսա՞ն, չլսեցի՞ն, եւ սա մարդիկները հազար մղոն հեռուէ՞ն հոտուրտացին...: Գիտե՞ս ինչ, Տի՛ք, իմ հայրս եւ եղբայրս ալ անոր դասարանէն անցած են, եւ պիտի չհաւտա՞ս, բայց մինչեւ հիմա, ամէն անգամ որ անոր մասին կը խօսին՝ քիչ կը մնայ որ երեսնին խաչ հանեն...:

— Եկէք աւելի պաղարիւն ըլլանք, Յրէնք, ըսաւ անոր կարդի զանգրահէր տղան: Չէ՞ որ Փրոֆ. Պրուքս ինք յաճախ նոյն հրահանգը կուտայ մեզի. — Տղա՛ք, հարցերը քննեցէք սառն դատողութեամբ: Լա՛ւ, իմ կարծիքով, մեզ մտա՛-

հոգող խնդիրը այն պիտի չըլլայ, թէ մեղադրուող ուսուցիչ մը իրապէս յանցաւ՞ որ է, կամ անմե՞ղ է: Ատիկա ոստիկանի եւ դատարանի գործ է...:

— Բայց կը սխալիս, Թիմ, միջամտեց դէմի խարտեաչ աղջիկը: Ասոնք իրբեւ զող կամ շարագործ չեն ամբաստանուիր, որ օրէնքը դատէ եւ անպարտ արձակէ: Ասոնք առանց փաստի եւ պաշտպանի՝ ուղղակի կը սպաննուին հանրային կարծիքին առջեւ:

— Լա՛ւ, ենթադրենք թէ այդպէս է, Ռօզ, շարունակեց Թիմ: Բայց իմ ըսածս այն է, որ մեր պարտքը, ամէն ուրիշ նկատումէ վեր, համալսարանին կ'երթայ, այսինքն անոր վարկը բարձր պահել, անոր անունը անաղարտ պահել, այնպէս չէ՞: Վերջապէ՛ս, մենք բոլորս, աշակերտ: եւ ուսուցիչ, առժամեայ հիւրեր ենք հոս, իսկ հաստատութիւնը կը մնայ մեզմէ ետք ալ, դալիք սերունդներուն համար: Հիմա, եթէ անոր դիրքը փրկելու գին պէտք է վճարել քանի մը փրօֆէսօրներ, որքան ալ մեզի սիրելի եւ արժէքաւոր ըլլան, պէտք է համակերպինք, չէ՞, ուրիշ ի՞նչ կրնանք ընել:

— Օ՛ր, ի՛նչ կրնանք ընել... բայց մարդ Աստուծոյ, կրնանք դիմադրել, չէ՞, եւ թերեւս արգիլել, ընդմիջեց յուզուած ձայն մը... անշուշտ եթէ կրնանք ղիրար հասկնա՛լ: Չեմ գիտեր, ատիկա պէ՞տք է շատ դժուար ըլլայ: Ինձի պարզ կ'երեւայ սա արդիւնքը: Ենթադրենք որ բոլորս ձեռքերնիս ծալլենք եւ առանց բողոքի, առանց արտունջի նըստինք: Ի՞նչ պիտի պատահի: Փրօֆ. Պրուքս եւ միւսները պիտի խայտառակուին եւ հարկաւ դպրոցէն պիտի արտաքսուին: Լա՛ւ: Վայրկեան մը մեր խիղճերուն ըսենք, է՛րինչ, խերն անիծենք, քանի մը անմեղ վարժապետի կեանք պիտի փճանայ եղեր, մեզի ի՞նչ...:

Յօնքերուն սեւ կամարին տակէն, Պէն Լէվինի նայուածքը վաղեց շուրջի դէմքերուն վրայ, մինչ դառն քմծիծաղ մը իր բերանին աջ անկիւնը կը քաշէր վեր: Պահ մը սպասեց, որ անոնցմէ մէկը խայթէր իր հեգնանքը, կամ բաժնէր գայն: Բայց թերեւս զիպուածով՝ բոլորը լուռ էին եւ ան շարունակեց, եւ ձայնին մէջ թէ՛ բարկութիւն կար, թէ թախանձանք:

— Լա՛ւ, անոնք կոխկրտուին եւ քշուին... մենք ալ չըրթունքնիս կղպենք եւ ճանճ որսանք: Բայց այն ատեն ժողովուրդը չպիտի՞ ըսէ. — Ուրեմն, ճի՛շտ է, սա մարդիկը իրապէս յանցաւոր են, եւ համալսարանը, մեր ծոցին մէջ, խռովարար արտագրող դաղտնի որջ է եղեր...: Ա՛յն ատեն է, որ

հաստատութեան վարկը ցելին մէջ պիտի թաթխուի : Յետոյ , այդ վարկը ի՞նչ է որ , սա շէնքե՞րը , պարտե՞ղը , մարդա-
դա՞շոր . . . անշո՛ւշտ ոչ , ատիկա բոլորս ալ դիտենք . . . հապա
Փրո՛ֆ . Պրուքսի նման ուսուցիչներ , որովհետեւ անոնք դար-
դացում եւ դիտութիւն ունին , բայց նաեւ աւելի բան մը , ա-
նոնք սորվեցնելու յամառ նուիրում եւ տեսիլք ալ ունին ,
այնպէս չէ՞ . . . : Լա՛ւ , եթէ անոնք վտարուին , տեղը ի՞նչ վարկ
կը մնայ որ . . . եւ ուրիշ շնորհքով ուսուցիչ մը ա՛լ հոս ոտք
կը կոխե՞՞ , ըսէք , ինզրեմ՞ . . . :

Վէճը սկսաւ թուլնալ եւ ուսանողներու երամը յամբօրէն
քակուեցաւ դէպի մայթը : Հոն բաժնուեցան չարս-հինդ հողե-
նոց խմբակներու , որոնք կը ցրուէին տարբեր փողոցներ :
Անոնց մէջ , պահ մը առաջուան հատու բառերը տակաւ մեղ-
մացեր էին հանդարտ զրոյցի մը եւ կը ցատկէին չէզոք նիւ-
թերու : Երբ մինակ մնաց Կրէնք քալեց իր ինքնաշարժին ,
զայն վարեց մինչեւ համալսարանի մեծ դարպասին դիմաց ,
եւ հոն սպասեց , կառքին մէջ առանձին :

Նոյն միջոցին ներսը , ուսուցչանոցի մը երկար սեղանին
շուրջ , երկտասարդ դասախօսներ եւ ալեւոր դաստիարակ-
ներ , իրենց վրդովումը , կամ դայրոյթը , կամ վախը կ'արտա-
յայտէին , աւելի զուսպ յուզումով , յղուած խօսքերով : Ա-
նոնց վէճն ալ կ'ընթանար անհաշտ կարծիքներու եւ մոռյլ
հողերու նոյն շաւղներէն : Եւ երբ ելան ոտքի մեկնելու՝ բո-
լորն ալ համաձայն էին , որ սեւ ուրական մը կը պայթէր
հաստատութեան վրայ : Անոնք արդէն կը զգային խանձող
շունչը մօտեցած խորչակին որ պիտի փոթորկէր իրենց օրե-
րուն խաղաղութիւնը : Անոր դէմ կ'ուզէին պաշտպանուիլ , եւ
կը փնտռէին ապահով ապաստան , բայց անոնցմէ ամէն մէկը
կառչած կը մնար իր սեփական համոզումի պատնէջին : Ան-
կասկա՛ծ , ամէն ուսուցիչ պէտք էր ունենար ազատօրէն դա-
սաւանդելու , եւ նոյնիսկ արդար վերաբերում յուսալու իրա-
ւունքը , կ'ըսէին անոնք : Միայն թէ ատիկա բացարձակ օրէնք
կամ գերբնական պատգամ չէր բոլորին համար : Եւ անոր
արժէքը կը կշռուէր տարբեր նժարներով : Անոնցմէ ոմանք ,
կշիռքի միւս թաթին մէջ կը տեսնէին իրենց անձերուն համար
վտանգի երկիւղը , որ միշտ աւելի ծանր կուգար , քան ուրիշ
ամէն նկատում : Եւ կային անոնք , որոնք հոն կը ձգէին դա-
ղափարի կամ սկզբունքի շերտ մը , որ կը լուծէր որեւէ երկ-
շոտ ժխտում :

— Ես ուրախ եմ, որ դոնէ նպատակի եւ յոյսերու նոյն օղակները մեզ կը կապեն իրարու, եղբակացուց Փրոֆ. Նիքըլը: Երեւակայեցէ՛ք. մեր վախերը անգամ միեւնոյն են, յարեց ան դառն ժպիտով մը: Միայն թէ՛ ես կ'ըսեմ. — եկէք ձկուռն ըլլանք եւ քիչ մը ծոխնք, մինչեւ որ սա խելագարութեան ալիքը մեր վրայէն անցնի: Վերջապէ՛ս անոր կատաղութիւնը պիտի իջնէ, չէ՞, եւ պիտի հալի պղպջակներու մէջ: Այն ատեն դարձեալ միասին կուգանք եւ կը սկսինք դարմանել ինչ վնաս ու վէրք որ այս տագնապը պիտի ձգէ իր ետին: Իմ կարծիքովս, ասիկա նուազագոյն կորուստի ճամբան է . . . :

— Թերե՛ւս . . . եղբայր պաշտօնակից, թերեւս, պատասխանեց Փրոֆ. Մէթիուզ, գլուխը տխրօրէն շարժելով: Միայն թէ, այդ կոհակին ցասումը մինչեւ որ կշտանայ եւ հատնի, ո՛վ դիտէ, քանի՛ կրակ ու ջիզ պիտի փրցնէ այս հաստատութեան մարմինէն եւ հոգիէն, ատիկա դժուար է նախատեսել: Եւ կարելի պիտի ըլլա՞յ անոր ամէն քանդածը նորէն շինել, չա՛տ կասկածելի է: Ատոր համար է որ ես կը կրկնեմ. — լաւագոյն չէ՞, հիմա մեր ջանքերը միացնենք չարիքին դէմ եւ փորձենք անոր աւերը մեղմացնել, քան յետո՛յ՝ փլատակէն ողջ մնացած աղիւս ու մարմին փրկել աշխատինք:

Պահ մը լուռ, յամբօրէն շարժեցան դէպի դուռը: Մէկէն կանգ առաւ Փրոֆ. Արթըր Էտմոզ, աջ ձեռքով շոյեց սրածայր շէկ մօրուքը եւ ըսաւ, անըջային երանդ մը տալով ձայնին.

— Գիտէ՛ք, յաճախ կը յիշեմ մեր մանկութեան բարի հէքեաթները: Այն ատեն, երբ դեռ շատ միամիտ էինք, անոնց մէջ միայն հմայիչ արկածներ եւ կախարդական հրաշքներ կը տեսնէինք: Բայց իրապէս, ի՛նչ խորունկ իմաստ ունէին անոնք: Օրինակ, անոնց մէջ կային վիշապներ, ազահ եւ ասարկու, որ կը բռնէին որեւէ աւանի ջուրին ալը կամ կեանքին ճամբան եւ խեղճ դիւղացիք, ապրիլ կարենալու համար, կրնային անոնցմէ օգտուիլ, երբ կը յօժարէին ծաղկատի աղջիկ մը կամ թարմ պատանի մը նետել անոր երախի բոցերուն: Եւ դարերո՛վ, ամէն սերունդ իր անմեղ զոհերը կը մատուցանէր այդ դեւերուն, մինչեւ որ առասպելին հերոսը սպաննէր զայն: Հիմա՛, այս Քննիչ Յանձնախումբը . . .

— Այո՛, սիրելի փրոֆէսէօր դրականութեան, խնդալով ընդմիջեց բնագիտութեան դասախօս Հըրպըրթ Թէյլըր, կզա-

կը քերելով... սքանչելի՛ է, բայց ախոս, այլևս վիշապա-
քաղներու շառաւիղ չէ մնացեր... անոնք անհետացան, որով-
հետեւ... կ'երեւի դեռ չէին լսած հանգուցեալ Տարվինի ա-
նունը, եւ ի՞նչպէս գիտնային, որ վերապրիլ կարենալու հա-
մար՝ յարմարիլ պէտք էր, յարմարի՛լ...: Իսկ մենք, աթո-
մային ուժի այս դարուն մէջ, հէքեաթո՞վ պիտի լուծենք
մեր առօրեայ տաղնապները: Կամ, աւելի՛ պարզ, մենք մեր
եղբոր պահապա՞նն ենք. անշուշտ ո՛չ: Հիմակունն աշխարհը
տարբե՛ր է... հիմա՝ ամէն մարդ ի՛ր վիշապը պէտք է
սպաննէ, եւ սատանան ողորմի ետին մնացողին...:

Միայն, թող ներէ ինծի հիւլէական դարու իմ թանկա-
զին լծակիցս... որ ձեր ա՛յս սատանան զարմանալի արարած
է, ան ո՛չ Տարվինի օրէնք կը յարգէ, ոչ ալ բարոյական կա-
նոն կը ճանչնայ: Ան բնաւ չի կշտանար միայն իրեն ընծայ-
ուած գոհը ծամելով: Ճիշտ հակառակը, ատով իր քիմքը ա-
ւելի կը գրգռուի, եւ ճանկերը կը նետէ յաջորդ պատասօին,
յետոյ միւս գլուխին, եւ աւելի հեռուն կեցած մարմինին, մին-
չեւ հասնի մեզի, եւ բոլորիս, եւ ձեզի՛ ալ, նոյնիսկ ձեր
փղոսկրէ պատեանին մէջ...: Խնդիրը սա՛ է, շարունակեց
Մէթիուզ, յամենալով բառերուն վրայ, սպասե՞նք, որ ամէն
մէկս առանձին իյնանք անոր կրունկին տակ, երջանիկ յոյ-
սով մը, թէ ան թերե՛ւս կը մոռնայ մեզ, կամ կը գթա՛յ... :
Թէ ոչ մեր կամքերը միացնենք եւ վերածենք զօրաւոր լծակի
մը, որ եթէ նոյնիսկ չտապալէ՝... վիշապը, — գոնէ անոր
հարուածը շեղեցնէ խեղճ գոհերէն...:

Եւ քալեցին դուրս: Ոմանք գլուխնին կախ ու կղպուած
չրթներով: Ուրիշներ, որ դուցէ իրենց թագուն վախերը փա-
րատելու համար՝ նոր փաստեր կը բարդէին արդէն նժարին
նետուած նախորդ կարծիքներու վրայ: Բայց ամէնքն ալ մտա-
խոհ, շուարած, նոյնիսկ ահաբեկ: Վտանգը պիտի կլանէ՞ր
զիրենք: Կամ ի՞նչպէս կրնային զայն վրիպեցնել: Եւ մի-
ջանքներուն ու պարտէզին ամայութեան մէջ, ուշացած
մեկնողներու ստուերները միայն կ'աճապարէին:

Մէթիուզ իր ինքնաշարժին դուռը կը բանար, երբ անու-
նին տրուիլը լսեց ականջին տակ եւ դարձաւ ետ:

— Օ՛ր, դո՞ւն ես, Ֆրէ՛նք, ըսաւ զարմացած, ի՞նչ կ'ընես
հոս մինակը, այսքան ո՛ւշ:

— Ներեցէք, փրոֆէսէօր, ձեզի կը սպասէի... կ'երեւի դուք ալ ներսը նոյն հոգերով բռնուած էիք:

— Թերեւս... ըսէ՛ տեսնեմ, դժուարութի՞ւն մը ունիս:

— Ոչ... կամ գոնէ ո՛չ անձնական...: Սա միւս խնդիրն է, Յանձնախումբին դալը...: Մենք պիտի չկրնանք անտարբեր հանդիսատես մնալ, երբ խարոյկը վառել սկսին: Եւ մեզի համար կարեւոր է գիտնալ, արդեօք ի՞նչ պիտի ըլլայ ուսուցչական կազմին դիրքը: Պիտի ուզե՞ն օգնել մեր բողոքի ցոյցերուն, թէ պիտի հակառակին... եւ դուք...:

— Նայէ՛, Ֆրէ՛նք... գիտենք թէ աղէտի պէս բան մը կուզայ բոլորիս վրայ: Անոր հանդէպ ձեր մէջ ալ պիտի դատնուին անտարբերներ, մեր մէջ ալ: Բայց դեռ կանուխ է: Պէտք է նախ տեսնենք թէ անոնք իրապէս ի՛նչ կ'ուզեն ընել եւ ո՛րքան հեռուները պիտի երթան: Յետոյ կը նայինք: Հիմա դուն գնա տուն եւ դասերդ ըրէ, լա՞ւ...:

— Շա՛տ լաւ, չնորհակալ եմ, մնաք բարով փրոֆէսէօր:

— Երթաս բարով, Ֆրէնք:

Իր կառքին մէջ, Քէլի սկսաւ սուլել իրլանտական մեղեդի մը: Մինչ անձկութեամբ կը մտածէր, — ո՞րքան ուսանողներ պիտի կրնային գրաւել իրենց տողանցքին մէջ: Եւ մանաւանդ՝ իր հայրը ի՞նչ կը զգար այս դէպքին հանդէպ:




Կ Ա Ր Օ Տ

Կար ժամանակ՝
Երբ սահմաններն իմ աշխարհին,
Քաղաքի մը՝
Պզտիկ ու հին,
Հին պարիսպնե՛րն էին միայն.
Նեղ փողոցներն անոր մէջ մէկ լայն պողոտայ.
Շէնքերը ցած, անշուք, խոնարհ՝
Ապարանքներ էին փարթամ:
Աշխարհը ողջ այն օրերուն՝
Հին քաղաք մ'էր
Խորհրդաւոր, պարսպապատ:

Տարիներ վերջ՝
Երբ ալ դարձած քաղաքացին եմ աշխարհի,
Իմ շուրջ պատող երբ պարիսպներն հին օրերու՝
Յիշատակ են դարձած միայն.
Քաղաքներու անծայրածիր ու լուսազարդ՝
Երբ անձանօթ գերին եմ արդ,
Աշխարհն ամբողջ ինձ կը թուի այնքան պզտիկ
Ու անխորհուրդ,
Որ սիրտս կ'այրի, կ'այրի կրկին
Նոյն կարօտով՝
Պզտիկ ու հին
Պարսպապատ իմ քաղաքին:





ԶԱՐԵՆՆ ԿՈՒԿՍԱՖԵԱՆ

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՁԳՏՈՒՄՆԵՐԸ

ԺԹ. դարուն երկրորդ կէսին, նկարչութեան լեզուն մէջ կը մտնեն «Հին արուեստ», «նոր արուեստ» բառերը, իբրև հինին եւ նորին տարբերութիւնները ընդգծող բացատրութիւններ:

Տեսնելը, հիներուն քով դատողութիւն է, նորերուն քով զգայնութիւն է: Հիները, բնութենէն կը ներշնչուին ու հասարակաց կանոններով կ'արտայայտուին: Նորերը չունին ներշնչումի կայուն յենարան: Քիմիան է անոնց ներշնչումը, արուեստի նոր երեւոյթներու եւ արտայայտութեան նոր միջոցներու մէջ:

Դասական կանոններէն ու բնութեան իրապաշտութենէն հեռանալէ յետոյ, այլեւս արգելք չեն ճանչնար, կը դառնան հետզհետէ աւելի կրքոտ եւ աւելի գիտական, մարդուն զգայնական կարողութիւններուն սահմանախոյզ, իրական գեղարձաւ մը, որ կը սկսի բնութեան երանգային երեւոյթները արտայայտելով (տպաւորապաշտութիւն), կ'անցնի հոգեկան զգայնութիւններու վերակազմութեան (արտայայտչապաշտութիւն), անկէ՝ առարկաներուն երկրաչափական կառուցումին (քիւպիսմ), յետոյ՝ ենթագիտակցական աշխարհի համադրակերպընկալ մեկնութեան (գերիրապաշտութիւն) ու անկէ ալ, երկրաչափական գիծերու եւ երանգային մակերեսներու կշռոյթին (վերացական արուեստ):

Այս հինգ գլխաւոր եւ իրար ժխտող ձգտումներէն անկախաբար, նկարչութիւնը փորձեր ալ կը կատարէ, բարձրանալու համար ոգեկան արտայայտութեան, փորձեր՝ որ կը կատարեն արուեստագէտ խմբակներ եւ ազատ արուեստագէտներ:

Արուեստը, այս մտաւորական նկարիչներուն համար գաղափարի յայտնութիւն է: Կը ջանան վրձինով արտայայտել, ինչ որ զրականութիւնը կ'արտայայտէ գրիչով:

Սակայն, մտածումի գեղեցկութիւններ ստեղծող ներ-
չնչումը, սպառած էր, այն ոգին՝ որ տեսանելի կը դարձնէ
մարդուն յաւիտենական մասը, մտած էր արուեստի պատ-
մութեան դանձարանին մէջ:

Այս բոլորը ցոյց կուտան, թէ որքան բարդ է արուեստին
գիցունհին, որ շարունակ փոխելով չպարն ու զարդարանքը,
կ'ուզէ մնալ միշտ նոր ու միշտ երիտասարդ, ու երիտասար-
դութեան մէջ միշտ գրաւիչ:

ՏՊԱԽՈՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Քանի մը նկարիչներ, երբ զմայլանքով կը գիտեն սա-
ղարթներուն մէջէն ջուրերուն վրայ ցանուած արեւուն խտի-
ղը, տերեւներուն զմրուխտին ու երկինքի կապոյտին վէտ-
վիտումը ջուրերուն վրայ, կը նկատեն, թէ հեղուկ հայելին
մէջ ցոլացած ձեւակերպերը կը բեկանուին ու կը վերածուին
գունաւոր բիծերու: Յանկարծ կը ծնի իրենց մէջ, երանգա-
յին այդ համերգը գունաւոր բիծերով նկարելու զազաւիարը:
Իայց, ինչպէս նկարէին բնութեան մնացած մասերը, պահե-
լու համար տեսողութեան կապը եւ նկարին միութիւնը: Կ'ո-
րոշեն բնութեան հողային մասն ալ նկարել ջուրերուն նման
երանգային բիծերով:

Այդ օրը, կերպարուեստի մէջ, նոր տեսողութեան մը
յեղափոխական թուականը կը բացուի:

Նկարիչները, ձերբազատուած, դասական դպրոցներու
խստապահանջ կանոններէն, կը վտարեն նուիրագործուած
սովորութիւնները, կը մերժեն հիներուն ճշմարտութիւնները,
արուեստին դարաւոր հաւատքը, դասականութեան իմացա-
կան արտայայտութիւնը, որովհետեւ, գոյնի լեզուին մէջ, նոր
գեղեցիկ մը կը պարտադրէր ինքզինքը գեղեցիկի ժառանգա-
կան զգայնութեան, ու կը բանար, տեսնելու հաճոյքին մէջ
նոր սովորութիւն մը:

Սկիզբները Ռեմուար յափշտակուած էր թուեր այս նոր
տեսութիւնով: Կը պահէր այն համոզումը, թէ բնութիւնը
գիտելով չէ որ մարդը նկարիչ կ'ըլլայ, այլ՝ թանգարաննե-
րուն գլուխ գործոցները ուսումնասիրելով: Այս մտածումը
կ'ազդէ կարգ մը օժտուած նկարիչներու վրայ ու պատճառ
կ'ըլլայ, որ արուեստասէրները չկարենան աւելի կանուխ ող-
ջունել կերպարուեստին վերջնական ազատագրումը հին ըմ-
բռնումներէն, եւ սպասեն 1870ի պատերազմի վերջաւորու-
թեան:

Արդարեւ, գրական, գիտական ու գեղարուեստական բո-
լոր շարժումները յաջորդած են պատերազմներու : Մարդ-
կային մտքին եւ զգայնութեան յեղաշրջումները կատարուած
են թնդանօթներու լուսթեանէն ետք :

Պատերազմը հազիւ վերջացած, տպաւորապաշտ սկզբ-
բունքները կը տարածուին : Աշխատանոցներու մէջ բացօթեայ
գործեր նկարող արուեստագէտները կը նետուին բնութեան
ծոցը : Այլեւս առարկաներուն ճարտարապետական նկարագի-
րը չէ որ կը հետաքրքրէ զիրենք, այլ մթնոլորտին մէջ անոնց
ստացած լոյսին ու շուքին երանգային խաղերը :

ԱՐՏԱՅԱՅՏԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Արտայայտապաշտութիւնը գերման ոգիին ծնունդն է,
ինչպէս տպաւորապաշտութիւնը ծնունդն է Փրանսական
ոգիին :

Առաջինը ձեւակերպի յեղափոխութիւնն է, երկրորդը՝
գոյնի : Առաջինը կը հետաքրքրուի հոգեբանական վիճակ-
ներով, երկրորդը՝ գոյնի եւ լոյսի տեսագիտական հարցերով :
Առաջինը ենթակայական է, երկրորդը առարկայական : Առա-
ջինին վրայ երեւակայութիւնը կը տիրապետէ, երկրորդին
վրայ գոլտ տեսողութիւնը կը տիրապետէ :

Արտայայտապաշտութիւնը ուսմանթիզմի նոր ձեւ մըն է,
կ'արտայայտուի կիրքով ու քմածին ձեւագերծումներով :
Գերման քննադատութեան էֆսիքէսիստիզմուս սահմանումը
կը բացատրէ մարդկային ցաւատանջ զգացումներու գրսեւո-
րում աւելի՝ քան թէ կերպընկալի յայտնութիւն :

Արտայայտապաշտները կը փնտոեն նոր ձեւեր, արուես-
տի նոր արտայայտութիւններ կեանքի բացառիկ երեւոյթնե-
րուն մէջ : Կ'ուզեն երեւան հանել մարդուն տոամաթիք բնազ-
դը աչնպիսի նիւթերու մէջ, որոնց ընտրութիւնը կը դառնայ
խառնուածքի յայտնութիւն : Նիւթերը չեն մօտենար ոչ ըն-
կերային դաղափարներուն ոչ տեղական աւանդութիւննե-
րուն : Անոնք ողբերգական յղացումներ են, իւրաքանչիւր նը-
կարիչի խառնուածքին համապատասխան :

Այն նկարիչները, որոնք տոամաթիք խառնուածք ունին
ու կը նկարեն տառապանքի ու զրկանքի հոգեվիճակներ,
ինքզինքնին կը գտնեն արտայայտապաշտներու բանակին
մէջ, առանց համազգեստ կրելու :

Արտայայտապաշտներուն արհամարհանքը, գեղագիտա-

կան կանոններուն դէմ, արուեստի ըմբռնում է: Անոնք կը հետաքրքրուին արտայայտչական արժէքներով ու ձգելիք տպաւորութեան յուզականութիւնով, բայց երբեք տեսողական հաճոյքով:

Բոլոր ժողովուրդներու մէջ, արտայայտապաշտութիւնը անհանդուրժելի ծայրայեղութիւններու հասցնողներն եղան գերմանացիները: Մարդ կը զարմանայ, թէ ինչպէս, այս ցեղը, որ անյաբ փափաքն ունեցած է միշտ, երեւոյթէն անբեւոյթը տեսնելու, Փառուստեան ներշնչումին անհունութեան թափանցելու, աշխարհի դաղափարական երեւոյթներուն մէջ ինքզինք արտացոլացած տեսնելու բնազդը, այս ձգտումին մէջ կ'իջնէ գոհակութեան, «ճաշակի ջարդարար» կոչուելու աստիճան:

Արտայայտապաշտներէն շատեր, վաւերականները յատկապէս, ենթակայ եղած են տեւական ջղազրգոտումներու, շատ անգամ վերջացած ողբերգական մղումներով: Վան Կոկ, Միւնչ, Քիրշնէր, Էւայլն ապաստան փնտռած են անձնասպանութեան մէջ, ազատելու համար հիւանդազին մտածումներու հալածանքէն:

ՔԻԻՊԻՍՄԸ

1908ի Աշնան Մալոնին մէջ, Պրաք կը ցուցադրէ նոր ոգիով նկարուած նաթիւռ-մոնթ մը: Մաթիս, բացատրած ատեն նկարին երկրաչափական ծաւալներն ու բեկանուած շրջագիծերը, կը դործածէ ֆիւլպ բառը: Նոյն օրն իսկ Պրաքի արուեստը կը կոչուի ֆիւլպիսմ: Պրաք, կ'ընդունի տարօրինակ մկրտութիւնը իր արուեստին, բայց մամուլին մէջ կը բացատրէ, թէ մտքէն չէր անցած քիւպերով նկարչութիւն մը ստեղծելու գաղափարը, թէ ինք կ'ուզէր նկարչութեան մէջ մտցնել երկրաչափական կառուցումներու նոր կարգ մը, տալով ձեւակերպին ամէնէն էական գիծերը, գոյնին՝ ամէնէն պարզ բազադրութիւնը:

Քիւպիստի մէջ, զգալը, առարկային իրապաշտ երեւոյթին ուղղուած բառ մը չէ, կարողութիւն մըն է ան, որով առարկան կը ձեւափոխուի զինք կազմող գիծերուն մէջ, ու կը դառնայ տարբեր երեւոյթ ունեցող առարկայ մը, չուրջի ձեւագերծուած առարկաներուն միանալով:

Քիւպիստ նկար մը, երբեմն, առարկայի մը մէկ երեսը կամ անոր մէկ շրջագիծը ցոյց կուտայ, մնացած մասերը կը միանան ուրիշ առարկաներու շրջագիծերուն, կազմելու հա-

մար իրարու մէջ ազուցուած առարկաներու ամբողջութիւն մը: Ասիկա, առարկան խորանարդապաշտ տեսութիւնով զգալու ձեւն է, որ կը տարբերի մինչեւ հիմա յայտնուած ճշտումներուն զգալու ձեւերէն:

Առարկան, քիւլիսմին գլխաւոր նիւթն է: Բոլոր շըրջաններն ալ նկարած են զայն, բայց իբրեւ նկարի մը կարգաւորութեան մասնակցող նիւթ: Ինքնավար կը դառնայ ժիւղարու վերջերը, նաքիւր-մոք անունին տակ:

Քիւլիսմի մէջ, առարկաները կորսնցնելով իրենց բնական երեւոյթները, կը վերաաեղծուին կտաւին վրայ նոր զգայնութիւններու ծառայելու համար:

Անոնք շատ շուտ կը յարմարին միջավայրի պահանջներուն: Գիւղացիին կառքը, ճաշի պահուն, կը վերածուի սեւզանի, երբ սպասները դրուին անոր վրայ: Քարիւղի թիթեղը կը վերածուի վառարանի, երբ իրական վառարանը պակսի: Գաւաթ մը, ձեւ կը փոխէ, նկար իմը գոյութեան մասնակցելու համար: Զեւը փոխած գաւաթը կը դառնայ արուեստասէրներու հետաքրքրութեան առարկայ:

Ասոնք, արուեստին լեզուով ըսուած սուտեր են: Ամէն արուեստագէտ կը ստէ, միայն լուսանկարի գործիքը չի ստեր, ասոր համար արուեստագէտ չէ: Նկարչութիւնը կ'ըլլայ պատիկ սուտերով մեծ իրականութեան մը առջեւ, որ բնութիւնն է, բայց, պէտք է դռնել սուտին անկեղծութիւնը, որ գեղեցկութիւն ըլլայ, ու գեղեցկութիւնը, որ մեծութիւն ունենայ:

Քիւլիսմի մէջ առարկաները կը ձեւափոխուին ողիին ճամբով եւ վայրենիներու արուեստին ներշնչումով:

Տարբերութիւնը, որ կայ երոպական նմանող արուեստին եւ վայրենիներու արուեստին անիրական ձեւակերպերուն միջեւ, կը բացատրուի անոնց խորհրդապաշտ հակումներով:

Նախնական մարդը, բնութեան մէջ կը տեսնէ քառաւորին վիճակ ու կը սարսափի անկէ: Ինքզինք անընդունակ կը դռնէ բնութեան երեւոյթներուն իմաստը բացատրելու, որով, բընադէն մղուած, կը ստեղծէ վերացական լեզու մը, երբ քանդակել կամ նկարել ուզէ: Աս է պատճառը, կը կարծեմ, վայրենիներու արուեստին կրօնական նկարազրին, ուր գեղեցկօրէն կը միանայ իրականը անիրականին հետ:

Պէտք է ուրեմն զարմանալ, եթէ վայրենիներու արուեստ-

տը եւրոպական արուեստէն շատ առաջ տուաւ զգալնութեան արդիականութիւնը :

Հանճարը մշակոյթին հետ կապ չունի միշտ : Հանճարի տեսակներ ունին երախաները, դպրոցական տարիքին տակաւին չհասած :

Հանճարի տեսակներ ունին վայրենիները, քաղաքակրթութեան մէջ տակաւին չմտած :

Հանճարի տեսակներ ունին կարգ մը խենթեր, որոնց գործերուն ինքնեկ յուզականութիւնը շատ անգամ կ'ապշեցընէ արուեստագէտներն անգամ :

Որովհետեւ, հանճարի այս տեսակները կ'անդիտանան, ինչ որ սորվելիք է, բայց իրենց երակին մէջ ունին էականը այն բաներուն, որոնք չեն սորվուիր :

Գ Ե Ր Ի Ր Ա Պ Ա Շ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Առաջին աշխարհամարտին ստեղծած տակնուվրայութեան ծնունդն է գեղազիտական այս նոր յեղափոխութիւնը :

Աշխարհը, անոր հետ միտքերը՝ կորսնցուցած էին իրենց հաւասարակշռութիւնը : Մտածող մարդոց մէջ կուտակուած դառնութիւնը սկսած էր ընդլիզիլ քաղաքականութեան մը դէմ, որ աշխարհը մխրճած էր արիւնի եւ աւերի մէջ : Անհրաժեշտ էր նոր քաղաքակրթութիւն մը, որ յեղաշրջէր մտածելու եւ զգալու հին ըմբռնումները :

Գերիրապաշտները կ'ուզեն ստեղծել ենթազիտակցութեան իշխանութեան տակ նոր կարգ մը մտածումի եւ նոր երեւոյթ մը արուեստի, առաջնորդուելով այն համոզումէն, թէ իրապէստութեան վայելքը աչքին ստացական սովորութիւնն է, որ կրնայ փոխանորդուել ստացական ուրիշ սովորութիւնով մը, եւ բանալ դռները երազի աշխարհին անսովոր երեւոյթներուն :

Երկու աշխարհի մէջ կ'ապրինք, իրականը՝ օրուան ժխորին մէջ, երազինը՝ քունի խաղաղութեան մէջ :

Կեանքի այս երկու կէսերն ալ կ'անցնին երազի մէջ, եթէ երեւակայութիւնը ընդունինք իբրեւ արթնութեան երազ : «Ո՛վ գիտէ, եթէ միւս կէսը կեանքին, ուր արթնութեան մէջ կը մտածենք, ուրիշ քուն մը չէ, քիչ մը տարբեր առաջինէն, որուն մէջ կ'արթնանք, երբ կը կարծենք՝ քնանալա՛» : (Փասքալ) :

Ամէն մարդ կ'երազէ ու կ'երեւակայէ, «նոյնիսկ կենդանիները», կ'ըսեն մասնագէտները: Երեւակայել, կը նշանակէ պատկեր մը ստեղծել ոգիին մէջ: Ամէն երեւակայողի մէջ կայ պատկերներու հարստութիւն, բայց ամէն երեւակայող չունի կարողութիւնը զանոնք տեսնելու:

Արուեստագէտը, նաեւ գրագէտը, երախայութենէն եկող յիշատակներ ունին, երգներու եւ տպաւորութիւններու մը: նացորդներ, որոնք կը գործեն բնագրական մղումով, գիտակցութեան մը բացակայութեան ընթացքին: Այդ գործունէութիւնն է որ կը կոչուի Գեղարարապաշտութիւն: Չգայնական նոր ձեւի մը քնարականութիւնն է գերիրապաշտութիւնը: Կը դիմէ երազի աշխարհին, հեռանալու համար դատող իմացականութեան ինամակալութենէն, որպէսզի ազատօրէն նետուի անգիտակից գործունէութեան անսահման կարելիութիւններուն մէջ եւ անոնց միջոցով հասնի, նոր ու անտիպ երեւոյթներու համոզումին:

ՎԵՐԱՑԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

Դարուս սկիզբէն ի վեր, պայքար մը կը մղուի պատկերաւոր եւ վերացական արուեստներու միջեւ: Պայքարը աւելի կը մեծնայ երկրորդ պատերազմէն յետոյ:

Ի՞նչ կը նշանակէ վերացական արուեստ բառը, մտածում մը՝ առարկան իր բնական երեւոյթէն բաժնող:

Առաջին իմաստը, այս բառին, տարբեր էր, օրուան իմաստէն: Առաջին իմաստին մէջ ամէն գործ, քիչ թէ շատ վերացական է, երբ բնութիւնը բան մը կը ձգէ իրմէ, կտաւին վրայ դալէ առաջ: Այս իմաստով, վերացական արուեստի գործեր են եզրպատկան որմանկարները, կենդանիներու վազքը մէկ քանի զիծերու մէջ ներկայացնող քարայրներու նախնական դժանկարները:

Դժուար է, սակայն, վերացական արուեստին ծագումը ճշտել պատմականօրէն: Անոր գոյութեան պատճառներն ու ներշնչումի աղբիւրները կը համապատասխանեն կրօնական օրէնքներու, ընդդէմ պատկերներու պաշտամունքին, արարական երկիրներու մէջ:

Վերացական արուեստը կը բաժնուի երկու մասի, յարաբերական եւ քացարձակ:

Առաջինը կը ներշնչուի իրականէն ու նշմարելի կը դարձնէ գոյութեան մը ձեւը :

Երկրորդը կը ներշնչուի բնութեան բացակայութենէն, կը ստեղծէ անիրական ձեւեր : Կը սկսի հոն՝ ուր բնութիւնը կը վերջանայ :

Բնական երեւոյթներուն չափով մը կապուած առաջին ձեւը բնութիւնը կը տեսնէ Լէոնարտոյի խօսքերուն մէջ . «Երբ կոյր մը աչքերը բանայ, կը տեսնէ լեռներ, տուններ, ծառեր : Եթէ արուեստագէտ է, կը տեսնէ ձեւակերպեր, դիժեր ու դոյներ» :

Երկրորդ մասը, որ կը ստեղծէ բնութեան հետ կապ չունեցող քմածին ձեւակերպեր, անիմաստ կը դնէ բնութեան երեւոյթներուն դիմելը, զգայնութիւն մը թանձրացնելու համար : «Ի՛նչ բանի կը նմանին ճարտարապետութիւնն ու երաժշտութիւնը, նկարչութիւնն ալ կրնայ անոնց նման բան մը չներկայացնել եւ մնալ արուեստի արտայայտութեան մէկ նոր ձեւը» :

Փլինիոս տարօրինակ պատմուածք մը ունի, որմէ լայնօրէն օգտուած է Ափոլինէր, հաստատումով մը եւս հարըստացնելու համար քիւպիսմին վրայ դրած գիրքը :

«Օր մը, Ապէղէս, այցելութեան կ'երթայ իր մէկ արուեստակիցին : Կը հանդիպի անոր բացակայութեան : Եռօրոտանին վրայ կտաւ մը կը տեսնէ նկարուելու պատրաստ : Փոխանակ իր անունը ձգելու, նուրբ գիծ մը կը քաշէ կտաւին վրայ ու կը մեկնի : Երբ վարպետը կը վերադառնայ, կը ճանչնայ Ապէղէսին գիծը, անոր վրայ գիծ մըն ալ ինք կը քաշէ տարբեր դոյնով եւ աւելի նուրբ : Յաջորդ օրը, Ապէղէս դարձեալ կը հանդիպի վարպետին բացակայութեան : Այս անգամ ալ ուրիշ գիծ մը կը քաշէ նոյն կտաւին վրայ, որուն նրբութիւնը յուսահատութեան կը մատնէ վարպետը :

Կտաւը, որ երկու վարպետներուն մրցակցութիւնով քաշուած երեք գիծեր կը ներկայացնէ, կը ցուցադրուի, հիացում պատճառելով հասկցողներուն, կարծէք աստուածներ նկարուած ըլլային» :

Ասիկա պատմութիւն մըն է պարզապէս : Զարմանալի է, որ Ափոլինէրի նման մշակուած մարդ մը կ'անդիտանար թէ Յունաստան երբեք չէ հանդուրժած, որ արուեստագէտները նոր փորձեր կատարեն դասական կանոններէն դուրս :

Մեր դարուն յատկանշական երեւոյթներէն մէկն է րէ-
քոքիք տիւ շոքը, որ կը ստացուի պատկերներու միջոցով:

Պատկերներուն տպաւորող ուժղնութիւնը կը բերեն շար-
ժանկարը, հեռատեսիլը, պատկերազարդ թերթերը: Անոնց
ստեղծած հետաքրքրութեան հետեւանքն է որ արդի նկար-
չութիւնը, հակառակ խրտչեցնող ծայրայեղութիւններուն,
աւելի շուտ պարտադրեց ինքզինքը, քան նախորդ դարերու
բնապաշտ նկարչութիւնը:

Զ. Մ.

(«Նկարչութեան դասական դպրոցները եւ արդի
ձգտումները» անտիպ հատորէն):



ՄՏԱԿՈՑՈՒՄ ԾՈՎՈՒՆ ԴԻՄԱՑ

Կ

Եանքին պէս յորդ
Մեծադըղորդ,
Ալիքներով որոտածայն,
Բաղխումներով վրիբասասան,
Ահա դարձեալ մութ ու մռայլ
Գի՛րկն է բացեր կայծակներու խօլ ժըխորին
Ծովը խորին ու մըթամած,
Իբ ողբերով, իբ թուխպերով
Միշտ մակընթաց՝
Ծո՛ւլը, ծո՛ւլը փոթորկածին ...

Ամպրոպ ու շանթ
Կուգան խառնել իրենց ոգին՝
Անդունդներուդ ահեղ երգին,
Ծո՛ւլ գալարուն ու շառաշուն,
Վե՛ր կը ժայթքին
Հրաբխային լեռներու պէս
Ջուրերդ՝ հըթի՛ր վիշապային՝
Համբուրելու համար կարծես
Ատղերուն սի՛րտը լուսածին ...
Այլ վիթխարի, ծա՛նր անկումով
Վար կը թափին, բղբալուած,
Չիրագործուած խորհուրդի մը
Վեհութեան պէս ...

Երբեմն խաղաղ,
Միապաղաղ
Ծիածանին ծրփանքներով,
Վարդ ու ոսկի
Վերջալոյսին երանգներով
Կը պարուրուիս, ծո՛վ շողշողուն :
Մերթ մորմոքած,
Մերթ բորբոքած՝
Դուն պատկերն ես իմ խոհերուն ..
Ծո՛վ դալարուն,
Ծո՛վ հոգեթով,
Նո՛յն կշռոյթով
Մեր երազները կը յուզուին,
Մեր զայրոյթները կը դիզուին
Դէմն ահաւո՛ր Ողբերգութեան,
Մղձաւանջի մը վերյուշին ...
Զորս ուրուակա՛ն դիւատեսիլ
Խոր ծովերէն մեր էութեան՝
Կ'անցնի շանթին պէս սարսուղին ...
Նոյն այրուքին կսկիծն ունինք
Մեր շրթունքին ... :
Ծո՛վ անքրննին,
Նոյն յոյգերով միշտ մակընթաց,
Նոյն խաւարով մերթ անթափանց,
Մենք կը պեղենք
Անհուն յատակը մեր սուգին ... :
Հրաբխային նոյն ժայթքումով,
Նո՛յն հրթիռով կ'ուզենք սլանալ
Դէպի տեսիլն անծանօթին,
Նոյն հեռուները կը թովին
Հայրենաբաղձ անհուն կարօ՛տը մեր սրտին :
Ծո՛վ ծաւալուն
Եւ առլըցուն
Անջրպետին սարսուռներով,
Գաղտնիքներո՛վ տիեզերքին ... :
Կեանքը՝ գիրկըդ դէպի լոյսին
Արշաւ առնող յաղթանակն է,
Տա՛րր կենսածին ... :
Մարգարիտներ ուռճացընող
Գոգ գաղտնապահ ...

Հուրին շունչով երկինք սլացող
 Ա՛մպ ոսկեգահ ...
 Ծո՛ւ վ իմ ծաւի,
 Մերթ աստղալի՛
 Լուսակայան ...
 Ծո՛ւ վ, կը կրեմ քեզ կուրծքիս տակ,
 Համբերութեան իբր օրինակ,
 Արդարութեան, սիրոյ, զուժի
 Եւ հաւասար բաշխումներու,
 Ու մոռցում հատուցումին
 Պակուցումո՛ւ վս տառապաղին ...
 Որոտներուդ ահեղ ձայնին
 Կրկնութիւնն է,
 Արձազանդն է իմ մեղեդին ...
 Քու խորքիդ մէջ՝
 Կը համբուրեմ կամքի դափնին :
 Լեռնակուտակ՝
 Տո՛ւր համբերանքդ իմ հողիին :
 Դուն ժայռե՛րն իսկ
 Աւազներու վերածող ո՛ւժ
 Համբերատար,
 Յամա՛ռ, յամա՛ռ
 Իրագործո՛ւմ տարերային,
 Դա՛ս մարդկային ...
 Մերթ բարձունք ենք մտածումի,
 Մերթ արցունք ենք սպասումի,
 Սեւեռաբի՛բ ինքնորոնում ...
 Եւ ըսպասում աներկեան՝
 Փոթորկէն վերջ, յաղթակամար
 Խաղաղութեան անջնջելի
 Ծիածանին ... :
 Ծո՛ւ վ ցնծազին ... :

*

ՌԻԿԻԵՆՏԱՅԻ ՊԱՐԻԿԸ



ԱՌԱՋԻՆ օրն իսկ երբ հասաւ Մոնթէ Քառլօ, նստեցաւ երկար ատեն Զբօսաչէնքին դիմաց, պարտէզին փայտեայ նստարանին վրայ: Չկար ծառ մը հոն որ չըլլար զարդածառ, անհաւատալի կերպարանքներով: Ձեռք մը մեծութեամբ լիճերու երեսին լուտասներ, նունուֆարներ կը շարժին, հագլիւ նշմարելի ծփանքով մը: Իրիկունը սկսաւ ծորիլ տէրեանական քնքշութեամբ: Երկչոտ, խրտչուն, ծածանուտ, զրզուալիւր կը հպէր ծաղիկներուն, քաքթիւսին, թամառիներու ժանեակներուն, արմաւենիներու, էօքալիփթիւսներու դապթներուն՝ իր առաջին շոյանքներովը: Մայրիները, շոճիները բուններուն պատուուած շրթներէն անընդհատ խէժ կը ծորեն: Արեւին աններող հուրը վերածեր է գայն մեղրի գունտերու:

Իրիկնամուտի պատարագը կը շարունակուի:

Օղանոյճներ մեղմիւ կը շարժեն բուրվառներ: Կը տարածուին տարաշխարհիկ բուրումներ, անդայտ մանուշակէ դուրլիներ:

Յանկարծ բուսական աշխարհը, մէն մի բոյս, թնամական մատներով կը դոցէ իր դուռը Մարդուն երեսին: Հիմա իրենց դռնիակ ցայգաթողովը կը սկսի, իրենց համար: Ո՛չ մէկ օտար կ'ընդունուի: Սանձուած խոտերը, բլրակներու աննուխները, հաղարջը վայթի, միմոզայի ծառերը, այծտերեւիները ցանկապատերուն, ու, աւելի վարը, դաշտատարած ժեռանիտմները կը հագնին եպիսկոպոսական ոսկեղիպակ: Բիւր քըռոցներ կը թրթռան եւ նուագարաններ անլուր՝ կը հեղեն բառեր օտարոտի: Սափորները կը կոտրտին խոռովքներու ցնցումէն ու կը պարպեն հեշտանքներ զեղխալից: Օղանոյճները կը յանձնուին շլարչային, անասման որովայններով: Օծանումն ալ սկսած է: Բուրումներու հրախաղ: Բաղակ-

ցութի՛ւն անստգիւտ, — պոլտիկի, մաղտանոսի, ծոթըրինի, վէրվէնի խառն հոտը բանջարանոցներէն կը լուծուի շահ-պրակներու, նարկիսներու բուրումին, առատութեանց եւ մեծ անհոգութեան երանութիւնը բերելով: Անոնցմէ մերթ մին, մերթ միւսը կը բռնկի սիւքերու թեւին: Առհաւական սարսուռներ առեր են հոգին նետեր պատանեկութենէն մանկութիւնը եւ անկէ ալ չես գիտեր ինչ ժամանակներու խորքը ուր անկարելի յուզումներ կը նուաղին, արտաշխարհի հեշտանքով, երազի տիեզերաբաղձ չարչրկումներով:

Անդին, քայլ մը անդին, Միջերկրականը հիմա վարդապոյն, այն իր վարդապոյն բեհեզն է փոքր ու կը սպասէ: Եւ, տե՛ս, տե՛ս, ալիքները ի՛նչ մեղմագին վարպետութեամբ զողնալու են ելեր, մտեր են Մախոխեանի երանգապնակին մէջ: Կը գողնան ու իրենց կապոյտ, անծայրածիր մարմնի փռուածքին վրայ կը քաշեն անոր վարդապոյն վարչամակը անծայրածիր, որ անորն է՛ միայն: Գաշեր է իր լեղակ մերկութեան վրայ, որ կը ծփծփայ, որ աչքով կ'ընէ: Երթայ կանգուն մը երկուք կտրէ, իր սիրածին դենջակ ընէ: Կ'օձածփի քողը հեռուն ու ալիքները հալած արծաթի զրասանգներ կը կապեն, զուգահեռական շարքերով:

Հա՛, իսկ այնտեղ, ծովախորշի զոցուած թեւին վերեւ, «Ոսկի Բանալին» է, տնակ ձեփ ձերմակ, թառեր ժայռի կատարին: Գլխուն՝ լազուարթ երկինքը, ոտքին՝ խաժագոյն հեղուկ տախտակամածը ծովուն:

Սիրտը սկսաւ պղտորել: Աշխարհիկ տենչերու մեղուապար, անթիւ ափսոսանքներու կիզիչ խայթոց: ... Սուտ բան է՛ ամէն ինչ: Ծաշակել տեղական ձուկերը այս ալիքներուն, չինել փերկուրա սիրածին համար, դզուել սիրածը անոր ցուիքին տակ ու, մողէզին հետ, մողէզին պէս անշարժ, երկըննալ արեւին: Հիմա որ ալ իրիկեան անտեսանելի մարմինը տարածեց մեծ լութիւնը, Վիվալտի, արարողակա՛ն, վերացա՛ծ, նշան ըրաւ ձգոտովը եւ Ատանիօն սկսաւ: Ու անձկութիւնը, յետ մղուած, յառաջացաւ այժմ ու ստացաւ, անկրկնելի սրութեամբ, թափանցողականութիւն: Պարպեց սիրտը ու լեցուեցաւ հոն արիւնին տեղ: Պիտի ըլլայ օր մը, ուրեմն, որ այս աչքերը ա՛լ պիտի չտեսնեն ծովու այս մարմինն ու ոսկեծուփ ճարմանդներով իր վարդապոյն վարչամակը: Պիտի ըլլա՛յ, պիտի գա՛յ այդ օրը: Ու հիմայ, ի՛նչ փոյթ փերկուրան ալ, ի՛նչ փոյթ նոյնիսկ իր սիրածն ու անոր նապանքները, մշտագօր արբեցումով: Պիտի գայ օր մը ,ուր ալ

այս աչքերը պիտի չտեսնեն յարդարանքը երկրագունտին, մէն մի առաւօտ նորոգ իր շրջազգեստը, իր հրախաղութիւնը յարափոփոխ ու անվերջ...

Եւ սակայն, կանգներ է հող, խելայե՛ղ, տժգոյն տղայ մը: Մեծարենցն է, պաղատազի՛ն կը կարգայ հրաւիրակ սրտակեղէք, բոլոր անցորդներուն անխտիր: Բարեւի մը փոխան, խոստումներ կ'ընէ, առանց վճարումի, ճրիատուր, մատուցանելու բարեկամութեան հացն ու ալը, բնութեան մշտատեւ խռովքը, զգացումը՝ բոլորի եղբայրացումին բոլորին հետ — քերթողի սրտէն մատուցուած ամբրոսիա Մարդուն — արծաթ ափսէին վրայ սպասարկուած: Ու կը ձայնէ. «Ընդունեցէ՛ք, ինչո՞ւ չէք ուզեր զիս ձեր շնորհասպարտը դարձնել: Թոյլատրեցէք միակ աղօթքը հոգիիս»:

Ու բարեւի մը փոխան
Հագար բարի՛ք ես տայի:
.
Բոլոր միրգերն աշունի,
Ու մեղր ու կաթ ու գինի...

Սաղատունէն, ուր մեծափարթամ կիներ կը սփռեն բուրումներ ցուրերու ամորձիղէն պատրաստուած, ուր քուսփիտներու սեւ սմբռնկներ հազիւ կը պարտկեն իրենց մարմնէն քրանոզ սխտորի հոտը, ուր օտար իշխանաւորներ աշխարհի գոռոզութիւնները կը կատղեցնեն, անտեսանելի դառագեղներու մէջ շրջելով, հանդիպելով ուրուականներու, ուր վայրագ կեղեքիչներ կ'ընկղմեն մէկ ակնթարթի մէջ հարստութիւններ, գրեթէ խաղատունէն է որ կը մեկնի կածանը, եզերուած խիտ մայրիներով, որոնց դազաթիին ինչ որ կոչունը է սարքուեր: Եւ երբ ճիւղերը սկսին խնդալ փորերնին բռնած, ճեղքեր կը բացուին, ուրկէ յանկարծ երկինքը ներս կը փլի, ուրկէ կապոյտը կը հեղեղէ: Երբեւէ չկրկնուած քաղցրութիւն մը եկեր կը մըմնջէ սրտերուն թէ մեծ մոռացում մըն է երանութիւնը ու կեանքն ալ՝ մահացում՝ աչքերը բաց:

Կածանը, իր պղտոր առուակի պարոյրներովը, կը տանի դէպի «Ոսկի Բանային» եւ, տակաւ, մարդու ըղձանքներուն կրակը կը նուաղի, մեծ խաղաղութիւն մը կ'իջնէ ու ըղձութիւնները կը բիւրեղանան, բարեւի փոխան:

Տեղ կայ ուր հրուանդան ու թերակղզի կը չքանան եւ, հորիզոնի անստոյգ հեռաւորութենէն, մեծութեան վէտովէ-

տուժներ կը մեկնին ու կուզան ապտակի մանրիկ արեակով մը երեսիդ փչրուելու :

Ինչքան ատեն պիտի մնայ այսպէս ձերբազատ, ազատ : Քանի՞ երկվայրկեան ձգողականութիւնը քաղաքներուն պիտի դադրի, ուր մօրատ ջուրերու վրայ սխտորին հոտը բռներ կեցեր է, ինչքան ալ պատերն ի վար հոսի արիւնը մեծարար-բառ պուկէնվիլիէներու, վարդենիներու :

Իր մոլորամոլ ակնարկները պիտի կարդա՞ն հրովարտակը թագաւորական, բոլոր ժամանակներու իմաստութեանց, որ անհամար մատներ սակայն բերին իր աչքերուն :

*

Եկուր տես որ, անդին, տասը քայլ հեռու նստած մարդը բռնուեր է հիմայ ըզձապատում տաղնապէ : Գլուխը պատուած է թէպէտ ճերմակ բայց անսովոր խոտութեամբ մազերու սաղաւարտով մը : Մարմնեղ : Ճարպայինը նոր սկսեր է ճարակել չափահասի իրանին վրայ : Տեսքը՝ բրիտանական : Կապոյտ աչքեր, թափանցող ակնարկ : Յանձնապատասխան, յոխո՛րտ : Ակնյայտօրէն արուագեղ, կրելով նպաստը լողուորդի մկուռնքին : Եւ սակայն, գլխուն կերածի դադանի փլուզում մը : Նոյնիսկ՝ գլխուն լա՛ւ կերած մարդուն, որ ցնցոտապատ շրջաններ ունեցած է, որ, ինչքան ալ միայն ակնարկներով հայցուած, իջած է մինչեւ ողորմութիւն : Եւ երբ խոտլքի մը հովը կ'անցնի մէջէն, դէմքը կը դառնայ դաժան, վրէժխնդրի : Կը դժտուի եւ կը դառնայ թշնամի գիտակցութեան :

Իրիկուն մը մնաց բոլորովին անսուղ : Եւ սակայն չէր պարտուած : Կեանքի ախորժակին երախը կը մնար մեծաբաց : Քարէն ջուր պիտի հանէ : Եւ ո՛չ թէ կաթիլ մը, կամ քանի մը կաթիլ, այլ՝ առա՛տ, ուղիւնահոս եւ անմիջապէ՛ս : Ինկաւ այն նստարանին վրայ որու ոտքերուն Միջերկրականի փրփուրները կուզան հալիլ, հուսկ հրախաղէ մը վերջ սպիտակ :

— Մուտ է՛ք, պոռթկաց, խօքըր ուղղելով լազուարթ կոհակներուն, սո՛ւտ էք դուք հպատակները չէ՛ք դիւթազօր պարիկին : Ե՛ս, այսքա՛ն ատեն, կը ծնրագրեմ իր բազինին առջեւ եւ կը շարժեմ կատաղօրէն բուրվառը ինկաբոյր : Ու ան երբե՛ք չէ պատասխանած : Քանի որ ինձի՛ չի պատասխաներ, ո՛չ ոքի կրնայ պատասխանել : Ո՛չ ոքի սրտին մէջ բռնկած է ըզձանքը արկածին, աւելի՛ բուռնօրէն, աւելի անզուսպօրէն :

Հրաշապատում Արկածին... Ո՛չ ոքի: Արկածը որ կ'ազատագրէ... Արկածին պալատները, անոր հրահրող, աճեցնող փարթամութիւնը: Մեծազոր սիմֆոնիա՝ անմիջահաս զօրութեան: Ի՞նչ փոյթ թէ ըլլայ իր վախճանական նուագն ալ՝ պայթում մը մեծաթնդիւն: Մինչ այդ, եւ թող մէկ անգամ, դէթ անգամ մը՝ փշրուի՛ն առօրեայի ժանգոտ շլթային օղակներն անհամար: Փշրուի՛ն... Մահը շարժուն մարդոց, որոնց կեանքը կը սկսի իրենց դադադարութեան օրէն: Սպիանան վէրքերը իր կալանաւորի ու, խելակորոյս խոյանքով մը, ան ըմպէ արբշտանքը ամենազօր արկածին: Ան է որ կը բանայ, վայրկենական գարկով, մարմարակերտ պալատին դռները: Պորփիւրէ աստիճաններ մեծադիր որ կ'առաջնորդեն դէպի դահլիճներ փարթամադեղ: Մենապար հրաշագիծ՝ անահնկալ կերպերու, մէն մի ըսպէ ստեղծուող ներքին երաժշտութեան կշռոյթովն, ուր ձգողականութեան օրէնքը կը կասի գործելէ, ուր կը յառնու աշխարհը բոլոր կարելիութեանց: Ուր ամէն ինչ, որեւէ ինչ կը սպասարկուի անմիջականօրէն: Ի՞նչ փոյթ թէ իր վերջի վանկն ըլլայ պայթիւնը՝ կախարդանքի պղպջակին: Թխնկադին առարկաներ եւ գորգեր թաւարծի: Ուր որ աչքդ իյնայ, զմայլանքն ու նրբագնուացումը կը խուժէ ներս: Մանկլաւիկներ հոտոտեն բաղձանքներուդ ամէնէն մեծէն ամէնէն փոքրը, եւ կատարեն անմիջական սպասարկումով: Մնդուսին ու բեհեզին շողշողումը խառնուի անորաչքերու պսպղումին, երբ, թաւազող անկողինին ծոցը, թխադեղ ըղձանոյշ մը Փրովանսէն, մաւրիտենական սեւ աչքերով, իրեն սպասելով, կուրծքին կրակները միաթրալի բոցերուն խառնէ: Ո՛չ ոքի ականջին ոսկիին զիլ հնչիւնը դարձած է աւելի կախարդական, քան երբ հասած է ան ի՛ր ականջին: Ո՛չ ոք աւելի քան ինք գալարուած է զրկանքէն, զրկանքին գարշ տեսակէն, իր պապերու արիւնին մէջէն: Ո՛չ ոք աւելի տուայտած է պերճութեան կարօտէն, անոր անհասելի հեռաւորութենէն ու հեռաւորութեան զգեստնող քամահրանքէն: Ո՛չ ոքի կեանքը աւելի արհարամարհուած է. հալածանքին խորանումովը, քան իրենը: Այ ինչպէ՛ս սուտ չըլլան կոհակներն ու խոտտումներն իրենց: Սո՛ւտ է իրենց պարիկը: Պարեպատի՛ր՝ իրենց տօնակատարումը:

*

Եւ սակայն, իրիկնայնի նոյն գեփիւրը եկաւ քուռեցաւ, համահասար բաշխումով, նաեւ զրկուած մարդուն: Եկաւ

փայփայեց անոր լսելիքը, համահաւասար զեղումով, ու փափսաց իր անպատում պատմութիւնը, հաւաքած ծաղիկներու հեզութենէն, ժայռերու ճեղքերէն ժայթքած թղենիներու վեհանձնութենէն, պատերու ծերպերէն դուրս պրծած քաք-թիւսներու ժուժկալ անխռովութենէն :

Չոյզ մը դեղնալանջ, ճոռոզադին, անծանօթէն յանկարծ ժայթքած եւ նոյնհետոյն անծանօթը մխրճուած, անցան դացին, անոր ճակտին քսուելով : Ու խաղաղութեան մեծ մատեանէն՝ ո՛չ մէկ տառ զծագրուեցաւ իր ճակտին :

«Ոսկի Բանալի»ին դուռը բացուեցաւ եւ շեմքէն տըրտում տղան, յափշտակեա՛լ, հրաւիրակ կարգաց իրեն, բարբառներուն ամէնէն ազու շեշտերովը : Բայց ան մնաց պըրկուած մոռյլի աղջամուղջներուն մէջ : Չգիտցաւ թէ ե՛րբ է որ հողածինը կալանաւորն է սեւ ուժերու : Չգիտցաւ թէ այն թակարդը ուր ինկած էր՝ ա՛լ անդամ մըն ալ, յետոյ, անկէ ելք չկար : Չուզեց լսել ձայնը ներքին շղթաներու բեկումին : Աւետի՛ս, զոր սիւքը կը բերէր իրեն եւ որ երբեք չի խաբեր : Չուզեց լսել լռելեայն պատգամը կարմիր ժայռերու ճեղքերէն արեւին ժայթքած թղենիներուն եւ պատերու մերկ ծերպերուն մէջ, իրենց կեանքէն երջանիկ՝ քաքթիւսներուն : Չուզեց լսել դայլայլը զոյգ մը դեղնալանջին եւ տեսնել անոնց թուիչքը անհոգ : Չուզեց ընդունիլ պանծը անբաւ որ բիւր ձեռքերէ իրեն կը մատուցուէր : Իր մոլորամոլ ակնարկները չկարգացին հրովարտակը բոլոր ժամանակներու իմաստութեան, զոր անթիւ ձեռքեր տարին իր աչքերուն :

Նստած հսկայադիր Զրօսաչէնքի ոտքին, անէծք եւ լուտանք թափեց : Նետուեցաւ փորձութեան սեւ կախարդանքին : Դարձաւ նոխազ : Չուզեց լսել ահագնազոռ մեղեդին որ հիմա իր չորս կողմէն կը բարձրանար իբր փառաբանութիւն մնայուն : Եւ, առաւել նուազ, չուզեց մատչիլ խորհուրդին՝ համայնական եղբայրացումի, որ կը ծփար իր չորս դին :

Իր հրանուտ կիրքի բոցերուն մէջ, չգանազանեց այն որ անիծապարտն է կեանքի մէջ եւ այն որ իմաստունը : Եւ եթէ անտեղիտալի էր, իր էութեան խորքը, պապակը խոյսլից ծաղկումին, ապա ուրեմն ան չգիտցաւ որ կար նաեւ խոյսնքը՝ դէպի լուրթն անծայրածիր :

*

Քանի իրիկունը յառաջացաւ, կոհակները յանդգնութեամբ շարժեցան : Մեծ Դժգոհը համակուեցաւ օտարոտի

խոռովքով մը : Աչքերը յանկարծ մագնիսացան : Ակնարկները , իրմէ անկախ , ինկան ալիքներուն վրայ , անփոփոխ կէտի մը : Հսկայ եւ սեւ , հագուագիւտ բուստ մը բացուեցաւ եւ աստառին սատափը ծիածանեալ փայլեցաւ : Ջքնաղ ըղձանոյշ մը , հոլանի , ընկողմանած էր հոն : Խնձորաղէր իր ծիծերը աւելի կարծր ու ողորկ էին քան դարերով ալիքներու լեզուէն յըլկուած որձաքարը :

— Հիէ՛-հիէ՛ , հիէ՛-հիէ՛ , ճչաց , դեղին մեղրի պէս քաղցրը , դեղին թուզի կեղեւին պէս անուշ , հալած դեղին ոսկիին պէս հոպուն իր ձայնովը : — Հիէ՛-հիէ՛ , եկա՛յ . . . եկա՛յ . . . Պիտի տամ : Պիտի տամ՝ այն որ կ'ուզես : Պիտի տամ ամէն ինչ որ ուզես : Միայն թէ՛ , հիէ՛-հիէ՛ , լաւ մտիկ ըրէ՛ : Իմ բոլոր տուածներս ճիշտ քու ուղածիդ պէս են : Ճիշտ ու ճիշտ : Միայն թէ՛ , է՛ , հիէ՛-հիէ՛ , կը գինովնա՛ս . . . Բազմաթիւ են տեսակները արբեցումներուն : Ու մին միւսէն աւելի բարկ ու այլազան՝ ոգելից ըմպելիները աննիւթ որ գլխու պտոյտ կուտան : Կարելի՞ է հաշիշ ծամել եւ չգինովնալ , ման գալ անդունդին եզերքը եւ չգինովնալ . տարածութիւններ կտրել Բեգասի վարաւանդին կամ նետուած մետաղեայ թեւերու՝ ու չարբենալ . փորձել բախտը սա ապարանքի սրահներու մէջ , եւ մնալ տէրը կամ քիզ : Հիէ՛-հիէ՛ , կը գինովնա՛ս , ըսե՛մ քեզի : Վախցի՛ր , քանի դեռ ուշ չէ : Կարելի՞ բան է ման գալ անդունդին եզերքը եւ չգինովնալ , չգլտորիլ , տորի՛լ , տորի՛լ . . . Եւ բազում են անդունդներն ու անյատակ :

— Իր բախտէն Դժգոհը ծառայաւ խելայեղօրէն ու աղաղակեց .

— Թո՛ղ , թո՛ղ , կ'ուզեմ : Ես տէ՛րն եմ իմ տենչանքի բոլոր ծաղիկներուն ու անոնց բուրումներուն : Թո՛ղ ըլլան թունալի՛ , աւելի՛ , աւելի՛ թունալիք : Իմ սրտիս վերապատ՝ սեւ նեկտարնե՛րն սպեղանի : Թո՛ղ , թո՛ղ . . . Կա՞յ բան մը աւելի թունարկու քան կեանքն իմ . . .

Փակուեցան գորշագեղ , մեծղի փեղկերը բուստին , ու շարժեցան ալիքները : Մոնթէ Քառլոյի ծովախորշը իր խաղաղաւէտ ու խոռովիչ մրմունջը հեզեց , իբր երբեք դադրած չըլլար , իբր տարածուէր յաւիտենութեան ճամբայովը , իբր գործադրէր անխզելի՛ ու անվե՛րջ դաշինքը տարրերուն :



Յաջորդ օրը , նոյն այդ նստարանին վրայ , սեւ ակնոցներ՝ աչքին , ճերմակ մորթ՝ մարմնին , հարուստ պարանոցով ,

յորդառատ կուրծքով կին մը եկաւ նստեցաւ իր քով : Ոչ մասնաւորապէս խտտաբարոյ, ոչ ալ մասնաւորապէս յանդուզն կին մըն էր ան, բայց առանց այլեւայլի խօսքը ուղղեց Դրժ-դոհին եւ այսպէս ըսաւ :

— Առանձի՞ն էք :

— Բոլորովին : Դո՞ւք :

— Ե՛ս ալ : Կ՛ուզէ՞ք ամուսնանալ ինծի հետ :

— ...

Ամուսնացան : Ամէն օր կը յայտնուէր ան : Օրէ օր՝ աւելի շքեղաշուք : Կը թաւալէր անդլիացի լորտի մը յարգարանքին ու կենցաղին մէջ : Կ՛անցնէր, Ռիվիերայի պողոտաներէն, կնոջը քով բազմած : Հսկայ Ալֆա-Ռոմէօ մը կը յառաջանար, աւելի անշշուկ, թաւշային քան երթը յովազին : Օ՛ր նոր, հագուստ կապուստ նո՛ր : Կը բնակէն Մոնաքօ փալաս : Ամբողջ յարկաբաժին մը կը պատասպարէ իրենց սէրն ու հագուստ կապուստը : Ծխափողը, ձեռք մը երկար, միաձոյլ դեղին յամպարէ : Ծխատուփը՝ դեղին ոսկիէ, կը կրէ իր անուան սկզբնատուերը՝ լուսնոսկիէ : Երբեմն, յետմիջօրէի տապին, սեփական եօթը, ալպաթրօսի պէս սպիտակ ու սրաթոխ, կը տանի կը նետէ գիրենք բաց ծովու գով գրկին : Բաց ծովուն գով գրկին ալ իր հետ կը լսէ պատմութիւնը ձիւնէ մորթով կնոջը :

Պատմութիւն՝ նոյնքան հին ինչքան մարդը երկրի վրայ :

Ճարտարարուեստի իշխան մը՝ իր ամուսինը : Կէս առ կէս շահակից են : Դեռատի պաշտօնեայ աղջիկ մը կը դառնայ տէրը ամուսնոյն սրտին : Կը բաժնուի : Կը գտնէ զինք : Երջանիկ է : Երջանիկ ըլլալու անսպասելի ախորժակով : Կը սիրէ : Պէտք է որ սիրուի : Սիրելուն համար, ան պիտի լողայ միշտ դեղին ոսկիին մէջ, ինչպէս զբօսանաւը իրենց՝ Միջերկրականի լազուարթ այլեքներուն ծոցը :

Օր մը, — շատոնց չէր որ աւարտած էին մսխումի օրերը մեղրալուսնին — օ՛ր ճակատագրորոշ, նոր փեսան գտաւ որ իր կնոջ անուշահոտութիւնը շատ ծանր է : Կէռլէնի Կէռլինատը պէտք էր փոխարկուէր Մոլինոյի Թիւ Ութովը :

Սեւ նեկտարի առաջին սրսկումը արդէն...

Կինը փոխեց իր անուշահոտութիւնը : Նոր բուրումը դարձեալ իր ոնգունքին չեկաւ : Կինը դարձեալ փոխեց :

Սրսկումի առաջին գոլորչիները կը տարածուէին արդէն

կամքի կամարներուն տակ : Սկսած էր ենթարկուիլ անոնց խմորումներուն անյեղլի : Անչո՛ւկ , նոր մեքենայ մը եկեր տուն տեղ կ'ըլլար իր մէջ : Էութիւնն համակ ալ պիտի շարժէր , ալ պիտի լար , ալ պիտի խնդար , ըստ կամքին այդ օտարոտի մեքենային : Իր աչքերը ելան գացին եւ իրենց ականդիքը եկան բնակիլ զոյգ մը այլ աչքեր : Օտար էր մին միւսին այդ զոյգ մը աչքերէն , ինչպէս լոյսը՝ գիշերին : Ինք կ'անզիտանայ : Գինովութեան առաջին մշուշները կը թափանցէին արդէն ուղեղային բլթակներուն : Տուած էին արդէն տախտակէ յանդուութիւն մը իր նկարագրին եւ յանձնապատասան անշրջահայեցութիւն մը թիթեղէ : Թիթեղին պէս անթափանց , թիթեղին պէս ճմռթկուող :

Ուրիշ օր մը , իրիկուան , ուշ տուն վերադարձաւ : Ինչո՞ւ կանխապէս չիմացուց : Հարց ու պատասխան , պատասխան ու հարց : Կարկուտ մեղադրանքի , կռիամարտ ստորին հաշուեյարգարի :

Գինովութիւնն իր ձեռքն առած էր արդէն անոր կամքին շարժակը : Սկսած էր արդէն քայլ փոխել անդունդի եզերքին : Սովալլուկ , փոսփորային լոյսեր պսպղացին իր բերերուն մէջ անձանաչելի :

Լողանք նախատինքի : ... Փողոցը գտաւ զինք ուր անօթի քուրը կը փսխէր : Նոր փեսային վիզը կարմրեցաւ , ստացաւ կրկնակ հաստութիւն : Գունքերուն վրայ մէկ մէկ կապոյտ չուան սողոսկեցան ու ցցուեցան :

Երկվայրկեան ճակատագրորոշ : Ահա՛ անկիւնադարձը : Դեռ անկարելի չէ : Առա՞ջ՝ թէ՞ ետ : Մազ մնացած է , — առա՞ջ՝ թէ՞ ե՛տ :

Եւ սակայն լսե՛ց , լսե՛ց , իբր ծովին խորքը ըլլար , իբր երազի մը մէջ անդամալոյծ , լսեց օտարոտի ձայն մը , դեղին մեղրի պէս քաղցր . « Հիէ՛-հիէ՛ , տե՛ս՝ կը գինովնա՞ս ... »

Ու ձայնը մղձաւանջներու պակուցիչ , անզօր շեշտը ունէր : Ու չփոխուեցաւ փայլը իր բերերուն սովալլուկ :

Սկսաւ դեղեկիլ , անդունդի եզերքին : Առա՞ջ՝ թէ՞ ե՛տ : Առա՞ջ : Զի՞ աւաներ ուր իր մորթը դեռ ողորկ է , երբ անորը՝ իր կնոջինը , քիչ մը ամէն տեղ , կը փոթփոթի : Իր թշուառութիւնը երեսին կուտան : Տղայ մը մի՛շտ կրնայ փողոցը ըլլալ : Փողոցը դանուած կին մը՝ զօրհներու կին մըն է միանգամընդմիշտ :

Արդ՝ կինը եզրակացուց : Ինք այս խեղճ մարդուկին հետ

եկած է՝ դժբախտ չըլլալու համար: Եթէ դժբախտ ուզէ ըլլալ՝ ամուսնոյն քով կը վերադառնայ, որ գոնէ՛ր, նրբակենցաղ է, եւ դեռ... կը սիրէ զինք, ինչքան ալ ըլլայ մասնաշատուկ տեսակով մը: Երբեմն՝ կը պայքարի ան իր անկումին դէմ: Եւ ատիկա՛ շա՛տ... շա՛տ լաւ բան է: Երթա՛յ բարով: Երթա՛յ բարով, ալ առանց ոչ մէկ բառի: Անդառնալիօրէն:

Վերջի վանկը հազիւ էր արտասանած երբ արդէն մատը, աննշմար, սեղմած էր ելեկտրական կոճակին: Այս անգամ, Ձի մեղայ: Ո՞վ էր որ գործեց իր տեղը: Ինք չէր, հիմա քանի վաւերական Բրիտանացին, անձնեայ, հաւատարիմ, դասական թիփ սենեկապանի, ներկայացաւ, ուղղահայեաց, հոգէստ հրեշտակին պէս անդրդուելի:

— Դո՛ւրս տարէք սա բանը, ձայնեց մեղմութեամբ յորդառատ կուրծքը, ցուցամատը դէպի անէացած կողակիցն իր:

Այդ ըսպէին, զինովութեան հրթիռը, անպեղելի ուրրտնեբու մէջ իր վերջին բռնկումը ունեցաւ: Ու անդունդի եզերքէն ան գլտորեցաւ գլխիվայր, դէպի յատակը Մոնաքոյի ասնողոք սալարկներուն:

Յաջորդ օրերը տեսանք զինք դարձեալ այնպէս ինչպէս այս անհաւատալի դէպքէն առաջ՝ ցնցոտապատ եւ նօթի: Ճի՛շտ ինչպէս առաջ: Անշո՛ւշտ՝ մոռայլին մէջ, խաւ մը աւելի ցած: Գլխուն դարձուած ա՛յն, ա՛յն... անտեսանելի հրարձակէն:

Յամառօրէն կուգայ կը նստի միեւնոյն նստարանին վրայ, նոյն ժամերուն ուր, առաջին անգամ, սեւ ակնոցներով կին մը եկած ու խօսած էր իր հետ:

Աս ինչպէ՛ս, ինչպէ՞ս եղաւ... Չգիտցա՛ւ: Չգիտցա՛ւ բնաւ: Ինք բան չգիտցաւ: Ո՞վ ըրաւ ասիկա: Ո՞վ էր որ գործեց տեղը: Ո՞վ փոխեց աչքերն ու լոյսը աչքերուն: Իրեն ձրդեր են կեանքին աննշան արարքներուն տնօրինումը, մինչ կարեւորներուն, ամէնէն կարեւորներուն ատենը, տե՛ս, տե՛ս, հիէ՛-հիէ՛... Իր ո՞ր մեղանչումին համար՝ ահագնամեծ այս պատիժը: Մարդուն աչքերը հանել եւ տեղը ուրիշներ դնել: Ձի՞ մեղայ: Ո՞վ էր որ գործեց իր տեղը: Ինք չէ՛ր, հիմա քանի որ՝ ինք է՛, ինք՝ ինքզինքն է՛, մտաւ ինք իր մօրթին մէջ: Եւ կախարդանքին գոլորչիները փարատեր են: Հիմա ինք՝ ինք է: Տե՛ս, տե՛ս, մարդու քթին կը խնդան: Պահուրտած՝ մարդու քթին կը խնդան... Ծուղա՛կ, ծուղա՛կ կը դնեն իր սրտի, իր կամքի ոտքերուն առջեւ: Եւ յետոյ ալ՝ մեղանչեցի՛ր... Ո՛չ իմ է մեղն:

Պահոււրտա՛ծ... Ա՛, անտեսանելի դաւաճան շողինե՛րը :
 Ինչպէ՛ս կը մտնեն մէջդ, քեզի դուրս կը նետեն քաղցրու-
 թեամբ, ու քու տեղդ ուրիշ մը կուզայ գործելու... Իբր թէ՛
 ինծի լուր տուին, իբր թէ՛ կանխազգուշացուցի՛ն, պատուի-
 րեցի՛ն... Ստութի՛ւն : Մարդը կը հպատակի իր երկու հակըն-
 թաց ուժերէն մեծագոյնին : Եւ որպէսզի դեղհատը դիւրաւ
 կլլես՝ զգայազիրի կ'ընեն քեզի : Խաւարումը կ'իջնէ գիտակ-
 ցութեանդ վրայ : Կը խլեն քեզմէ միակ հաշուի առնուելիք
 բնութեան տուած բարիքը : Տէ՛, եթէ կրնաս, կամք, եւ-
 այլն... Թո՛յլ տուէք, թոյլ տուէք որ խնդամ... :

Ալքօլինը՝ ոչի՛նչ : Ուրիշնե՛ր կան, ուրիշնե՛ր, մուխդ կը
 մարեն... Կայ Տոփա՛նքը, ահարկո՛ւ, խորիսի հեշտանքի,
 որուն բջիջներն են պատրաստուած արիւնի ու փոշիի շաղա-
 խով, որ կ'ելլէ, անառակ ձեռքին մէկ շարժումովը, սեւ վա-
 րագոյր կը քաշէ բիբերուն եւ, պահ մը առաջ խելօ՛ք, զի-
 նուոր Լաւին, այժմ, Յայրատն է պատրաստ՝ ոճիրի : Եւ՝
 մէկ վայրկեանէն միւսը, հը՛... :

Ու դեռ Յաղթանակը, Փառքը, դրօշներուն ամէնէն պա-
 կուցիչը, որուն կոթողուող մեղեխն ոսկեզօծ արոյրէ, մէկ
 վայրկեանէն միւսը, կը փլատակուի, կը դառնայ փոշի չա-
 րախիւդ : Գազաթ ահահայեաց, որուն օդն է անուշ ու թու-
 նահեղց, որուն վիրապն է քարքարուտ, ուր կը խորտակուին
 խառնափնդոր՝ արձագանգները ահագնածայն ու այսակոծ՝
 լոյսին ու գոռոզութեան : Չկայ դրօշ մը որուն սնդուսը ինչ
 գոյներով ալ պճնազեղուած ու սիգածուփ, կապո՛յտ, սպի-
 տա՛կ, կանա՛չ, չըլլայ մշտապէս ու ամբողջօրէն՝ կարմրա-
 վար :

Եւ կայ դեռ Ընչաքաղցութի՛ւնը, մռա՛յլ, մայր բիւր
 պղծութեանց եւ ծծմայր՝ եօթը մահացու մեղքերուն : Այսա-
 մայր՝ մեղանչումի ամէնէն ամբողջականին, փոխանցիկին՝
 Շահագործութեան :

Շահագործում որով մարդը կը յանցագործէ մէն մի օր,
 մէն մի վայրկեան : Մեղք յաւերժ անքաւելի : Չկայ արիւն մը,
 ըլլայ աստուածային, որ հեղու վասն թողութիւն այդ ոճի-
 րին հանապազօրեայ : Ծնեալ անյիշատակ ժամանակներու
 ծոցը, առաջին իսկ խլրտումը միաբջիջ կեանքին, կը դառ-
 նայ անարգանք՝ Մարդու ճակտին, բնութեան բոլոր դա-
 բիրներուն :

Քաղցկեղ ահարկու որ կը նետէ, գաղտասքօ՛ղ, եօթն

անգամ եօթը արմատներն իր՝ ընդմէջ մարդկային ընտանիքին: Վիշապ բիւրաթաթ ու շօշափուկ աստեղաթեւ որ կը պղծէ բոլոր ակերը կեանքին: Ու կը խոշտանգէ կատաղօրէն դանդուածները, պարարտացնելու համար միայն ոջիլներ: Մարդուն դէմ՝ մարդէն դործադրուող ճերմակ աղէտ անընդմէջ եւ անեզր: Լուտանք՝ ընդդէմ հողի, ջուրի, օդի մեծ խորհուրդին երկնապայծառ: Դաշոյն մշտակոխ՝ կեանքի սրտին:

Ընչաքա՛ղցը, գրկուած աշխատանքի սրբագործող մկըրտումէն, որուն բիբերը, ոչ իսկ ակնթարթ մը, ցոլացուցին շող մը խղճմտանքի լոյսերէն, եւ որուն բաժակը կը մատուցուի, անտարբերօրէ՛ն, նոյնքա՛ն արիւնովը իր նմաններուն, ինչքան արիւնովը անխտիր իր մօրն ու դաւկին: Ինչպէս չկայ մեծութիւն մը գոհողութեան որով ան դայ ի փրկութիւն, այնպէս ալ չկայ մեծութիւն մը պատուհասի որ լլլայ համարժէք մեծութեանն իր աւերին:

Չկա՛յ... եթէ ոչ՝ շանթահարումն իսկ իր անխնայ, մինչեւ չքացումն ի սպառ: Ու եթէ ամէնէն հնամին է ան, ամէնէն նախատականը Մարդու արժանալայելչութեան, ապա ուրեմն իր բնաջնջումն ալ արմատախիյ՝ տիտղոսն է փառքի՝ մարդու հանճարին ու կամքին: Չկայ ուժ մը, որուն թռիչքը չբեկանուի, իր աճումին իսկ բաղադրած արբեցումէն: Չկայ խոյանք մը որուն սահմանազանց ճոխացումը չստեղծէ իրեն հակընթաց գօրութիւնը եւ չփշրուի անոր բախումէն: Չկայ դերաճում մը արշաւանքի որուն չընկերանայ, անտեսանելի, դաւադիր, լուռ ստուերը իր կորստեան:

Իմաստունին օրէնքն է անմահ՝ չունենայ: Հաղիւ բռնած՝ նետել ի բաց: Ահա՛, — լլլայ նաւապետն հսկուն՝ իր նաւին:

Միջերկրականի պարիկը ա՛լ չի սիրեր խօսքի բռնուիլ իր հետ: Շատ վստահութիւն չունէր արդէն: Սն կը ճանչնայ իր կոչեցեալ քուրմերը:

Երբե՛մն երբեմն, յանկարծ, կը յայտնուի սակայն, կը բանայ իր կայքին սատափաչող շրթները, անծայրածիր ջուրերու երեսին, ուր ամէն ինչ կը լուծուի, ուր ամէն ինչ կը ծփայ, ուր յաւիտենականութիւնը կը շնչէ, կը յայտնուի յանկարծ եւ կը կրկնէ հեղնակի:

— Հիէ՛ - հիէ... Ա՛յս է, այս է՛, կեանքն է, հիէ... Ըսի՛, չբսի՛, մէ՛կ է՛ քսի, մէ՛կ է՛ չբսի, քսի-չքսի, լաւ է չքսի, կեանք է, կեանքն է, հիէ՛ - հիէ՛...

*

Անծայրածիր հերկ է կարծես երկինքն իմ դէմ,
Ու աստղերը ցորեաններն են իր դեղնավարս,
Ջինջ կապոյտի թագուհին է արեւն հրկէզ,
Ու դաշտերուն գիշերապահ՝ լուսինն յաւերժ:

Ես արեւին ու կաթ լուսնին կը նախանձիմ,
Անոնք փիրուզ իմ Սեւանին, Երեւանին:
Ես կը ձգտիմ առտուան շող Արուսեակին,
Կը նայի ան Աղթամարին, Վանայ ծովին:

Արեւ, աստղեր, դուք աշխարհներ անծայրածիր
Ձեր դէմ բաց է մոլորակն այս հազարբուրեան,
Բայց ուր էր թէ բնակիչն այս հողագունտի
Ձեզ չհասած սահմաններն իր բանար համայն:

ՄԱՏՂԱՇ ԾԱՌԵՐ

Սուլեց յանկարծ աշնան քամին
Դարան մտած գողի մը պէս,
Մատղաչ ծառեր սքսրփացին,
Դող մը պատեց զիրենք անտես:

Դեղնած տերեւ մ'ինկաւ գետին
Ինչպէս կաթիլը անձրեւին,
Հովը սուլեց ու տարաւ զայն,
Ու ծառերը լացին, լացին:

Աշնան ծառե՛ր, ծառեր մատղաչ,
Ձեզի համար, ձեզմով առլի
Կը սքսրփայ իմ ալ հոգին,
Բայց կ'սփոփուիմ մտածելով

Թէ աշունն այս ձեր մահը չէ,
Դուք դեռ պիտի արեւ ըմպէք,
Ըմպէք հողի ուժը բերրի,
Ու պար բռնէք գարնան հովէն:

*

ՄԻ՛ ՄԱՐԴԱՆԱՐ...

Ծները հաւաքուած մեծ քաղաքի մի պուրակում՝ խառն ի խուռն հաչոցներով խոտվում են շրջակայքը: Հաչում են նրանք ու հառաչում, ու ոռնում են, ու կաղկանձում:

Այդ պուրակում եւ ամէնուր մարդկային զոյգեր 20րդ դարու լպիրշութեան աննախընթաց պատկերներն են հանդիսադրում:

Ծներն եկան՝ շուարեցան: Ծներն իրար աչքով-ունքով, պոչով-դունչով խորհրդաւոր ինչ-ինչ բաներ մըթմըթում են ու դըմոում:

— Տեսար մարդիկ՝ տեսա՛ր, տեսար՝ մարդիկ ինչպէս «չնացան» . — հա՛հ, հա՛հ, հա՛հ. տարուան ամէն եղանակին՝ ոչ օր դիտեն ու ոչ գիշեր՝ եւ դեռ ինչե՛ր, դեռ ինչե՛ր — հա՛հ, հա՛հ, հա՛հ, հա՛ւ, հա՛ւ հա՛ւ...

Հասարակաց ամէն վայրում, ուր անցուդարձ, ուր բազմութիւն կայ խոնուած՝ նոյողների աչքի առջեւ, ներկաների ճիշդ քթի տակ՝ այր ու աղջիկ, մի-մի տղրուկ, իրար փակած՝ լպրծւում են բերան բերնի — Սողո՛մ, Սողո՛մ...:

Ուրիշների ներկայութեան պահանջն ունին, իրենց նայող նողկացողի փափաքն ունին, որ աւելի համով դառնայ «չնացումի» այս արատն անիծապարտ — Սողո՛մ, Սողո՛մ...:

Մեծ քաղաքի մի պուրակում շներն իրենց խառն ի խուռն հաչոցներով թնդացնում են շրջակայքը: Հաչում են նրանք ու հառաչում. ու ոռնում են, ու կաղկանձում...

— Լուռթի՛ւն, լուռթի՛ւն, շուն եղբայրներ ու քոյրեր, մեր ցեղի պետն ու աւագը, մեր մեծ գամփուր՝ խոշորադունչ շուն մարդարէն է բարբառում, ակա՛նջ դրէք:

— Ո՛վ շնագզի շունն ժողովուրդ՝ մեծ ու փոքր, արու թէ էգ, ամէն գոյնի, ամէն մորթի շանորդիներ, լա՛ւ լսեցէք: Տաս պատուիրան պիտի տամ ձեզ, որ զարմից զարմ պիտի ապրի ու ապրեցնի ամէն մի շուն ու շան որդի:

Մարդիկ դարեր — դարեր առաջ քարոզեցին ու իրենց պատգամներից մէկն է եղած՝ ու ամէնէն աղաղակողն ու աչքառուն — «Մի՛ շնար»:

Արդ՝ այսօր օրն է որ ի լուր բոլոր շունն ու շնագզի շնչաւորներին բարձրաղաղակ ու առնագինս ազդարարեմ առաջինն ու ամէնէն կակծալին իմ ձեզ տալիք պատգամներից — Մի՛ մարդանար, — հա՛ւ, հա՛ւ, հաո՛ւ, ո՛ւ...

Ոռնացէք շներ, շներ աշխարհի, ոռնացէք երկար՝ մարդու վրայ, կեանքի վրայ ու աշխարհիս վերջին օրուան — հաւ, հաւ, հաու ու ու... հաո՛ւ ո՛ւ ո՛ւ...

Աւա՛ղ, աւա՛ղ, կեանքը շունի էլ սրբութիւն, աւա՛ղ, աւա՛ղ, կեանքը դարձել է լրբութիւն...

Կադկանձեցէք ու ոռնացէք գիշեր ցերեկ, ո՛վ իմ շներ, ով վկաներ այս զուլումի:

Հաւ, հաւ, հա ո՛ւ, ո՛ւ:
— Մի՛ մարդանար...

ԱՆ - ԱՍՈՒՆ

Վերջապէս իրականութեամբ մկրտուեցաւ այն հրաշքը, որ աշխարհը երկնել է ու երկնում է սկիզբ ու վախճանի իր վիպական ճանապարհին:

Այն օրէն ի վեր, երբ կեանքի մեծ համերգը եկաւ պատուելու տիեզերական լուսութեան՝ համատարած քասոսի՝ կախարդական վարագոյրը եւ երկինք-գետին թնդացնելու միլիոն-միլիոն ծնունդների խլացուցիչ հազազներով, այն օրէն ի վեր երկինք-գետին, ծով ու ցամաք վկայ եղան այն Խօսքին, որ եկաւ իր գալուստն աւետելու Աղամորդու բերանով — Լոգո՛ս, Լոգո՛ս...

Այն օրէն ի վեր բեմ բարձրացաւ բանականութիւնը, կոչ ուղղելով զատողութեան. խօսեցնելով ու լսեցնելով «Այո»

եւ «Ուշ»ը լինելութեան՝ եւ կենդանութիւնը յաւերժացնող գետակներ ժայթքեցնելով ժամանակի առեղծուածային հոսանքն ի վեր՝ դէպի Հրաշք...

Եւ Մարդը, մարդը միայն արարչութեան այս առանձնաշնորհեալը լոկ արտօնուած է խօսելու եւ խօսեցնելու կեանքի ցորեկն ու գիշերը՝ հազարամեակներից հազարամեակ...

Բայց ի՞նչ, բայց ինչո՞ւ, բայց մինչեւ ե՞րբ կենդանական միլիոն-միլիոն նմոյշների միլիոն-միլիոն յորձանքները պիտի գան ու գնան, պիտի բերեն ու տանեն կեանքի կտակն ու նշխարը ու սուրբ գիւնին, եւ չունենան իրենց Բանն, իրենց բարբառը բանական՝ ի տես վերին, վերջին դատաստանի:

Յանուն ո՞ր խղճի, ո՞ր արդարութեան պիտի անձրեւեն հազարամեակները, պիտի դղրդան ու ժայթքեն մտքի ու զգացումի հրաբխային բերանները՝ եւ երբե՞ք, երբեք կենդանական ու բուսական սերունդները չպիտի քանդակեն վէպն իրենց եղելութեան, խոհն ու խորհուրդն իրենց խորքի՝ արարչութեան անջինջ մատեանում:

Եւ յանուն ինչի՞ երկրի մայրական ընդերքը կոծող ազգի ազգի դազան ու թռչուն, միջատ ու մանրէ, օդ ու ծովի յոգնախտուն բազմութիւններ իրենց ամէն արարքներով, կեանքի ամէն բարախներով ու հեւքերով պիտի մնան յաւէտ համր, անարձագանդ՝ արարչութեան խորհուրդն ի վեր միշտ անլեզու, միշտ ան-ասուն, ան-ասուն...

Այո, այո, աշխարհը համայն ու դարերն անյազ եռում են ու պղպղում արարածների երգ ու հառաչանքի, մայրական սիրոյ եւ արիւնարբու գիշատիչի՝ հազար ու մի մոռնչ ու մրմունջների քառասային խուժաղուժով, սակայն չունին, չունին լեզու, չունին իրենց արդար բաժինը Լոզոսի: - Ու պիտի գան, պիտի մթնեն անյիշատակ յաւիտեանս յաւիտենից — դարձա՞նք, դարձա՞նք...

Կեանքին յաւէտ հաւատարիմ՝ բոյս ու ծաղիկ, ծառ ու ծղոտ՝ ամէնն էլ ամենուրեք լուռ ու համր, մունջ ու անյուշ յաւիտեան, — դարձա՞նք, դարձա՞նք...

Մ՞ար է խորհուրդն իմաստութեան, ո՞ւր է ոգին, ո՞ւր է սահմանն արդարութեան. ո՞ւր է, ո՞ւր է կեանքի անխար, կեանքի վերին, գերիրացոյց սուրբ հայելին... - Ամէն:

ԵՍ ՉԷՆ ԵՄ, ՈՐ Է

Բնութիւնը շարունակում է՝ հաւատարիմ իր ընդգրկած ընթացքին՝ անհատնում շարքերը իւր դարուն, ամառ, աշուն, ձմեռները :

Բոյս թէ կենդանի միշտ միեւնոյնը կրկնելով ու կրկնելով՝ դիմաւորում են դարերը :

Արշալոյս, վերջալոյս, ցերեկ ու գիշեր, ծնունդ ու մահ, այս ամէնն էլ ամենուրեք անընթացի ու անսայթաք՝ յաւիտենութեան դրօշն են ծածանում իրենց երթի թափօրներով...

Մարդը միայն, ազամածին մարդն է միայն որի այսօրն ու վաղը անծանօթներ են մէկզմէկու. որի որդիք երբեք չեն այն, ինչ որ որդիքն իրենց որդոց — կա՛նգ առ աշխարհ...

Կա՛նգ առ ցնցուի՛ր, ո՛վ տիեզերք, ես եկել եմ փոխելու քեզ...

Ես եմ փոխողը, ես եմ փոխուողը. ես իմ ալեկոծ եսն ունիմ իմ մէջ՝ իմ էութեան լաբիրինթում. — Ես եմ Մարդը, Մարդ-մրրիկը՝

Ես այն եմ, որ Ձէ...

Այսօրուանից ամենակարող խելքի գաղտնի դռները բաց են իմ առջեւ, — այսօր օրն է, որպէսզի ես իմ իսկ ինչքի խոյանքներով իմ իսկ հանճարի գիւտը պանծացնեմ, խուճապի մատնելով համայն արարչութիւնը :

Արթնացիր, փրփրիր, ով դու թմրած յաւիտենութիւն. ամէն ինչ, ամէն ինչ պիտի փոխուի ու յեղեղուի, պիտի դառնայ անդառնալի անճանաչ, ինչպէս որ ես ինքս՝ ինձ, ու կեանքը՝ կեանքին, ու մահը՝ մահուան...

Ցնցուի՛ր, պոռթկայ, ո՛վ տիեզերք :

Տէր կանգնիր քեզ, Արարչութիւն :

Ես այն եմ, որ Ձէ :

Ես Ձէն եմ, որ է :

Ողջո՛յն...

Ողջո՛յն Քաոս... :

Ե. Ա.

ՄԱՐԴ ՄԸ ՄԻՋԵՐԿՐԱՎԱՆԻ ՎՐԱՅ

Ե'րբ ծանօթացանք իրեն, ես ալ չեմ յիշեր. մեզմ' հովէ մը պէս եկաւ մեր կեանքէն ներս, տակաւ պարուրեց մեզ եւ իր արժէքը գնահատեցինք միայն այն ատեն, երբ մեկնած էր արդէն՝ հովին պէս :

— Անթէպցի եմ, ըսաւ հօր մը բարի շէշտով, ծանօթացումի իբր առաջին վկայազիր: Այնուհետեւ օրհնեալ բերանը երբեք պիտի չգոցուէր: Անսպառ աղբիւր խօսքի՝ իր պարզամիտ, գուարթ իմաստասիրութեամբը կը մեկնաբանէր ամէն երեւոյթ ու դէպք: Յետագային իմացանք որ առեւտրական էր եւ աւելի ուշ՝ ի՞նչ տեսակ առեւտրական .

— Օ՛ր լալա մոն վիէօ . . .

Պէյրութէն նաւ առած էր եւ կ'երթար Իտալիա :

Առանձին կը ճամբորդէր, առժամաբար լքած՝ կին և զաւակ: Մանուկի մը անհուն գոհունակութեամբ կը վայելէր այս առժամեայ ազատութիւնը, հեռու՝ ընտանեկան ամէն կաշկանդումէ: Ու այս ներքին գոհունակութիւնը աւելի կը շնորհէր հոգեգրաւ չարամտութիւնը անզագար: Առանձին մարդ մը՝ շրջապատուած նոր դէմքերով, — երիտասարդ կիներ ու աղջիկներ, գործատէրեր, արձակուրդի գացող եւ արձակուրդէ եկող բազմատեսակ մարդեր: Միջհասակ մարմնին վրայ, հաւկիթածեւ, գրեթէ կլոր գլուխ մը կը կրէ. գանկին վրայ՝ քանի մը մազ. դեղնորակ շրջանակով ակնոցներ՝ մե՛ծ քթին վրայ, եւ տափատ մը ու շապիկ մը՝ որոնք մինչեւ վերջին օրը, Պէյրութէն Նափոլի, չբաժնուեցան իրմէ :

— Է վուալա, այսքան պարզ արտաքինով ու բարի սրտով մեր ճամբու ընկերը այսուհանդերձ աշխարհ մը ապրանք կը փոխադրէր: Ըսաւ թէ ի՞նք տախտակի վաճառական է: Սակայն տեսանք թէ իր առեւտրական ասպարէզը բազմազան ճիւղեր կ'ընդգրկէր: Իսկական շրջուն գեր-չուկայ մը: Իր

մօտ կրնաք գտնել ձմերուկէն ու պիստակէն մինչեւ գորդ ու բազմոց, շիշերով օղի, մինչեւ իսկ թանգարանային հնութիւններ, գորս կը տանի Ձոււիցերիա, ու հաշիւ չունի իր երթեւեկը Լիբանանէն Եգիպտոս, Եգիպտոսէն Իտալիա: Որեւէ երկնքի տակ օտար չզգար ինքզինք. իր հայութիւնը կը ճառագայթէ իր էութենէն, — գրեթէ ճաղատ դանկէն, մե՛ծ քիթէն ու աղտոտ օձիքով շապիկէն, տափատին լեցուն գրպաններէն. հարազատ առեւտրական հայ մը, շառաւիղէն անոնց, որոնք պատմական շրջաններուն լատտերով կ'իջնէին Եփրատի ու Տիգրիսի ջուրերուն հոսանքն ի վար, կամ Կիլիկիայէն կ'երթային մինչեւ Պրիւտ: Կ'առնէ, կը ծախէ, կ'ուտէ, կ'ապրի:

— Վաղը, կ'ըսէ, ի՛նչ պիտի տանինք մեզի հետ, զօ:

Մահուան գիտակցութիւնը զինք աւելի կը մղէ աշխատանքի ու շարժումի: Առտուընէ մինչեւ իրիկուն, նոյն գուարթ շեշտով, շէնչող եւ իր գուարթութեամբ իր շրջապատը համակող մարդ մըն է ան, որուն նմաններուն քիչ անգամ կը հանդիպիք, բայց որուն յիշատակը, խօսքին շեշտը, նայուածքին անմեղ շարամուտութիւնը կը տպաւորուին ձեր սրտին խորը. կարելի չէ մեծ հաճոյքով չկապկել զինք, այնքան իւրայատուկ անհատականութիւն մը ունի:

Մարդու վնաս չի պատճառեր, բացի դրամ շահելէ: Ընդհակառակը, իր շրջապատը կ'օգտուի: Երբ նաւը Աղեքսանդրիա խարսխեց, առաջինը ինք իջած էր ու քիչ ետք կորսուեցաւ եգիպտական երկար ու նեղ շուկաներուն մէջ: Երբ, մեր հերթին, քաղաքին մէջ կարճատեւ շրջապտոյտէ մը ետք նաւ վերադարձանք, Հայրենակիցը մեզի կը սպասէր ստոյգ անհամբերութեամբ:

— Ո՞ւր էք, զօ՞...

Ակնրախ է որ լաւ, շահաւէտ գործ մը տեսած էր. գնած էր խոշոր-խոշոր ձմերուկ, սեխ եւ բազմոցներ: Թէ ինչու նաւով կը ճամբորդէր այս անգամ, ինք՝ որ բազմաթիւ անգամներ օգանաւով երթեւեկած էր, ա՛յդ ալ բացատրեց, — սուտ կը խօսէր, երբ ըսաւ թէ շատ բեռ ունի: Արեւելքցի առեւտրականը անսպառ սուտերու վաճառական է, բարձրարուեստ է իր ստախօսութիւնը, երբ հարցը կը վերաբերի իր ասպարէզին, սակայն ան չի կրնար քողարկել իր ծածկելու զածը, երբ կը խօսի իր ներաշխարհէն. թափանցիկ է իր ստախօսութիւնը:

Ցնցուած էր իր էութեամբ՝ այս առեւտրականը, որ կ'իշխէր Պէյրուսի, Դամասկոսի, Հալէպի, Գիւլիսի, Այնթապի, Սմասիոյ, Իսթանպուլի, Աղեքսանդրիոյ եւ եւրոպական բազմաթիւ քաղաքներու շուկաներուն վրայ, ինչպէս չի կրնար իշխել Պուրճ Համուտի մէկ վաստակաւոր խանութպանը իր թաղին մէջ: Սահմանազրուիներու վրայ մաքսային պաշտօնեաները իր ծանօթներն են, ոստիկանները՝ իր բարեկամները: Եւ այս բոլորը՝ քանի մը կտոր բառ Փրանսերէն, քիչ մը իտալերէն, արաբերէն, քիչ մըն ալ հայերէն եւ առատօրէն թրքերէն:

Լիբանանեան օդանաւային ընկերութեան պատկանող օդանաւի մը արկածին զոհ գացած էին՝ ուրիշներու կողքին՝ իր թաղէն մարդիկ, երիտասարդ բժիշկ մը եւ հայ երիտասարդ մը: Բժիշկին — բարձրահասակ, գեղեցիկ երիտասարդ մը — յուզարկաւորութիւնը ցնցած էր մինչեւ նրբին նեարդները իր էութեան: Եւ կարծէք, այդ օր երզումը ըրած էր այլեւս երբեք օդանաւ չնստիլ:

— Փրկութիւն չկայ արկածի պարագային. նաւը տարբեր բան է, եղբա՛յր, կ'ըսէր խոր համոզումով, փափաքելով իմացնել իր լուռ երզումը:

Սակայն զուարթ ծնած, զուարթ ապրած այս մարդը երբեք տխուր չէշտով չի վերջացներ իր խօսքը: Նոյնիսկ ամէնէն «սեւ» խօսակցութիւնը ունի իր «զուարթ» կողմը. ու փարատելու համար տխուր տպաւորութիւնը, շուտով կը յարէ:

— Ծանօթներէդ եթէ մէկը մեռնի, լուր տուր ինձի. դա՛գաղը ինձմէ առ:

— Երբ կ'անդրադառնայ — իր յարաշարժ աչքերը կ'ուսումնասիրեն ամէն հակազդեցութիւն խօսակցին դէմքին վրայ — թէ առաջարկը հաճոյ չի թուիր իր երկրորդ խօսակցին, ուսի թեթեւ հարուած մը կուտայ, ըսելով.

— Ի՛նչ է, ամենքնիս ալ պիտի մեռնինք:

Այս անգամ ի յայտ կուգայ դագաղագործը: Կը պատմէ.

— Անգամ մը, բարեկամիս ներկայացուցի նման առաջարկ մը: Երեք օր ետք եկաւ ու ախորժակով հայհոյելէ ետք դագաղ մը գնեց, — իր ծեր մայրը մեռած էր: Ըսի՛ ի՛նչ կ'ըլլայ, մենք ալ պիտի մեռնինք:

Լրաքաղ ու լրատու՝ վայրկեանի մը մէջ տեղեկութիւն կը ստանայ եւ առանց սպասելու, դայն սեփականութիւնը կը դարձնէ բոլորին: Պատահեցաւ որ օր մը, եզիպտացի ճամ-

բորդ մը իր երեք հարիւր յիսուն ոսկիին երկու հարիւրը կոր-
սընցնէ : Մեր Հայրենակիցն էր եղած առաջին իմացողը եւ
քառորդ ժամուան մէջ դրեթէ բոլոր ճամբորդները տեղեակ
էին որ դող մը վերցուցած էր եզիպտացի ուսանողին երկու
հարիւր ոսկին : Սակայն մեր Հայրենակիցը պարզ տեղեկա-
տըութեամբ մը չէր գոհանար, այլ՝ ըստ սովորութեան՝ իր
իմաստասիրութեամբ կը համեմէր լուրը :

— Դեռ գթասիրտ է եղեր գողը, լա՛ւ՝ որ ամբողջ գու-
մարը չէ վերցուցած :

Կ'ուզէ օգտակար ըլլալ դժբախտ արարին . նուապետին
մօտ կը բողոքէ ինք անձամբ, անկարելին կը փորձէ : Կը խրա-
տէ, ցուցմունքներ կ'ընէ, յենլով իր անձնական փորձառու-
թեան վրայ : Ապա, նիւթը կը փոխէ . կը պատմէ թէ ինք ա-
մուսնացած է իրմէ տասնըհինգ տարեկան պզտիկ օրիորդի
մը հետ : Երրորդ խօսակից մը հաշիւ կ'ընէ թէ ինք քսանը-
հինգ տարեկան ըլլալով, ուրեմն տասը տարու աղջնակի՞ մը
հետ ամուսնացած ըլլալու է : Շուրջիները միաբերան կը բո-
ղոքեն, իրենց խօսքը ուղղելով Հայրենակիցին, զինք ամջըր-
նելու միտումով . մարդը կը բարձրացնէ՝ չէ տասնըկէց,
տասնըեօթը, տասնըութը լաւ է :

Մարդը, որ աշխատիլ գիտէ, չի կրնար հանդարտ կենալ,
կ'եռայ . նրճի իսկ անգործութեան, հանդիստի օրը՝ անվերջա-
նալի սպառում է այս մարդուն համար : Այս պատճառով ալ
կ'ուտէ մէջքի գօտին թող տուած, եւ մենք, իր փոքրաւորնե-
րը, որդիական զուարթ մօտեցումով եւ քիչ մըն ալ յարգան-
քի արտայայտութիւն որպէս, սեղանին վրայ, երբ ճաշը
սպասարկեն, կ'առնենք աղ ու պղպեղի սրուակները եւ առա-
տօրէն կը համեմենք ճաշը : Մարդը կը բարկանայ, քիչ մը
ծուռ աչքերով առաւել եւս ծուռ կը նայի .

— Ուլան, զիս պիտի գրգռէ՞ք, ի՞նչ է : Աչքէն արցունք
կուգայ : Մեր չարագործութիւնը մեղմելու համար կը զիմենք
սպասեակին :

— Կարսօն, պաղ ջուր մը՝ վարպետին համար, չու-
տով : Յարգանքի հրապարակային ու բարձրաձայն արտա-
յայտութենէն զոհ՝ դաւաթ դաւաթի վրայ կը պարպէ, ապա
կը լիզէ իր շրթունքները :

Անզամ մը որ սիրտը գրաւենք, ալ չի մերժեր ընթացք
տալ մեր որեւէ առաջարկին : Կ'ըսենք՝ Հայրենակից, ինչպէս
կրնանք հասկնալ սա՛ մեզի սեղանակից օտարուհիին տարիքը :
Լեզու չենք գիտեր : Մարդը վայրկենական ինքնամփոփումով

մը կը գտնէ տարազը եւ սպանուհին առանց վշտանալու կը պատասխանէ : Իմանալ կնոջ մը տարիքը . . .

Բաժանումի նախօրեակին — Ինք Նափուլի պիտի լընէր, իսկ բարեկամս ու ես պիտի շարունակէինք մեր ճամբան մինչեւ Մարսէյլ — Հնգօրեայ մօրուքը անխնայ, լողանք առաւ . կը ճառագայթէր մեր Հայրենակիցը : Բարեկամս վազեց եւ մեր խուցէն բերաւ անուշահամի սրուակը, առատօրէն օծանեց գլուխն ու երեսը : Միշտ նոյն գուարթութեամբ՝ մարդը բողոքեց .

— Ձախալներ, հերիք է : Այսուհանդերձ գոհ էր ան այս գուրգուրանքէն : Այդ օր մեծ շիշ մը օղի նուիրեց ինծի, իսկ ճաչէն ետք մեծկակ սեխ մը ջարդեց, սպանուհիները հաւաքեց շուրջը .— Մելոնէ, մելոնէ, սիմիոսիմա, պուօնո, պուօնո :

Յաջորդ օրը, կը խորհէի ես, այլեւս այս մարդը կը մոռնայ իր գուարթութիւնը ու կը զբաղի իր գործերով : Սակայն հաշիւս սխալ դուրս եկաւ : Ճիշդ է, իր գործերը կարգադրած էր . դրան առջեւ դիզուած էր հակերու նմանող պայուսակները եւ առաւօտեան ժամը 5,30ին նաւուն կամրջակին վրայ քաղցրակեղու կը խօսակցէր նուագախումբին մէկ անդամին հետ, որ միա՛կ հայն էր այս խումբին մէջ : Հասուն, գեղադէմ երիտասարդ մը, Պոլիսէն, որուն զինք կապող վերջին կապն ալ խզուած էր, երբ մեռած էր մայրը : Այնուհետեւ ցաւ զղացած էր կուրծքին տակ, սրտին մօտերը :

Սորապէս յուզուեցաւ մեր Հայրենակիցը, երբ լսեց զբժբախտութիւնը այս անոյշ տղուն, որ բժիշկներու թելադրութեամբ գործ գտած էր այս նաւուն վրայ, ու նաւը իրեն համար դարձած էր ե՛ւ աշխատավայր, եւ բուժավայր :

Իր բաժանումէն օր մը առաջ լսած էր այս պատմութիւնը եւ առաջին առաջարկը եղած էր՝

— Տղա՛ս, ամուսնացիր, կը մոռնաս ցաւդ, չոքուխ կ'ունենաս, կնիկիդ հետ կը զբաղիս : Մինչ այդ մեր Հայրենակիցը ծանօթացած էր եզրպատահայ կնոջ մը հետ — ի դէպ, նաւուն մէջ մարդ մնացած էր, որուն հետ ծանօթութիւն հաստատած, խօսք փոխանակած չըլլար — , որ Հոռոմի մէջ դաշնակահար, արուեստագէտ աղջիկ մը ունէր . . .

Ուրեմն, առտու կանուխ, շատ սիրալիբ խօսակցութիւն կ'ունենար հայ երաժիշտին հետ, ընկողմանած՝ երկար-աթոռին վրայ, վայելելով իտալական ծովափի բնական զեղեցկութիւնները — հողին, ծառերուն, լեռներուն յայտնութիւնը

ծովային եռօրեայ անապատէ մը ետք —, հանդարտ ջուրերուն վրայէն հսկայ նաւուն սահանքը կարապի մը նման: Երբ զիս տեսաւ, բարձրացաւ եւ ձեռքի շարժումով ու բարձրաձայն զիս կանչեց:

— Եկուր, մռն վիէօ, եկուր: Ապա դարձաւ երիտասարդին. փութով հարցուց:

— Կ'ամուսնանա՞ս արուեստագիտուհիի մը հետ. դուն արուեստագէտ, աղջիկը՝ արուեստագէտ:

Երիտասարդը հազիւ ամօթխած «այո» մը մըմնջեց էր, թեւէն բռնեց, գրեթէ քաշելով ճաշասրահ տարաւ: Աղջկան մայրը նախաճաշ կ'ընէր: Մեր Հայրենակիցը երիտասարդին հետ մօտիկ սեղանի մը նստած, այլեւս «յորդեցաւ», սեղանէ սեղան դովեց երիտասարդը, իր շտեսած աղջկան ճաշակին ներդաշնակութիւնը պոլսահայուն զգայնութեան հետ: Առաջարկեց երիտասարդին՝ սեղանակից ըլլալ կնոջ հետ: Պոլսահայը նստաւ կնոջ սեղանին...: Գրեթէ ամայի, ընդարձակ ճաշասրահին մէջ երկու սրտերու ճակատագիրը կ'որոշուէր մեղրահամ խօսակցութեամբ ու ժպիտներով:

Յանկարծ մեր Հայրենակիցը աթոռէն ցատկեցաւ:

— Օ՛ր լալա մռնվիէօ, փասփորս մոռցեր եմ, դուրս վազեց ճաշասրահէն: Մարդը վերջին վայրկեանին ալ ուզած էր օգտակար ըլլալ հայու բեկորի մը, նախկին պոլսեցիի մը, որ հիմա ծովերու վրայ թափառական է դարձեր հանգիստ ու տուն փնտռելու համար: Հայրենակիցը յուզուած էր, խոռված՝ ի տես անոր վիճակին:

— Ուլան, առաջ ըսէիր նէ, չէ՛ր մը ըլլար:

Այլ բաժանումի ժամը հնչած էր. մարդը հիմա իր անձնական դործը հետապնդելու ելած էր, ձգելով երիտասարդը կնոջ սեղանին, առանց իր ջանքերուն արդիւնքը իմանալու:

*

Վերջին անգամ զինք տեսայ նաւուն ելքի դրան առջեւ, անխօս, բացայայտօրէն սրտատրոփ ու յուզուած: Այս մարդը, որ քանի-քանի անգամներ եկած էր Իտալիա, հիմա էսպէս խռոված կը թուէր լո՛ւռ, երբ նաւը խարսխած էր Նափոլիի քարափին: Պայծառ կիրակի էր, տօնական. թեթեւ

ամպ մը կը մեղմէր ջերմութիւնը իտալական արեւին: Պատմական կոթողներ եւ դղեակներ, գերարդիական շէնքեր ու համեստ տուններ ծածկած էին լեռներու կողերը. միայն վեհասուլն էր մոռայանիստ:

Վստահարար այս տեսարանը չէր որ յուզած էր մեր Հայրենակիցը. ո՛չ ալ զուարթաչեչտ նուագը, որ կը յորդէր հիմա՝ մերձակայ երկու քարափներուն՝ մեր նաւէն անմիջապէս յետոյ խարսխած յունական եւ իտալական նաւերէն: Եւ ո՛չ իսկ այն ծրարներն ու պայուսակները, զորս պիտի տանէր մինչեւ Միլանոյէն ալ անդին, բարձրանալով Իտալիոյ մէկ ծայրէն միւսը, — ի վերջոյ բազմաթիւ անգամներ յաջողած էր, առանց դժուարութեան, քիչ մը մեծ քանակութեամբ «արդիլուած ապրանք անցընել»: Լուռ էր, գունատ՝ մարդը, որ կեանք կը յորդէ, որ յոգնիլ չի գիտեր, կը խօսի ու կը գործէ, եւ իր կենսայորդ գործունէութեամբ կը տիրէ ծովերուն ու ցամաքներուն, ինչպէս չի կրնար տիրապետել Նոր Մարաշի մէկ վաստակաւոր խանութպանը իր թաղին վրայ:

Անկասկած, նաւուն վրայ իր հաստատած նոր ծանօթութիւններն ալ չէին իր յուզումին պատճառը. կը լռէր, որովհետեւ այս բոլոր սոցակները եկած էին միախառնուելու երիտասարդ երաժիշտի պարագային, ի՛ր կիսաւարտ գործին — եթէ նախապէս դիտնար — եւ ցնցած՝ անոր ներաշխարհը: Կբած, ընկճուած կը թուէր ան:

Յանկարծ — պահ մը տեսած էր այս լուսթիւնը — զգաստացաւ եւ անդրադարձաւ որ ելքի դրան՝ կեցած էր իտալացի անդրդուելի ոստիկանը, թիկնեզ երիտասարդը եւ ինք անոր կողքին կծկուած ու լուռ կը կենար: Իր նկարագրին, սկզբունքներուն հակառակ էր ըլլալ մարդ էակի մը մօտ եւ չծանօթանալ անոր:

— Սիւնիոյ մարեշալ, օդը պաղ կը թուի...: Այնուհետեւ, մեր Հայրենակիցը վերադտաւ իր բուն էութիւնը, խօսեցաւ վերի ամպէն եւ վարի ջուրէն, իտալական կերակուրներէն եւ գեղուհիներէն:

Մեր նաւով ճամբորդողներէն առաջինը ինք ոտք դրաւ իտալական հողին վրայ, հակառակ իր ծանր բեռին: Այնուհետեւ խառնուեցաւ մարդկային յորձանքին, հեռացաւ ու կորսուեցաւ հայու այս բեկորը, որ կեանքին ընծայած ամբողջ դրամագլուխը գիտէր առաւելագոյնս օգտագործել: Կորսուեցաւ ան, որովհետեւ դեռ չոգեկառք պիտի առնէր իր

ծրարներով ու պայուսակներով, պիտի բարձրանար մինչև Սերենիօ: Տակաւին ատեան պիտի ներկայանար. իտալացի դատախազին օզի ու ձմերուկ պիտի նուիրէր, պիտի շահէր իր դատը, — տասը հազար լիբանանեան ոսկի:

Երբ իմացած էինք այս դրուագն ալ, որուն բոլոր ծաւրերը խուսափած էր մանրամասնօրէն պարզելէ, զինք ճշդայնա-
ցընելու որոշ շարամտութեամբ, ըսած էինք.

— Հայրենակից, ձեզ բանտ կը նետեն անպայման:

Այլ չէր բարկացած ազնուասիրտ ու գուարթարան այս մարդը, որ միշտ օգտակար ուզած էր ըլլալ բոլորին:




Անանուն, ցուրտ տխրութիւն մը համակեց էութիւնս, երբ մեր նաւը վեր առաւ խարխուղ ու սկսաւ շարունակել իր ճամբան դէպի Մարսէյլ: Խլացնող լուսթեան ընդմէջէն, նա-
ւուն երկար նրբանցքներուն վրայ իր ձայնն էր որ կը լսէի, իր շարժուձևերը կը տեսնէի, հողաթափները քաշքշելով եւ հետաքրքիր աչքերը անդադար աջ ու ձախ պտտցնելով:

Երեկոյեան, երբ՝ ըստ սովորութեան՝ համախմբուե-
ցանք՝ իր շուրջ կազմուած խմբակին անդամներս, երկար-
երկար խօսեցանք իր մասին, յիշելով իր շէշտը, գուարթա-
մտութիւնը, բարութիւնը: Եւ աստղազարդ երկնքին տակ,
ծովային անհուն տափաստաններու վրայ, դեռ եւս կը տես-
նէի ստուերը մեր Հայրենակիցին, որ ձեռքերուն մեծկակ
պայուսակներ, առանց կքելու, կը քալէր դէպի վեր, դէպի
հրախ, Միլանոյէն ալ անդին, կեանքին ետեւէն, շահելու իր
դատը:

Եւ ախուր, սրտախոյզ բան մը ունէր ծովու վրայէն ըն-
թացող ստուերը այս հայուն, անոր՝ որ կ'իշխէ ծովերուն ու
ցամաքներուն:

Ն. Թ.



ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ...

Ա.

Հեղինակը գրասեղանին առջև նստած կը խորհի: Ճկոյթն ու մատնեմատը ծալլած, աջ ձեռքին միւս երեք մատներուն մէջ սեղմուած գրիչով սը գիծեր կը քաշքշէ սպիտակ թուղթի մը վրայ: Չեռադրի ճերմակ թուղթեր կան սեղանին վրայ, գէջ կազմած: Այդ բոլորը կը սպասեն որ հեղինակը սկսի գրել իր նոր մէկ պատմուածքը: Հեղինակը կը խորհի: Ի՞նչ պիտի գրէ, ի՞նչ նիւթ պիտի ընտրէ: Միտքը չաշխատիր, կը մերժէ ընկերակցել փնտռուողի իր ճիւղին: Գիծերով լեցուած թուղթը կը նետէ զամբիւղին մէջ, նոր մաքուր թուղթ մը կը քաշէ իր առջև: Բեռնապէս կը պատահի միշտ նման պարագաներու մէջ, հեղինակը ջղայնուած սեղանին վրայ կը նետէ գրիչը, նոր սիկանոէթ մը կը վառէ ու կը ձայնէ իր կնոջ.

— Արուս, սո՛ւրճ մը... սուրճը չա՛տ...

Պատասխան չստանար, բայց կը լսէ խոհանոցին մէջ բացուող ծորակէ մը հոսող ջուրին, յետոյ սրճամանին մէջ դարձող դոպլին ձայները: Մէկ քանի վայրկեան անցած սենեակէն ներս կը մտնէ Արուս, սուրճի երկու գաւաթներով: Իրեն համար ալ եփեր է, կը խորհի Հեղինակը, կը բարկանայ, բայց ձայն չի հաներ: Գիտէ, սակայն, որ զօրաւոր սուրճն ալ անբաւարար պիտի ըլլայ հիմա աշխատանքի մղելու համար իր թմրած միտքը: Եթէ առանձին խմէր սուրճը, թերեւս յաջողէր բաներ մը ընել: Արուս, սակայն, հանդիստ տեղաւորուած է արդէն բազկաթոռին վրայ ու սկսած է լսեցնել իր Փըրք-Փըրքները...

— Մա՛րդս, սիկանոէթ մը տուր... յոգնած եմ...:

Այդ էր պակաս: Արուս որոշած էր ուրեմն բազկաթոռին մէջ մնալ երկար ատեն, գոնէ մինչեւ որ ամբողջովին մոխրի վերածուէր սիկանոէթը: Չէ՛, այս պայմաններուն մէջ աւելորդ էր խորհիլ աշխատելու, գրելու մասին: Մանաւանդ երբ չէր գիտեր թէ ի՞նչ, ի՞նչի մասին պիտի գրէր: Սիկանոէթ մը երկարեց Արուսին:

— Չե՞ս վառեր, ձագուկս...

Ինչպէս չէ, պիտի վառէր ալ անշուշտ: Բարձրացաւ աթոռէն ու փնայ վառել իր կնոջ սիկանոէթը: Վերադարձաւ գրասեղանին առջև եւ երկու արեւորով սկսաւ սեղմել գլուխը: Չեւ կ'ընէր պարզապէս:

Ձարդուփչուր ալ ընէր, բան դուրս պիտի չգար իր գլուխէն այդ օրը :
— Ինչո՞ւ սրտնեղած ես ձագուկս . . . :

Արուս ոտքի ելլելով մօտեցած էր իր ամուսնոյն : Հեղինակը իր ձակտին վրայ գգաց կնոջ մատներուն ջերմ ու հաճելի շոյանքը :

— Ոչինչ, բան չեմ կրնար գրել, — պատասխանեց ան գլուխը թօթուելով, խուսափելու համար իր կնոջ մատներուն հպումէն :

— Բան չես կրնար գրել, — ըսաւ Արուս մեղմօրէն, շարունակելով իր մատներուն խաղը հեղինակ ամուսնոյն ձակտին վրայ — որովհետեւ չես գիտեր թէ ի՞նչի մասին պիտի գրես . . .

— Այո՛, այդպէս է, — պատասխանեց հեղինակը կէս բարկացած, կէս զարմացած — յետո՞յ . . .

— Յետոյ սա՛, ճանիկս, որ նիւթերդ սպառած են այլեւս . . . : Տարիներէ ի վեր գրեցիր անդործութեան, չքաւորութեան, հայրենազրկութեան, ընկերային անարդարութեան, դասակարգային պայքարի եւ ի՞նչ դիտեամ դեռ . . . մոտցար սակայն ամենակարեւոր նիւթը լա՛ւ պատմուածքի մը համար . . .

— Եւ ի՞նչ է եղեր այդ ամենակարեւոր նիւթը . . . — հարցուց Հեղինակը հեղնանքով :

— Այդ ամենակարեւոր ու նաեւ ամենագեղեցիկ նիւթը պատմուածքի մը համար, երջանկութիւնն է, ճանի՛կս . . .

— Իսկ ես երջանկութիւնը դո՞ւրս կը ձգեմ ուրեմն պատմուածքներէս, երբ կը գրեմ ընկերային հաւասարութեան, դասակարգային պայքարի եւ այլնի մասին, ըսաւ Հեղինակը արհամարհական շեշտով :

— Ո՛չ, անշուշտ ո՛չ, բայց քու նիւթերդ քու շրջապատի մարդիկը միայն քեզ նմանները կը շահապրդուեն . . .

— Ի՞նչ կ'ուզես, վերջապէ՛ս, — պոռաց Հեղինակը ոտքի ելլելով —, իմ նիւթերս ոչ թէ իմ շրջապատի մարդոցս միայն կը վերաբերին, ինչպէս դուն կ'ըսես, այլ, եթէ ոչ ամէնուն, գէթ մարդկութեան մեծ մասին . . .

— Կրնայ ըլլալ, ճանիկս, — Արուս մօտեցաւ, իր երկու թեւերը բոյրեց ամուսնոյն մէջքին շուրջ ու քաշեց դէպի իրեն —, ճիշդ են թերեւս ոոյր ըսածներդ, բայց պայման չէ որ միշտ ու միշտ գրես նոյն նիւթին մասին, նոյնատիպ հերոսներով, նոյնիմաստ բովանդակութեամբ . . . Ի վերջոյ կը ձանձրացնես ընթերցողներդ ու կը ձանձրանաս դուն ինքդ այլ . . .

— Կ'ուզես թերեւս, յարդելի տիկին, — ըսաւ Հեղինակը մեղմօրէն խուսափելով իր կնոջ մարմնին ջերմութենէն —, որ գրեմ ամուսնական կեանքի, արդուզարդի, սիրաբանութեան, անհաւատարմութեան եւ կամ Հրատ մոյրակի մասին . . .

— Երջանկութեան մասին գրէ, ճանիկս, երջանկութեան մասին պարզապէս . . . գրէ, սիրոյ մասին, գրէ երազներու մասին, գրէ՛՛ բա-

բեկամուլթեան մասին... հոգ չէ, մէկ անգամուան համար զանց առնելով պայքարն ու կռիւը, անարդարութիւնը, եւայլն, եւայլն... զբէ՛ր ուր անոնց մասին, որոնք ո՛չ թէ Հրատին, այլ այս երկրագունտին վրայ, մեր ընկերութեան մէջ կ'ապրին եւ սակայն երջանիկ են, երջանիկ... :

Հեղինակը այս անգամ բիրտ շարժումով մը մէկդի հրեց իր կինը ու զնաց նստիլ աթոռին վրայ, գրասեղանին առջեւ :

— Կը բաւէ, Արո՛ւս, զիս առանձին ձգէ, կը խնդրե՛մ... :

— Ձե՞ս ուղեր որ շարունակեմ... :

— Սըտեղէն դո՛ւրս ելիք, բսի... :

— Լա՛ւ, լա՛ւ, մի՛ ճղայնանար... : Նոր պատմութեան զբէ երջանկութեան մասին, ճանի՛կս, երջանկութեան... :

Բ .

Սոչոր մոխրամանր լեցուած է սիկաւէթի մնացորդներով, սենեակը՝ ծուխով : Հեղինակը գլուխը ափերուն մէջ առած, գրասեղանին վրայ հակած կը մնայ միշտ : Ձինքը այդ վիճակին մէջ տեսնողը կրնայ խորհիլ թէ Հեղինակը կը քնանայ : Բայց, ո՛չ, կը հաղայ ան ահա՛, չոր, կոկորդ պատռտող, աչքեր արցունքոտեցնող հագով մը : Յետոյ, սակայն, կրկին կ'անշարժանայ ան : Կարծես թէ քիչ առաջ հաղացողը, գլուխը վեր-վար, աջ-ձախ նետողը ինք չըլլար : Ձի տեսներ իր շուրջը, աչքերը փակ են : Կը բացուին երբեմն իր թարթիչները, կրկին բան չի տեսներ, ծուխ է, մո՛ւթ : Հեղինակը կը սկսի բաց-խփել իր աչքերը, նո՛յնն է, ծուխ ու մութ : Սենեակին միակ պատուհանն իսկ անտեսանելի կը մնայ : Վարագոյրը բա՞ց է թէ փակ : Ո՞վ պիտի ստուգէ, ո՛չ ինք : Աթոռին հետ մէկ մարմին կազմած է ան. չի կրնար շարժիլ : Կը շարունակէ սակայն իր արտեւանունքի խաղը : Կը բացուին, կը դոցուին, մութ է ու ծուխ սենեակին մէջ : Հիմա փակ են ահա՛ իր աչքերը, մութ է : կը բացուին՝ ծուխ է : Փակ՝ մութ, կը բացուին... դէմը կեցած է վայելուչ երիտասարդ մը : Աս ի՞նչ է : Կը դոցէ իր աչքերը, կը բանայ, դէմը կանդնած է միշտ վայելուչ, դեղադէմ երիտասարդ մը, որ կը ժպտի հիմա, իր երկու ալետերուն վրայ մէյ մէկ փոսիկ դոյաղներով : «Կ'երագեմ», կը խորհի Հեղինակը : Կախարդանքը վանելու համար կը յաջողի վերջապէս գլուխը թօթուել, աջ ձեւքով ճմուռել իր արտեւանունքը :

Կը բանայ աչքերը, երիտասարդը հոն է միշտ, աւելի մօտեցած իրեն :

Ո՞վ էք, ի՞նչ կ'ուզէք, — կը հարցնէ Հեղինակը փափախով, կարծես թէ ինքզինքին ուղղած ըլլայ հարցումը : Իրապէս ալ այդպէս է : Ինքզինքին հետ կը խօսի Հեղինակը, ինքզինքը համոզելու համար՝ որ կ'երագէ, որ սենեակին մէջ իրմէ դատ մարդ գոյութիւն չունի :

Հայ, փարիզահայ՝ երիտասարդ մըն եմ... Ձեր մօտ եկայ որպէսզի ձեր նոր պատմութեան հերոսը դարձնէք զիս... :

Կը յսէ Հեղինակը : Ձայնը իր ձայնը չէ, իր կոկորդէն դուրս չէ ելած : Ձեն յարժայ՝ իր շրթունքներն իսկ : Ուրեմն, չերագեր : Իր կիներ, Արուսն է, անպայման, որ այդ երիտասարդը, — իր պատմութեան

ներէն դժգոհ ընթերցող մը թերեւս —, զրկած է հող, շփոթեցնելու համար զինքը: Կ'ուզէ ապահովուիլ: Կը կրկնէ հարցումը, այս անգամ ձայնը բարձրացնելով:

— Ո՞վ էք, պարոն, ի՞նչ կ'ուզէք...

— Կը կոչուիմ Բարի Սիրունեան: Բարեկեցիկ ընտանիքի մը մէկ հատիկ զաւակն եմ: Բարձրագոյն ուսում ստացած, էնժէներ: Առողջ եմ մարմնով, զուարթ եմ բնաւորութեամբ, լաւատես եմ ու երջանիկ, կատարելապէս. մէկ քանի ամիսէն կ'ամուսնանամ գեղեցիկ ու պարկեշտ հայ օրիորդի մը հետ, նո'յնպէս էնժէներ... Ու կ'ուզեմ որ ձեր նոր պատմութեան հերոսը դարձնէք զիս... Ի՞նչ կը խորհիք:

Հեղինակը, կը լսէ, բայց չի հաւատար տակաւին իր լսածին: «Ինքզինքի՞դ եկուր», սաստով կոչ կ'ընէ իր ուղեկին, որպէսզի իր աչքերուն տընեւէն կարենայ վանել ամբողջ հասակով իր դէմը ցցուող գեղեցիկ ու վայելուչ, շարժող, խօսող, ապրող այդ պատկերը: Չի յաջողիր: «Լա՛ւ, երազ չէ, թերեւս...», կը խորհի ան ու յանկարծ, կ'որոշէ, երազ կամ իրականութիւն, մասնակցիլ խաղին...

— Լա՛ւ, լա՛ւ... կ'ընդունիմ մասնակցիլ խաղին... Ուրեմն կ'ուզէք իմ նոր պատմութեան հերոսը դառնալ... Կը խոստովանիմ որ ես ալ հերոս մը կը փնտռէի, երջանիկ հերոս մը... բայց...

— Բայց ի՞նչ, ջինջ ձայնով հարցուց Բարի Սիրունեան, ուրախ արտայայտութեամբ մը:

— Բայց սա՛, որ դուք ինձի պիտի պատմէք միայն բարձր ու զուարթ կեանքի, բարեկամութեան ու սիրոյ, անամպ երկնքի ու խաղաղ ծովու. երփնեփանց ծագիկներու եւ թռչուններու զայլայլին, մէկ խօսքով՝ երջանութեան մասին միայն...:

Յանկարծ սենեակը լեզուեցաւ ականջ խլացնող խնդուքով մը: Բարի Սիրունեանն էր որ կը յայտնէր իր հաւանութիւնը այդպէս: Ազկէց դիւրեն ի՞նչ կրնայ ըլլալ: Երջանիկ ծնունդ, մանկութիւն ու պատանեկութիւն մը ունեցած, երջանիկ երիտասարդ մըն էր այսօր, հաստատ բաւեռով եր րառաջանար հեշտ ու խոստմնալից կեանքի մը ճանապարհին միայլէն դէպի երջանութիւն... դէպի երջանիկ ապագան...:

Լա՛ւ: Հեղինակը գոհիք ձեռք առաւ, թուղթ մը քաշեց, խնամքով գրեց իր նոր պատմութեան խորագիրը՝ ԵՐՁԱՆԿՈՒԹԻՒՆ, ու սկսաւ պատմել Բարի Սիրունեանի կեանքը...:

Հեղինակը եւ իր հերոսը դէմ դէմի նստած են դրասեղանին առջեւ: Պատմութեան Գ. ԲՈՒՆԻՍ ԵՍԿԱԾ Է զՐՈՒԼԻ: Հերոսը կը պատմէ Հեղինակը եւ սե՛. «Ի՞նչ աւ, ի՞նչ դիւրին աշխատանք» կը խորհի Հեղինակը. ճեմակ թուղթերուն միայն անցնելով Սիրունեանի կեանքին մէկ նոր երջանիկ պատահարը: Այո՛, Հերոսը ամիսէ մը ի վեր ամուսնացած է արուեստի իր թիւրիթիին հետ ու որպէս էնժէներ միասին կ'աշխատեն մեծ հիմնարկութեան մը մէջ: Տակաւին առանձին բնակարան չունեն, կ'ապրին իր կնոջ ծնողքին տանը մէջ, բայց ոչինչ, լա՛ւ, յատ աւ կը շահին երկուքն ալ եւ մէկ-քանի տարեկն կրնան գնել ընդարձակ տնակաբաժին մը, Փարսիի գեղեցիկ թաղերէն միոյն մէջ: Երջանիկ է Հերոսը... կաթողին կը սիրէ իր կինը, կը

սիրուի իր կնոջմէն... կը սիրեն զիրար, անկեղծ ու անչահախնդիր սիրով, գլխազիր «Սէր»ով:

— Ուրեմն ոչ մէկ ամպ գոյութիւն ունի նորապակ ամոլիդ կեանքի երկնակամարին վրայ, ո'չ մէկ տարակարծութիւն ձեր միջեւ, — հարցուց Հեղինակը դաւազիրի մը երկչոտ արտայայտութեամբ:

— Ո'չ մէկ, ո'չ մէկ... — պատասխանեց Բարի Սիրունեան, լիահագագ քրքիջով մը:

— Լա՛ւ, շա՛տ լաւ, պատասխանեց Հեղինակը, որ սկսած էր ձանձրանալ այլեւս մեռեալ ծովու մը նման անյոյզ ու հարթ այդ միօրինակութենէն: Որպէս պարտաճանաչ հեղինակ շարունակեց սակայն սպիտակ թուղթերը լեցնել իր հերոսին պատմութիւնովը:

Անցան շարաթներ, յետոյ ամիսներ: Սիրունեան չէր երեւցած ատենէ մը ի վեր:

Գ.

— Ո՞ւր մնացիք... Ինչո՞ւ չերեւցաք երկար ատենէ ի վեր... Կը յուսամ գէշ բան մը չպատահեցաւ...:

— Ո՛չ, ո՛չ, — պատասխանեց Հերոսը թոյլ ձայնով մը:

Հեղինակին ուշադրութենէն չվրիպեցաւ շեշտին ու ձայնին այդ հակասութիւնը: «Գէշ բան մը պատահած է անպայման», խորհեցաւ ան: Ոչ միայն կը յուսար որ բան մը պատահէր, այլ կը սպասէր այդ պատահարին, կ'ուզէր որ պատահէր գէշ բան մը...

— Ուրեմն ինչո՞ւ չերեւցաք... Հիւանդացա՞ք... Ժիւլիէ՞թը հիւանդացաւ արդեօք թէ փոքրիկներէն մին:

Հերոսը իր գլուխը երերցուց: Ո՛չ մին, ոչ միւսները, ըսել ուզեց: Հեղինակը, սակայն, ուրախութեամբ հաստատեց որ Բարի Սիրունեան զգալիօրէն նիհարցած էր, զէմքը գունատած: Կը ժպտէր միշտ, բայց աչքերը կորսնցուցած էին իրենց նախկին փայլը: Ու յանկարծ, Հեղինակը նշմարեց նաեւ որ Հերոսին փողկապը լաւ չէր հանգուցուած...:

— Կա՛րճ խօսինք... միշտ երջանիկ էք, չէ՞... — հարոուց Հեղինակը մաքրալէլական ժպիտով մը — կրնա՞նք շարունակել մեր պատմուածքը...:

— Անշո՛ւշտ, — պատասխանեց Բարի Սիրունեան կորովի արտայայտութեամբ: Մեր տան, մեր ընտանիքին մէջ ամէն էն հարուստ է: Կ'աշխատինք միշտ այր ու կին, փոքրիկը քաջաոգի է ու մէկ քանի ամիսէն կը փոխադրուինք մեր նոր յարկաբաժինը...:

Բարի Սիրունեան վերագտած բոլոր կը թուէր իր ինքնամատահ, անհոգ երեւոյթը: Բայց ինչի՞ս հեղինակը պիտի բոլոր մեր Հեղինակը, եթէ արտաքին երեւոյթին ներքեւ չտեսնէր թաճուած թախիծը:

— Անկեղծ բոլանք, Բարի՛, ըսաւ ան յանկարծ ձանր բարձրացնելով ու իր ակնարկը շեշտակի սեւեռելով Հերոսին աճեռուն —, վստահ եմ, կը թաքցնես ինձմէ ճշմարտութիւնը... չեմ գիտեր ե՞նչ, բայց բան մը կայ որ կը կաղայ... բան մը կայ որ կը ստուերոտէ եր-

չանկուժիւնդ, չէ՞... Պայմանաւորուած էինք որ միշտ ճշմարտութիւնը պիտի պատմէիր... խօսէ՛, ուրեմն...:

— Օ՛հ, կարեւոր բան չէ, ինձ հետ, կնոջս հետ, ընտանիքիս հետ կապ ունեցող խնդիր մը չէ որ... Հեմ գիտեր նոյնիսկ թէ կ'արժէ՞ խօսիլ այդ մասին թէ ոչ...:

— Այ միայն կ'արժէ, այլեւ անհրաժեշտ է խօսիլ այն ամէն ինչի մասին որ կը հետաքրքրէ քեզ, նոյնիսկ ամենափոքր չափով, — պատասխանեց Հեղինակը չոր շեշտով մը:

Բայց Սիրունեանի դէմքին վրայ վարանումի երկչոտ արտայայտութիւն մը պարզուեցաւ: Չէր ուզեր խօսիլ:

— Ինչպէս կեանքի, գրականութեան մէջ ալ անկեղծութեամբ է միայն որ կարելի կը դառնայ լաւ գործեր արտագրել: Հաւաքականութեան մը, ընտանիքի մը երջանկուժիւնը խախտու հիմերու վրայ դրուած կ'ըլլայ երբ անկեղծութիւնը կը պակսի: Նոյնն է մեր պարագան ալ. ո՛չ մէկ գաղտնիք, — նոյնիսկ անկարեւոր — պէտք է գոյութիւն ունենայ հեղինակին ու հերոսին միջեւ, — ըսաւ Հեղինակը, վարդապետական համոզիչ շեշտ մը տալով այս անգամ իր ձայնին:

— Բայց իսկապէս անկարեւոր է հարցը, — պատասխանեց Բարի Սիրունեան բռնազբօսիկ ժպիտով մը: — Ահա՛ թէ ինչ է պատահածը:

Իսկապէս ալ անկարեւոր է եղեր հարցը, խորհեցաւ Հեղինակը: Բարի Սիրունեանի պաշտօնավարած հիմնարկութեան մօտ երեք հարիւր գործաւորները գործադուլ հռչակեր են երկու շաբաթէ ի վեր... Հերոսին ի՞նչ հոգը, Հեղինակին ի՞նչ... Հարցը ոչ առաջինին հետ կապ ունի, ոչ ալ երկրորդին, գոնէ այս պատմուածքին մէջ: Աւելին ըսենք. Հերոսը տարիներով այդ հիմնարկութեան մէջ աշխատելով հանդերձ օր մը օրանց չէր հետաքրքրուած իսկ թէ իրենց գրասենեակներէն, աշխատանոցներէն դուրս հարիւրաւոր բանուորներ կ'աշխատէին նոյն հիմնարկութեան մէջ:

— Ի՞նչ է գործադուլին պատճառը, — հարցուց Հեղինակը անտարբեր երեւոյթով մը, բան մը ըսած ըլլալու համար պարզապէս:

— Աշխատավարձերը... Հեղինակը Բարի Սիրունեանի դէմքին վրայ թախծոտ արտայայտութիւն մը տեսաւ կրկին: Ուզեց քրքրել հարցր ու հարցուց.

— Անբաւարա՞ր են իսկապէս աշխատավարձերը:

— Անբաւարարն ալ խօսք է, անմարդկային, — գրեթէ պոռալով պատասխանեց Հերոսը:

— Ըսիք սակայն որ ձեզի հետ կապ չունի հարցը, չէ՞...:

— Այո՛, այո՛, կապ չունի... բայց որոշեցինք միջամտել տնօրինութեան մօտ, պարզապէս բարեկամական միջամտութիւն մը, ուրիշ ոչինչ... Յետեւութիւն...:

Դ.

Հեղինակը եւ Բարի Սիրունեան դէմ դէմի նստած են կրկին գրասենեակին շուրջ: Սենեակը լեցուած է ծուխով ու մուխով: Նոյն սենեակին մէջ նոյն գրասենեակն է, նոյն աթոռներով, բայց չըջուած են

դերերը: Հերոսը իր ձեռքերուն մէջ առած ըլլալ կը թուի պատմուածքին դեկը: Պարզ դերակատար մը, կրաւորական խամաճիկ մը չէ ան այլեւս, այլ ապրող, գործող ու գործողութիւնները ղեկավարող ղէմք մը: Հեղինակն է որ այժմ աչքերը կը փախցնէ ասդին-անդին, կը փորձէ լուսափել իր Հերոսին ակնարկէն: Մինչդեռ ինք էր որ ուզած, պահանջած էր այդ հանդիպումը: Պահանջած էր տիրականութեն, բարկացած, գայրացած:

Եղելութեան տեղեկացած էր ան նոյն առաւօտուն իսկ, օրաթերթերէն: Երբ բոլորին կարծիքով վերջ պիտի դառնէր այլեւս երկու ամիսէ ի վեր տեւող գործադուլը, երբ բոլորը կը կարծէին թէ տեղի պիտի տային այլեւս բանուորները ճարահատ, ահա՛ յանկարծ, հիմնարկութեան պաշտօնեաներն ու մասնագէտներն ալ — այս վերջիններուն մէջ Բարի Սիրունեանն ալ անշուշտ — գործադուլ կը յայտարարէին, պահանջելով որ տնօրէնութիւնը գոհացում տար աշխատաւորներու արդար պահանջներուն:

Հեղինակը բարկացած, գայրացած իր մօտ կանչած էր Բարի Սիրունեանը հաշիւ պահանջելու, դատապարտելու համար զայն որպէս անպարտաճանաչ, որպէս խոստմնադրուժ: Կարծած էր որ Հերոսը սենեակէն ներս պիտի մտնէր դիւրիկոր, մեղապարտի երեւոյթով: Հակառակը եղաւ: Բարի Սիրունեանն ներս մտաւ ժպտուն, հանդարտ, ինքնավստահ երեւոյթով մը: Ո՛չ թէ որպէս ամբաստանեալ, այլ որպէս դատախազ:

— Այո՛, յարգելի պարոն Հեղինակ, այդպէս ալ եղաւ... մենք, մասնագէտներս ալ գործադուլ յայտարարեցինք ձիջդ այն պահուն, երբ գործաւորները տեղի պիտի տային...

— Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, քանի որ հարցը ձեզի, մասնագէտներուդ հետ կապ չունէր, ձեր աշխատավարձերը չէին խնդրոյ առարկայ...:

— Ինչպէս տան մը, ինչպէս ընտանիքի մը, նոյնպէս եւ ընկերութեան մը մէջ չկայ հարց մը որ բոլոր անդամներուն չվերաբերի: Նոյն տան, նոյն ընտանիքին, նոյն ընկերութեան մէջ երբ անդամներէն մէկը կամ միւսը դժբախտ է, մնացեալները չեն կրնար երջանիկ ըլլալ...:

— Ուրե՞մն...

— Ուրեմն որոշած ենք պայքարել մինչեւ որ յաղթանակենք:

Հեղինակը ջղայնուած, իր առջեւ քաշեց պատմուածքին բոլոր ձեռագիրները ու զանոնք սիւնեց գրասեղանին վրայ:

— Ի՞նչ պիտի ընեմ ես այս բոլորը հիմա, — հարցուց Հեղինակը յուսահատ ձեւով մը: — Չէ՞ որ խոստացած էիր ինձի պատմել միայն երջանկութեան մասին... իսկ դուն հիմա կը նետուիս կռիւի, պայքարի մէջ... կիսաւարտ թողում պատմուածքս...:

— Կիսաւարտ կը թողուս կամ կ'աւարտես, այդ քու գործդ է, յարգելի պարոն Հեղինակ, դիտցիր միայն որ այժմ իմ երջանկութիւնս այս պայքարին մէջ է... այս պայքարին մէջ միայն...:

Ա. Ա.

DANIEL VAROUJAN

Son chant est une eau claire, un feu noir,
un œil de fauve.

On dit qu'il était gauche.

Son chant est droit
comme le couteau qui prolonge le bras.

Il a chanté le soc, l'épi, le raisin,
la femme ruiselante et l'homme qui s'abreuve.
Il est mort comme un Arménien.

Il a dit les labours, le vannage, les vendanges,
il s'est plié aux lois de la semence.
Il est mort dépouillé, déchiré par les chiens.

Son chant est «fort et pur comme le vin».
Il est mort, il est mort, il demeure vivant
comme la terre, le soleil, «le sel de l'océan».

ARMENIE

(1915 - 1965)

«... dans le marbre vierge de ta race vénérable
nous taillerons une aurore nouvelle !»

Daniel VAROUJAN

Giron des fleuves, éperon, verge du monde,
socle de l'Arche, mémoire du Déluge, roseau pourpre,
prunelle solaire, langue rocheuse, brûlée,
rauques labours, et ce fut l'Ourartou !

Les nids d'aigles répondirent aux rumeurs des vergers :
 dénouant leur ceinture, des villes neuves
 mîries dans les méandres
 offraient aux caravanes la courbe de leurs hanches...
 Par la tiare d'Ardachès ! par la robe de Tigiane !
 par le poing d'Ardavast ;
 tend l'oreille !
 ouvre l'œil !
 voici l'autre versant.
 La croix prenant racine retenait le terreau,
 ses branches s'ouvraient aux galaxies,
 ciel et terre formaient un même tissu,
 Mesrop forgeait une écriture,
 nulle couture entre le corps et l'âme...
 Par la voix de Meher !
 par l'oncle de David ! par la ruse de Vahan-le-Loup !
 cuivre, or, soufre, granit,
 gangitide, terreur des vipères,
 qui que tu sois, consume ton restant d'huile
 au fond du gouffre,
 (on ne sombre que pour mieux surgir !)
 attache-t-on à la toison du premier cri,
 afflue vers les hautes vallées,
 confie ton sort aux sources vertigineuses,
 aux parfums de l'amome, («graine de paradis»),
 ruissellement de perdrix, annales giboyeuses,
 épouse trop belle, trop féconde, jardin par excellence,
 éminence, flot perdu, génisse
 rongée par les vents du désert,
 Sabre-Lumière planté dans une nuit d'hiver,
 corolle de Sassoun, saccagée, refléurie, vendanges,
 roseraies, souci des troubadours,
 terre d'amour, terre battue, cornue brisée,
 cendre des doléances, tumulte des panoplies,
 aubes fourbies, rugissements
 que le silence attise,
 tour calcinée, femme éventrée,

enfant noyé, semailles
 nocturnes, colline rouge...
 Que de grains amassés dans la grange commune !
 que de sang dans les caves !
 Van, Erzéroum, Sassoun, Ani, crâne
 troué, tison,
 vingt-quatre avril..., les prisons
 se soulèrent, les ténèbres se gorgèrent,
 puis soudain elles vomirent une bouillie fumante,
 une lave silencieuse qui dans l'espace de pierre
 allait rejoindre des ossements déjà blanchis :
 les passereaux s'enfuirent,
 les truites gagnèrent les profondeurs...
 Berceau de Haïg ! arbre de saint Grégoire !
 repaire de David !
 brasier rebelle de Moussa-Dagh !
 le poulain Djalali effleura l'Ararat,
 un souffle aigu démusela les lions de l'Ourartou,
 floraison du bois mort, remous dans les décombres,
 pour une lampe étouffée mille torches s'allument !
 la faux change de mains...
 Revenez, laboureurs, effeuilleuses, vigneron,
 avec pour seul bagage la vigueur de vos reins,
 la forge de vos entrailles !
 la charrue vous attend, les brantes sont lavées,
 le taureau gronde, les bornes brillent,
 prairies,
 maison d'Aram,
 sonnailles de Lori, soleil grenu,
 Araxe vivandière,
 lune de miel, chemin, chevanche des tonneaux,
 ouvre l'œil, tend l'oreille,
 reviens !
 voici le pain, le lait,
 le vin nouveau de l'Arménie.
 Reviens ! Reviens ! Reviens !

*

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

(1712 - 1795)

Աշխարհքս՝ մէ փաննարա է, — քաղերումէն պեգարիլ իմ.
Մըտիկ տըւողն կու խոցուի, — տաղերումէն պեգարիլ իմ.
Նրէկ լաւ էր կանց վուր էս օր, — վաղերումէն պեգարիլ իմ.
Մարդ համաշա մէկ չի ըրի, — խաղերումէն պեգարիլ իմ:

Տովլաթըն իյթիպար չունէ, յեփ ոք կ'երթայ իր շըֆարով,
Լաւ մարդն էն է, գլուխըն պահէ աշխարումըս իյթիպարով,
Աշխարքս մեգ մնալու չէ, իմաստնասիրաց խապարով, —
Գ'ուզիմ թռչի (1) պլպուլի պէս, — բաղերումէն պեգարիլ իմ:

Ո՞վ կոսե՛ քէ ես կու ապրիմ առուտումէն ինչրու մութըն,
Աստուծու ձեռումըն հիշտ ե՛ մարդու աշխարհ ելումուտըն.
Ղուրթըս ենտու քամիա չէ գնում՝ շատացել է խալիսի սուտըն,
Քսանըն մե դուլ չ'ին պահի, — աղերումէն պեգարիլ իմ:

Աշխարքս մեգ մնալու չ'է, քանի նըստինք գող ու սաթին,
Հում կաթընկեր Աթամի գաթ, նալաթ ըրի էդ քու բաթին,
Համփիրուքիւնըս հատիլ է, չ'իմ դիմանում խալիսի գաթին,
Դոստերըս՝ դուշման են դարի, — յաղերումէն պեգարիլ իմ:

Սայաթ-Նովէն ասաց՝ դարտըս կանց մէ քարըն շատացիլ է.
Զ'ունիմ վաղւան քաղցըր փառքս, հիմի դառըն շատացիլ է.
Պլպուլի պէս էնտուր կուլամ՝ վարդիս խարըն շատացիլ է.
Զ'ին թողնում վախտին բացելու, — քաղերումէն պեգարիլ իմ:

SAYAT-NOVA

(1712 - 1795)

CE sacré monde est une fenêtre; de mes quartiers j'en ai assez !
Qui les regarde est embroché; de mes blessures j'en ai assez !
Hier valait mieux qu'aujourd'hui; de l'avenir j'en ai assez !
L'homme n'est jamais toujours le même; de cette musique
j'en ai assez !

Perdra tout son crédit le Prince, en se vautrant dans la débauche !
Est bon celui qui saura vivre avec honneur dans cette embauche !
Le sage le dit : le monde n'est pas tout enfermé dans notre sacoche.
Je veux voler comme rossignol, de ces serres chaudes j'en ai assez !


Qui pourrait dire qu'il est en vie du jour levé jusqu'à la nuit,
Pour le Bon Dieu ce n'est qu'un jeu que l'homme arrive
et qu'il soit cuit !

La droiture n'est plus valable face aux mensonges de neuf sur huit.
Un seul esclave pour vingt-cinq Princes ! de ces Seigneurs j'en ai
assez !...

Garderons pas le monde pour nous, en faisant fête nuit et jour,
Fils d'Adam, buveur de lait cru ! la peste emporte tes amours !
Ma patience arrive à son bout, n'accepte plus le rire des Cours,
Ennemis sont tous les amis, d'espoirs trompés, j'en ai assez !...

Sayat Nova a dit : ma peine dépasse le monde, est débordée,
Ma gloire ancienne évanouie, mon amertume est débordée,
Je pleure plus que le rossignol; de fautes, la rose est débordée,
Elle ne fleurit plus sur la terre, de ces récoltes, j'en ai assez !...

(Traduction de Victor GARDON)



Ornements extérieurs de l'Eglise d'Akhtamar (Xe siècle) Arménie

Աղքամարի եկեղեցւոյ արտաքին փանդակները

(Photographe de Victor GARDON)

PROPHÉTIES,
MATHÉMATIQUES,
POÉSIE

A première vue et superficiellement on rencontre pas mal d'individus qui sont à l'image des personnages des romans de Françoise Sagan, au comportement fait d'emballement on ne sait pourquoi et d'ennui surtout. C'est une fine observatrice d'un monde de demi-oisifs et restés à l'âge de l'enfant. Mais il n'y a heureusement pas que cela dans la vie. Des visages détonnent parmi les autres, des visages restent par ce rayonnement unique qui a marqué ceux qui les ont approchés, par leur exemple si profondément humain, par la foi qu'ils ont eue en eux et ce pourquoi ils ont œuvré.

Tant de regards passent et soudain l'un reste, s'imprime profondément dans le temps et les années de notre vie. Il nous souvient de cette rencontre de Charles Lagrange, en juin 1925. Devant une brillante assemblée, il exposait sa fameuse théorie des cycles et les nombres se succédaient par vagues. Charles Lagrange parlait à un auditoire de professeurs, d'hommes de sciences, et, devant cette vue un peu prophétique de « la loi de l'histoire » que développait cet homme qui prenait figure d'un prophète, de temps à autre un léger sourire sceptique parcourait l'assistance. Cette rencontre fut déterminante et l'écoute de cette théorie nouvelle plaisait à notre besoin de poésie, de surnaturel, de vue d'ensemble sur le destin et l'évolution de l'humanité. Ces paroles se sont vérifiées au cours des grands événements. L'auteur de la « Mathématique de l'Histoire » voyait juste et vrai, et dans ses nombres et ses lois si proches de la poésie, en fait hautement philosophiques, nous retrouvions l'avertissement des grands initiés, ces prophètes qui ont photographié dans le verbe bien avant l'heure ce que vérifie et réalise notre actualité. Ces voix-là dès l'origine des temps dans un style, modèle des classiques, ont longtemps été considérées comme celles d'imaginatifs. Pesées avec le recul, leurs paroles ont été celles qui ont dit juste et donné aux temps ces nombres qui les ont divisés selon la prévision. A ces prophètes ont répondu en écho nos savants des temps modernes.

La civilisation est revenu à son point de départ en la personne du retour de Juda dans la terre de tous. La plus grande des prophéties s'est réalisée et les autres aussi. Nous verrons le cosmos constellé de sauterelles d'acier. Le génie d'un Charles Lagrange et de son école est d'avoir trouvé la clef proposée déjà par un Daniel et de nous avoir légué ces pages qui sont « La Mathématique de l'Histoire ». Ce qui est écrit sur le sol et dans le livre (la Bible) l'est dans la pierre et se retrouve dans le ciel, avec les mêmes nombres. Il y a une loi de l'histoire, loi des peuples, irréversible dans son magnétisme et l'homme dans ses grandes réalisations, dans son intelligence bénéfique ou maléfique la joue et la vérifie. Voilà le déterminisme qui ne nous empêche pas de constater son mécanisme dans ses rigueurs où nous sommes si petits, si ballottés et si seuls devant le destin éternel.

La poésie des grands prophètes, celle des grands mathématiciens, a été autre chose qu'un alignement de mots ; mais bien une perception, souvent intuitive, de cette marche dans laquelle nous sommes tous entraînés, avec des instants de lueur. Eux ont eu la foi et la foi est vie.



Jacques PREVERT

ՊԱՏԵՐԱԶՄ

Կտրում էք
 Տխմարներ
 Կտրում էք
 Զահեղ ծառերն անտառի հին կացնով
 Սպանում էք
 Կտրում էք
 Տխմարներ
 Կտրում էք
 Բայց հին ծառերն անտառի փտած արմատով
 Սարքովի սաղարթով
 Պահում էք
 Եւ ազդարարում
 Ծառերը Չարի եւ Բարու
 Ծառերը Յաղթանակի
 Ծառերը ազատութեան
 Եւ անապատ անտառից զարչահոտ է փչում
 Թռչուններն են չվում
 Բայց դուք մնում էք քայլերդ ասելու
 Դուք մնում էք այդտեղ տխմարներ
 Տխմարներ
 Քայլերդ ասելու եւ դոփելու:

ԱՐԻԻՆ ԵՒ ՓԵՏՈՒՐ

Յուշերիս թռչուն
 Իմ արիւնը չէր որ հոսեց
 Այլ քոնը
 Յուշերիս թռչուն
 Ես ափս փակեցի
 Յուշերիս թռչուն
 Դու գեղեցիկ ու թեւաբեկ հաւք
 Դու չես վերադառնայ
 Ափիս մէջ կտցելու
 Հատիկները մոռացման:

François VILLON

ԲԱԼԼԱԴ, ՈՐ ԳՐԵՅ ՖՐԱՆՍՈՒՍ ՎԻՅՈՆԸ
ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ ԿԱԽԱՂԱՆ ՀԱՆՈՒԵԼՈՒՑ
ԱՌԱՋ

Եղբայրներ, դուք, ու կենդանի էք դեռ,
Մի լինէք քարսիրա, մի լինէք դաժան,
Քանզի թէ ներէք, գուժը շարժուի ձեր՝
Կը խղճայ, գիտեմ, մեզ տէրն անպայման:
Հինգ-հինգ կախուած ենք միշտ մենք անբաժան
Ինչ մնաց կեանքից, ինչ, ով եղբայրներ,
Միայն գարշահոտ, փտած դիակներ:
Լոկ մոխիր ենք մենք կամ փոշին հողի,
Ծիծաղելի է՛, օ ոչ, տեսքը մեր.
Աղօթէք աստծուն, որ մեզ ողորմի:

Իսկ թէ, եղբայրներ, մենք ձեզ աղերսենք՝
Մի արհամարհէք դուք մեռելներիս,
Գուցէ լսել էք, որ ամենուրեք,
Դէ, շատ են մարդիկ եւ անգուժ եւ խիստ:
Այնժամ ձեր խոհեմ աղերսը յղէք
Ամենակալին՝ Յիսուս Քրիստոսին՝
Կը ների նա մեր նախկին կեանքը սին,
Դժոխքի բոցին գուցէ չթողնի,
Չէ որ տանջոււմ ենք անյոյս ու լռին.
Աղօթէք աստծուն, որ մեզ ողորմի:

Յօղեց ու լուաց զով անձրեւը մեզ,
Արեւը խանձեց բոլորիս մաշկը,
Սեւ ազուար մեր մօրուքը փետեց
Ու փորփորեց նա մեր միակ աչքը:
Էլ չենք տեսնելու, որն է արարքը
Մեր աններելի: Քամին անդադրում

Փչում է ուժգին, մեզ տարուբերում :
Ն'ւ սէր, ե'ւ կեղծիք փոխում են ստի .
Յարգուած եմ ես ու միշտ վռնտուած :

ՈՒՂԵՐՁ

Բարի իշխան, թո՛ղ որ Յիսուսը դատի ,
Անխելք չեմ ես, բայց տմարդի անգէտ,
Օրէնքը ես չեմ խախտում, ինչ արած՝
Ինձ ապրել է պէտք օրեր ու տարի .
Յարգուած եմ ես ու միշտ վռնտուած :

Թարգմ. ֆրն.՝ Մ. ՓՈԼԱՏԵԱՆ



ԱՆՁԵՐ, ԴԵՊՔԵՐ ԵՒ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆՑԵԱԼԵՆ

Պրն. Հրանդ Թորոսեան սկսած է, այս խորագրին տակ, գրի առնել իր յիշատակները: Առաջին գլուխներէն կը քաղենք հետեւեալ հատուածները գորս մեր աշխատակիցը *Անդաստանի* տրամադրած է յօժարաբար:

Ի՞նչ քաղցր պահեր անցուցած, պատանեկան ի՞նչ երազներ հիւսած ենք Օննիկ Գօվանճեան եւ ես, Մօտայի այդ դեղածիծաղ վայրերուն մէջ, ուր գրեթէ ամէն օր կ'երթայինք դպրոցէն ետք, եւ մասնաւորաբար ամառը, մեծ արձակուրդին, երբ ծովը կ'ըլլար հանդարտ, երկինքը՝ պայծառ: Յաճախ կը նստէինք Պետոյին նաւակը որ մեզ կը տանէր Գալամբը, երբեմն ալ մինչեւ Ֆանարաքի: Այս այն Պետոն էր որ պատած էր կեանքը Եղիա Տէմիրճիպաշեանի, երբ մեծ գրագէտը, խելագարութեան նոպայի մը մէջ, փորձած էր նետուիլ Մեծ Մօտայի ծովը (1 Յունիս 1893): Կորովի եւ խելացի Հայրդի մըն էր ան, թէեւ անուս: Սակայն այնքան նկարագեղ էր իր պատմելու եղանակը այս տրամադրիկ դէպքին մասին, որ յաճախ կրկնել կուտայինք իրեն:

Տարաբախտ Եղիա, ծովէն հանուելէ ետք ազատարարին՝ Պետոյի ձօնած է իր լաւազոյն գրութիւններէն մէկը, Աշխատանքի Երգն խորագրով, հրատարակուած Ծաղիկի մէջ (5 Յունիս 1893): Ահա՛ սկիզբը. «Արեւէն առաջ արտերուն մէջ են. արեւէն առաջ ծովերուն վրայ: Այնքան հոգուով փարած են հողին, ա'յնքան խանդով յարած են ջուրին, որ՝ արտէն ու ալեակէն հեռու՝ իրենց արդար հանդատեան սուղ ժամերուն մէջ, իրենց կարօտը կը քաշեն ալիք ու դալարիք...»:

Ըսողներ եղան թէ՛ կեղծիք էր անոր անձնասպանութեան այս երկրորդ փորձը (տասնեակ մը տարիներ առաջ նմանօրինակ փորձ մը ըրած էր նոյն այդ Մօտայի ծովեզերքը), թէ՛ նպատակը եղած

էր աղմուկ յարուցանել իր անձին շուրջը: Այս կարծիքէն էր, օրինակի համար, Գրիգոր Զօհրապ որուն կարուկ ակնարկութիւնը, — սքօղեալ, բայց կծու —, ծանօթ է. «Ուր (Մօտա) Եղիա կ'երթայ, եւ ուր Պէտօ կը սպասէ...»: Իրականութիւնը այն էր որ, խեղճ Եղիա ունեցած է մտքի անհասարակչուութեան պահեր: Ապացոյց՝ 1890—1900 շրջանի իր գրութիւններէն սմանք: Եւ ո՛չ միայն իր գրութիւնները, այլ նաեւ՝ իր արտառոց արարքները:

Հին Գատրգիւղցիներ կը պատմէին թէ՛ ի՛նչպէս ան, Զատիկի առտու մը, ցնցոտիներ հագած եւ կանգնած մուրացիկներու շարքին, Ս. Թաղաւորի դրան առջեւ, ողորմութիւն ուզած է եկեղեցիէն դուրս ելլող հաւատացեալներէն, անոնց կարկառելով թիթեղէ տուփի մը կափարիչը, իբրեւ պնակ: Նմանապէս, շատեր տեսած էին զինքը, իր բնակարանին առջեւի մայթը ալյաճ պահուն: Երկյարկանի փոքրիկ տուն մըն էր այդ, ձէվիլ փողոցին մէջ ուր մենք ալ բնակած ենք 1895 Օդոտտոսէն մինչեւ 1896 Հոկտեմբեր, երբ Եղիա այլուր փոխադրուած էր արդէն:

Տէմիրճիպաշեանի վարմունքը տարօրինակ չթուի թերեւս այսօր: Բայց, այնպիսի շրջանի մը՝ երբ մարդիկ չափազանց խիստ էին պատշաճութեանց հակառակ գործուած զանցառութիւններու հանդէպ, անոր վարմունքը համարժէք կը նկատուէր զայլթակալից դէպքի մը:

1893ի վերջերս, Խասգիւղ, իր ծննդավայրը վերադառնալէն, եւ անկէ ալ, 1895ին, Բերա փոխադրուելէն մինչեւ Ազգային Հիւանդանոց մտնելը, 1901ին, շատ անգամ կուգար Գատրգիւղ, իր ազգականներուն եւ բարեկամներուն այցելութեան, իր հօրեղբորորդւոյն Լեւոն Տէմիրճիպաշեանի, գրադիտուհի Օր. Զարուհիի (Եւտերպէ, յետոյ՝ Տիկ. Գալէմքեարեան) որոնք մեր թաղը, Մօտա-Մէօհիւրտար կը բնակէն:

Այդ տարիներուն է որ տեսած եմ զինքը: Թէեւ միջահասակ եւ փոքրակազմ, բայց վայելչօրէն կը հագուէր: Մազերն ու մօրուքը ինամուած, բարակ գաւազան մը կամ դեղեցիկ հովանոց մը ձեռքը, կ'անոնէր փողոցներէն կայտառ, արագ քայլերով: Երբեմն ալ, ընդհակառակը, կը տեսնէինք զինքը ճմռթկած դիւստներով, հառնափնդոր մաղերով ու մօրուքով: Կը յառաջանար պատերուն տակէն, զանդազ քայլերով, կասկածոտ նայուածքներ ուղղելով շուրջը: Այն ատեն, կ'անհետանար այն հմայքը՝ զոր իր զմայլելի գրութիւնները ունէին մեղի համար երբ զանոնք կը կարդայինք Արամեան վարժարանը, Հաւաքածոնքու մէջ:

Վերջին անգամ տեսած եմ զայն 1903ի գարունը, նիհարցած, աչքերը փոսը ինկած, մազերը գրեթէ ամբողջովին ճերմկած, եւ

կորաքամակ գնացքով: Ինկած, ուրեմն, Քիզիքապէս եւ մտաւորապէս: Այդ տարիներուն, իր մնայուն բնակավայրն էր Բերա, Ասմալը Մէտճիա փողոցը, որուն համար ինք իսկ ըսած է թէ՛ տուները իրենց դուռները գիշերն ալ բաց կը պահեն...», հասկցնել ուղելով որ, անոնք եթէ ոչ բողանոց, զոնէ ժամադրավայր էին սիրոյ: Իր բնակած տունը կը պատկանէր Տիկին Էլէն Նիսընի որ իրեն համար եղաւ անձնուէր բարեկամուհի մը: Երախտապարտ էր այդ օտարուհիին, բայց, երբեմն ալ կ'ընդվզէր. «Ի՞նչ կ'ուզէ այս կինը ինձմէ, վայրկեան մը առանձին չի թողուր զիս...»: Ան Աւըստրուհի մըն էր որուն տան մէջ իսկ Տէմիրճիպաշեան ի վերջոյ խեղդամահ պիտի ընէր ինքզինքը:

Այս անձնասպանութիւնը եղերականօրէն հերքեց ամբաստանութիւնները այն մարդոց՝ որոնք «ի ցոյց մարդկան» կը նկատէին իր արտառոցութիւնները: Իրականին մէջ, հանճարեղ գրագէտը վարակուած հալածանքի մենազարութենէ, մենամուտութենէ (մամի տը փերստփիւսիոն): Խղճի խայթ ունեցա՞ն գինքը մեղադրողները, մանաւանդ իր գրչի եղբայրները, որոնք վատաբար լքեցին զայն իր Գողգոթային մէջ, հանդուրժելով որ օտարուհի մը ըլլայ անոր նեցուկ եւ պաշտպան...:

Տիկին Նիսըն տասը տասներեք տարի, զրեթէ անընդհատ ինամեց Եղիան, տեւական գոհողութիւններով, բարոյական եւ նիւթական: Նոյնիսկ այն տարիներուն՝ երբ մարդկային խրեակի մը վերածուած էր ան, այդ Աւստրուհին չզարեցաւ գորովով յըջապատելէ իր պաշտպանեալը մինչեւ անոր վերջին շունչը (9 Յուլիս 1908): Այս կերպով, Էլէն Նիսըն լիապէս արժանի եղաւ: «Կենդանի բանաստեղծութիւն եւ Գլթոյ քոյր ճշմարիտ» մակդիրներուն զորս Եղիա տուած է անոր, Հիւանդ էի, եկիք տեսիք զիս յողուածին մէջ (Մամիս, 27 Փետրուար 1901):

Իր կեանքի վերջին տարիներուն, ես չհանդիպեցայ Տէմիրճիպաշեանի: Սակայն, ուրիշներ տեսած են գինքը Բերայի փողոցներուն մէջ, թեւը մտած իր պաշտպանուհիին, երբ հանճարեղ մարդուն մտքին մէջ կ'եռային դեռ վեհանձն գաղափարներ: Հոգիին մէջ ալ, նուրս զգացումներ, քերթողական ներշնչումներ, թէ եւ այլեւս անկարող՝ զրոյճելու գանոնք թուղթի վրայ...:

Իր գրականութիւնը — ընդհանրապէս լուսաւոր —, հակասած է իր կեանքին որ մթաստուեր եղած է: Ի զո՞ւր ջանացած է իր խոր թախիժը, մեյամաղձութիւնը ծածկել արուեստակեալ զուարթութեան մը տակ: Ո՛չ սէր մնացած էր իր մէջ, ոչ ալ բարեկամական զգացում: Տենդագիրն եւ մտայոյց՝ անտարբեր եղած է շուրջը ան-

յաժ զարձաճներուն : Տիկին Նիսըն անգամ ջղայնութիւն պատճառած է իրեն :

Հրանդ Նազարեան , մէկը այն ցանցառ գրողներէն որոնք յաճախ այցելեցին մեծանուն հիւանդին անոր ամէնէն տառապազին ամիսներուն , ի գո՛ւր աղեխարշ կոչ մը կ'ուզէ ազլին , հետաքըքրուելու իր գաւազներուն ամէնէն տաղանդաւորներէն մէկովը որ , 1908ի սկիզբները , ուրուական մը դարձած էր արգէն :

«Աչքերը՝ տարտղնած ու գրեթէ կորսուած իր փոսացած կոպիճներուն խորը՝ կը բեւեռուին սենեակին մէկ անկիւնը , կը գամուին կէտի մը վրայ ուր ցնորման երեւակայութիւնը կը կարծէ նշմարել ստուեր մը որ իր դժնէ երեւոյթովը կ'ահարեկէ , եւ որուն հանդէպ կը խաչակնքէ , ու ձեռքը սրտին՝ կը սկսի կակազել , հեծկըլտազին ու ողորմուկ ձայնով մը . «Մա՛յրս է , մայրս է . . . որ կ'անիծէ զիս . աղա՛ս , զրոզ եղար , անօթի պիտի մեռնիս . . . » :

Նազարեանի ձայնը լսելի չեղաւ . բայց , ազգը փառաւոր յուղարկաւորութիւն մը ըրաւ Բերայի Ս . Նրբորդութեան եկեղեցիին մէջ . . . Յուլիսի գեղեցիկ օր մը , խուն բաղմութեամբ , մեծ մասով իր գրչեղբայրներն ու պատանիներ եւ երիտասարդներ , — որոնց մէջ նաեւ ես — , տարինք թաղեցինք տարաբախտ Նզիւան Շիշլիի գերեզմանատան մէկ անշուք անկիւնը , անձնասպաններու յատկացուած թաղը : Մինաս Չերազի միջամտութեամբ է որ , Դուրեան պատրիարք պիտի արտօնէր անոր մարմինը փոխադրել գերեզմանատան միջին մասին մէջ պատշաճ վայր մը , ուր դարձեալ Տիկին Նիսըն եղաւ որ , աւելի վերջը կանգնեց դամբարան մը : Տապանագիրը գոր անձամբ ընդօրինակած եմ տեղւոյն վրայ , ունի բացուած դրքի մը ձեւը : Աջակողմեան երեսին վրայ , մէջտեղը , կան Նզիւայի անունին եւ մականունին զլխագիր սկզբնատուերը , ընդելուզուած : Իսկ տակը , անունը՝ ամբողջութեամբ . — Նզիւա ՏԵՄԻՐՃԻԿԱՇԻԱՆ , 1851—1908 :

Յետոյ , հետեւեալ վեց տողերը , Փրանսերէն լեզուով .

Sous cette terre
Repose le bien-aimé
Et éternellement regretté
ELIA DEMIRDJIBACHIAN
Célèbre poète
et philosophe.

Դիմացի երեսին վրայ ալ , սա հինգ տողերը .

Ce monument
A été élevé
A sa mémoire
Par son ange gardien
Mme Hélène Vve Nissen.

Եւ այս է ամէնը : Նզիւայի գրական երկերէն ու դամբարանէն

զատ, ո՛չ մէկ շօշափելի բան իր բեղուն կեանքէն: Ո՛չ գիրք, ոչ ձեռագիր, ոչ ալ որեւէ առարկայ, անոր յիշատակը վերահի չող: Ո՛չ իսկ լուսանկարը իր բնական տուներէն մէկուն, Սասաղիւզի կամ Գատըզիւզի մէջ: Ո՞ւր մնացին այն զոյգերը՝ զորս Տիկին Նիսըն ջերմեռանդօրէն պահեց մինչեւ իր մահը (1919): Ո՞ւր իր անկողինը, իր գրքերը, ձեռագիրները, եւ մէջքի այն դօտին՝ որ ծառայած էր իբրեւ զործիք անձնասպանութեան:

Նշիա թերեւ խուսափէր իր տառապալից կեանքէն եւ եղերական վախճանէն, եթէ հիմնած ըլլար ընտանեկան բոյն մը: Մտադրած էր երբեք ամուսնանալ, ինչպէս ենթադրել կուտայ մեզի, Ռ. Յ. Պէրպէրեանի պսակին առթիւ զրածը. «Պէրպէրեան ալ կ'ամուսնանայ... որովհետեւ երագներով եւ երգերով չկրնար ապրիլ մարդս յաւիտեան:» Թէեւ, երկու տարի ետքը, 1885ին, իր միտքը կը յայտնէ յստակօրէն. «Շո որոշած եմ չամուսնանալ (չաւելցնելու համար ապերջանիկներու թիւը), փափաքելով հանդերձ որ հանուրք ամուսնանան...»:

Ամուսնանալը պայման էր միթէ կանոնաւոր կեանք վարելու: Հարկաւ, ո՛չ: Նշիայի ճակատագիրը կրնար տարբեր ըլլալ եթէ անսացած ըլլար Մինաս Զերպի իմաստուն եւ ողջամիտ խորհուրդներուն: Շահնազարեան վարժարանի իր դասակիցը եւ բարեկամը արգարեւ կը գրէր իրեն, երբ ան հազիւ քսաներեք տարեկան էր (1874). – «Յուսացած էի թէ կեանքիդ մէջ փոփոխութիւնը (1) նկարագրիդ մէջ ալ փոփոխութիւն պիտի բերէ: Մեծ եղաւ վիշտս երբ նամակդ կարդացի, զի զքեզ այնքան դառնացած լուսայ, որքան էիր երբեմն: Թո՛ղ, եղբա՛յր, այդ մէկամողձոտ վերացումները որք այնպէս են մահին պէս, եւ որք կրնան թունել երիտասարդ ամբերիդ ծաղիկը: Ապրէ՛ այնպէս՝ որպէս կ'ապրին ուրիշները: Հաստատութիւն տուր զազափարներիդ, ամոքէ զզացումներիդ բոցը, անդորր պարգեւէ հողիդ որ կ'ալեծփի անգաղար: Ես՝ որ անհուն կարեւորութիւն կը տամ կեանքիդ, զոր, աւա՛ղ, կ'սպառես դու անխիղճ, պիտի փորձեմ դնել նամակներիս մէջ այն խաղաղութիւնը՝ որում պէտք ունիս դու. թերեւս, ընտենանալով նմա, հեշտալի գտնես զայն. թերեւս, մի օր, փոթորիկներէ ձանձրացած, սիրես նաւահանգիստը...»: (2)

(1) Կ'ակնարկէ Նշիայի Երուսա քամբորդութեան:

(2) Զերպի նամակը ընդօրինակեցի բառ առ բառ, առանց փոխելու քերականական տարօրինակ ձեւերը որոնք համապատասխան են այս գրագետին Ընտրողական Աշխարհաբարին, եւ գորս ան լիւսձէր դեռ 1874ին:



Ջարդերէն վերջ, դադրեցան տոհմային ցոյցերը: Ազգային կեանքի եւ հանրային գործունէութեան մէջ, եթէ ոչ՝ մեռելութիւն, առնուազն տափակութիւն կը տիրէր: Արդէն վաւառացի պանդուխտ աշխատաւորները, գրեթէ ամէնքը, չարդուած էին Թուրք խուժանին կողմէ, մասնաւորաբար Խասկիւղ եւ Էմին Էօնիւլի հրապարակը: Ազգային կեանքն ալ սահմանափակուած էր Պատրիարքարանի շրջափակին մէջ, եւ արուարձաններու եկեղեցիներուն ու դպրոցներու շուրջը:

Մայր Եկեղեցի առաջին այցելութեանս Պատրիարքարանը նորոգուած չէր տակաւին: Նոր շէնքը, անոր ներքին մասերը, մեծ դահլիճը եւ գրասենեակները տեսնելու բուն փափաքս պիտի իրականանար տարիներ ետքը: Առ ի չգոյժ Հայկական պետութեան մը, ես Պատրիարքարանը կը նկատէի ազգային կառավարութեան մը կեդրոնը, սուսակ մը Բարձրագոյն Դուռ, իսկ պատրիարքն ալ այդ կառավարութեան պետը, Թագաւոր մը կամ Հանրապետութեան մը նախագահը...: Պատրանք՝ զոր Արամեան վարժարանի մէջ սնուցած էինք, ազդուելով Հայոց Պետութեան դասնէն: Ուրեմն, երբ 1909ին, ուսուցչական քննութեան սասնակցելու համար ազերսագիրս մատուցի Ուսումնական Խորհուրդի քարտուղարին, այս վերջինը ըսաւ որ զայն պէտք է անձամբ ներկայացնեմ պատրիարքին, որպէսզի մակազրութեամբ մը յղէ յիշեալ Խորհուրդին:

Այդ թուականին, Թրքահայոց կրօնական պետը Եղիշէ Դուրեանն էր: Հայրս եւ ես լաւ կը ձփնջնայինք Սրբազանը, Գատըզիւղէն՝ ուր յաճախ հիւր կուգար իր եղբօրը, փաստաբան Այրիպաս Դուրեանի որ Մէօհրիւտար, մեզի մօտ կը բնակէր, եւ որուն զաւակը, Գեղամ, խաղակից ընկերներէն եղած էր: Դուրեան Սրբազան երբեմն ալ կը պատարագէր եւ կը քարոզէր Ս. Թագաւորի մէջ, զպրութեանս շրջանին, երբ դեռ այս եկեղեցիին պաշտօնական քարոզիչը չէր:

Այդ տարիներուն Սրբազանը իր ամենէն առոյգ տարիքին մէջ կը գտնուէր: Հասակը միջակէն վեր. առատ ու խիտ մազեր, թէեւ աղէբեկ: Ուժեղ կազմ, պատկառելի երեւոյթ, թուխ դէմք եւ քաղցր նայուածք, ու թեթեւ ժպիտ մը՝ քիչ մը հեղնող, — նոյնիսկ երկդիմի, պիտի ըսեմ —, որովհետեւ այդ ժպիտը կը վրդաւէր ու կը չփոթեցընէր այն խօսակիցը՝ որ առաջին անգամ կը տեսնէր զինքը: Բայց, շուտով կը փարատէր կասկածը. խօսակիցը քիչ վերջը կը տեսնէր որ աշխարհի ամենէն հաճելի եւ ընկերական անձն էր այդ եպիսկոպոսը որ իր գրական եւ բարոյական յատկութիւններով բարձրացուցած էր Հայ եկեղեցականութեան վարկը:

Կը յիշեմ որ, երբ 1902ի Օգոստոսին մէջ օր մը, շոգենաւ կը նըստի կամուրջէն Գատըզիւղ, Մօտայի նաւամատոյցը իջնելու համար, յանկարծ անձկութեամբ կը տեսնէ որ շոգենաւը փոխանակ մօտենալու այդ նաւամատոյցին, կը շարունակէ ճամբան, դէպի Իշխանաց կղզիները:

Սրբազանը սխալած էր: Մտած էր շոգենաւ մը՝ որ Մօտա չէր հանդիպեր...: Հայ կղզի (Գընալը) ցամաք ելած ատեն, զինքը կը դիմաւորեն բարեկամներ որոնց կարգին Հեթում Սեթեան որ կը հիւրընկալէ զայն իր ամարանոցը: Քիչ վերջը, հոն կ'երթան նաեւ Արշաւրունի սրբազան, Ռեթէոս Պէրպէրեան եւ Տէր Վահան, կղզիին տիպար քահանան: Եւ այս անխորժ պատահարը այն զիշեր տեղի կուտայ սրամիտ կատակարանութիւններու, մինչ, նոյն պահուն, Գատըզիւղ, մեր թաղին մէջ, կը տիրէր մեծ յուզում: Եւ իրաւամբ: Գիշեր եղած էր արդէն եւ Սրբազանը եկած չէր տակաւին իր եղբոր տունը: Ի՞նչ պատահած էր արդեօք...: Այդ օրը, անգամ մըն ալ յայտնի եղաւ թէ՛ ո՛րքան սէր եւ յարգանք կը տածէր ժողովուրդը անգուգահան եկեղեցականին հանդէպ:

... 1904էն ի վեր հանդիպած չէի Եղիշէ Դուրեանի, որովհետեւ, Իզմիրի առաջնորդ ընտրուած, այս քաղաքը մնացած էր երկար ատեն: Պոլիս վերադառնալէն եւ պատրիարքական դահլ բարձրանալէն ետք, առաջին անգամ է որ տեսայ զինքը, պատրիարքարանի իր գրասենեակին մէջ: Տախտակամածը կարմիր գորգով ծածկուած այդ ընդարձակ սրահին մէջ, երբ տեսայ զինքը շքեղ դրասեղանին ետեւ, աւելի՛ պատկառազու թուեցաւ ինծի, եւ աւելի՛ վախազու: Աղերսագիրս ներկայացուցած միջոցիս, իր բարի ժպտովը քաջալերեց զիս որ խօսիմ: Չհամարձակեցայ: Տեսնելով որ լուռ կը մնամ, ինք եղաւ նախաձեռնարկ, ու հարցուց. «Ուրեմն, դո՛ւն ալ վարժապետ ըլլալ կ'ուզես: Հայրդ համամի՞տ է...»: — Ո՛չ, Սրբազան Հայր, պատասխանեցի վարանոտ: Բայց, ուսուցչութիւնը կոչումս է, ու կը փափաքիմ՝ հետեւիլ կոչումիս»:

— Քանի որ այդպէս է, տղա՛ս, քաջութիւն եւ կարողութիւն կը մաղթեմ քեզի», ըսաւ, եւ աղերսագիրս մակագրեց:

... Դուրեան պատրիարքի առթիւ կ'ուզեմ յիշել երկու դրուագ որոնք առնչութիւն ունին իր պուէտ եղբորը, տարաբախտ Պետրոսին հետ: Այն է՝ արտադրել երկու քերթուած, քիչ ծանօթ — չըսելու համար բոլորովին մոռցուած — զորս քերթող եպիսկոպոսը գրած է: Մէկը՝ 1905 Մարտ 25ին, իր մօրը, Տիկին Արուսեակի յուղարկաւորութեան օրը: Միւսը՝ վաղամեռիկ հարազատին մահուան 35րդ տարեդարձին առթիւ:

Առաջինը որ Պետրոսին (Մեր մօր քաղման օրը) խորագիրը կը կրէ, հետեւեալն է. —

«Մօրըդ արտօսըը տեսար» .
Հիմայ հրնուանֆն ալ տեսի՛ր .

Քեզ պաշտելուն հաւասար
Համբոյրներովն ըզնայիք :

«Մօրըդ արտօսըը տեսար» .
Հիմայ գգլխանֆն ալ տեսի՛ր .

Քեզ գըտնելուն հաւասար
Երանութեամբն անկըջիռ :

Այդ ըստուերին մէջ անձայն
Թէ գայ , մօտի քեզ հըլու ,
Իր երագին փորձն է այն
Քեզ վերըստին ծընելու . . .

«Երկրորդ Մօրըդ սե՛ւ գոգ»էն վերջ՝
Գըտար մայրիդ գիրկը դարձեալ . . .

Նոր երկունֆի հոգին ստերջ
Պիտի խաբէ՛ երկուֆդ ալ . . .

*Երկրորդին մէջ, որ Երագ մը (Մանկութեան յիշատակ) վերնա-
զիրը ունի, քերթողը, իր երէջ եղբօր մահամերձ Պետրոսի սնարին
մօտ, կը պատմէ երագ մը զոր տեսած է նախընթաց զիջերը: Իրենց
պարտէզին սալորենիին վրայ նշմարած է ո՛չ թէ սալոր, այլ՝ երկըն-
կեկ չորս տանձեր որոնցմէ մէկը, փրթելով, վար կ'իյնայ յանկարծ:
Ու քերթողը կը պատմէ .-*

Տարւոյն ամիսն էր Նոյեմբեր,
Ինֆն անկողնին մէջ հիւանդ էր . . .

Ու ես, իբրեւ անմիտ տըզայ՝
Որ կըրակին հետ կը խաղայ՝

Չունենալով կասկած մը թէ
Մահը մօտէն մեզ կը խայթէ,

Գացի քրագըս պատմելու,
Ինֆն ալ ականջ դրբաւ հըլու .

« Եղբա՛յր, ըսի, այս գիշեր ես
« Մեր պարտէզին մէջը, գիտե՛ս,

« Սալորիին վըրայ տեսայ
« Չորս պըտուղներ հունայ հուսայ :

« Սակայն, անոնֆ չէին սալոր
« Կանաչ՝ կարմիր ու կէս կըլոր,

« Այլ, երկընկեկ էին տանձեր,
« Կամ թէ, այնպէս մը ձեւացեր՝

« Թեկ կոքերով բիրեղային
« Արծաթափայլ կը շագային .

« Անոնցմէ մէկը ինքնիրեն
 « Փըրթաւ յանկարծ, ինկաւ վերէն... » :
 Հիւանդ Պետիկը տըրտմանոյ՝
 Մեկնեց երազըս չարագոյժ .
 « Չորս պըտուղ չորս եղբայրներէս
 « Հողին վըրայ ինկողն եմ ես » :

*

Նոյն 1901 տարուոյ հոկտեմբեր 28ը ինծի համար պիտի բլլար յիշատակելի թուական մը : Հայրս տարաւ զիս Իւսկիւտար, Պէրպէրեան վարժարան ուր տեղի պիտի ունենար դպրոցին հիմնարկութեան 25ամեայ յօրեկանը, նախազահուութեամբ Օրմանեան պատրիարքի :

Մեծանուն գրագէտը եւ ուսուցիչը մեր պատանեկութեան շըրջանի կուռքն էր : Անոր անունը կը յեղյեղուէր ամէն օր, ամէն տեղ, ամէն առիթով : Թերթերու եւ հանդէսներու մէջ, իր գրուածքներով եւ վարժարանին մասին տեղեկութիւններով : Հանրային կեանքի մէջ, Ուսումնական Խորհուրդի իր ատենապետութեամբ, իր կրթական ծրագիրովը զոր պատրաստած էր ազգային դպրոցներուն համար, եւ որ Թրքահայոց դաստիարակութեան կանոնագիրը մնաց քանի մը տասնեակ տարիներ, 1885էն սկսեալ : Գալով իր գրականութեան, անոր ընտելացած էի Մինաս Գաբամաճեանի Հաւաքածոյին միջոցաւ, ուր կարեւոր տեղ կը գրաւէին ուսուցչապետին գրութիւնները : Արդարեւ, գրքին 65 արձակ հատուածներէն տասը կը կրէին անոր ստորագրութիւնը, գրեթէ ամէնքն ալ երկու Բանախօսութիւնէն քաղուած (Թշուառութիւն եւ Գուք, Գեղեցիկն ու Գեղարուեստը) :

... Անոնց հեղինակը մենք կ'երեւակայէինք բարձրահասակ, առատ մազերով, երկար մօրուքով տեսակ մը Վիքթոր Հիւկօ : Մեծ ետաւ մեր յուսարութիւնը, տեսնելով զայն, գրեթէ կարճատև, մազերը արգէն թափած, թաւ պէխերով : Այցելութեան եկած էր մեր դպրոցը, Արամեան, Աւետիս Սուրէնեանի եւ Տոքթ. Վահրամ Թորգոմեանի ընկերակցութեամբ : Հազիւ սկսած էր քանի մը խօսքեր ուղղելու մեզի, երբ այդ սովորական մահկանացուի երեւոյթով մարդը այլափոխուեցաւ : Քաղցր ճաշն մը, հմայիչ, յանկուցիչ՝ իր պերհախօսութեամբը, թէեւ անսթեկեթ : Չափաւոր՝ իր շարժումներուն մէջ, ինչպէս չափաւոր եղած էր իր ոճին մէջ, եւ մնաց ալ այնպէս, մինչեւ իր մահը (1907) :

*

Պէրպէրեանի յօրելինական հանդէսէն ետք, հայրս, խնդրանքիս վրայ, տարաւ զիս Իւսկիւտարի գերեզմանատունը, այցելելու Պետրոս Դուրեանի շիրիմին : Մարմարէ պատուանդանի մը վրայ հաստատուած կիճէ կոթող մըն է աս, երկուքուկէս մեթր բարձրութեամբ,

կանգնած մուտքի դրան աջ կողմը, Պաղլար Պաշըի մեծ պողոտայէն քանի մը քայլ հեռու, այնպէս որ, տեսանելի է այդ պողոտայէն անցնողներուն: Շիրիմին արեւելեան երեսին վրայ փորուած է տասներկու տողէ բաղկացած այն ոտանաւորը զոր 1872ին, զեռ պատանի, խմբազրած է իր կրտսերագոյն եղբայրը, Միհրան (յետոյ՝ Եղիշէ Սրբազան). —

Աստ հանգչի Պետրոս Դուրեան
Որ քըսանամեայ էջ ի գերեզման:

Իսկ արեւմտեան երեսին վրայ կը կարդացուի վաղամեռիկ բանաստեղծին Խմ Մանը քաջածանօթ քերթուածին առաջին տունը, որ սա տողով կը սկսի. —

Եթէ տըժգոյն մահու հրեշտակ . . .

*

Այդ միեւնոյն 1901 տարւոյ մէջ էր — կարծեմ —, որ վերահաստատուեցան մանկավարժական դասախօսութիւնները Բերայի Արհեստանոցի սրահին մէջ: Վերահաստատուեցան — կ'ըսեմ —, որովհետեւ 10—15 տարիէ ի վեր արդիւրուած էին ոստիկանութեան կողմէ: Անկէ առաջ, Ասիական Ընկերութիւնը կազմակերպած էր զանազան նիւթերու շուրջ դասախօսութիւններ որոնք տեղի կ'ունենային Բերա, Յունաց Միլլոդոսին մէջ, Հայ եւ օտար մտաւորականներու մասնակցութեամբ: Ունէին նաեւ երաժշտական մաս մը որուն ղեկավարն էր հոչակաւոր Տիգրան Զուհաճեան: Զուտ մանկավարժական դասախօսութիւնները սկսած էին, սակայն, 1887ին միայն, հակառակ բազմազան դժուարութիւններու, շնորհիւ յամառ ջանքերուն Գալանթարեանցի, պատուական եւ ազնիւ Ռուսահայ մտաւորականը որ այս ճիւղին կոչուեմբ ունէր, բառին բուն եւ լայն իմաստովը: Անիկա առեն մը եղաւ նաեւ Կրթական Քննիչ, եւ այս հանգամանքով կուզար նաեւ մեր դարորոտ. Արամեան: Անոր կազմակերպած դասախօսութիւնները տեղի կ'ունենային Ղայաթիոյ Կեդրոնականի ամփիթատրոնին մէջ, երկու հարիւրէ աւելի ունկնդիրներու ներկայութեան:

Գասախօսութիւններուն նոր շարքը սկսաւ 1900ի առեկները, շնորհիւ այն յարատեւ եւ յամառ դիմումներուն՝ զորս Օրմանեան պատրիարք բրած էր Օսմանեան կառավարութեան մօտ: Ամէն անգամ որ հայրս Արամեանի իր պաշտօնակիցները կ'առաջնորդէր հոն, զիս ալ կը տանէր միասին: Թատերական ներկայացման մը չափ ախորժեղի կը թուէին ինծի այդ դասախօսութիւնները: Արհեստանոցի բազմաթիւ դասաբար ընդարձակ սրահին մէջ հաւաքուած կ'ըլլային 100—150 ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ, Պոլսոյ բոլոր թաղերէն: Խորին, տպաւորիչ լուսթեան մէջ, բեռ կը բարձրանային դասախօսները. — Ռ. Յ. Պէրպէրեան, Յակոբ Գուրգէն, Յովհ. Հինդեան, Տոքթ. Վ. Թոր-

դոմեան, եւ այն ատենի մտաւորականութեան կարկառուն դէմքերէն ուրիշներ: Իւրաքանչիւրը կը խօսէր իր մասնագիտութեան վերաբերեալ նիւթերու մասին: Սակայն, ինչպէս ուրիշ առիթներու, Պէրպէրեանն էր դարձեալ որ կը տիրապետէր ամէնուն, իր անվիճելի հեղինակութեամբն ու գրաւիչ պերճախօսութիւնովը:

Այդ ատենները (1900–1901 թուականներուն) Լոյս (*) եւ Մասիս (***) պարբերաթերթերով սկսած էի արդէն գրական ընթերցումներ ընելու, այնպէս որ — ինչպէս քիչ առաջ երկարօրէն պատմեցի —, մեծ հաճոյքով կը հետեւէի Թանգարան (***) հաւաքուող երիտասարդներուն (****) վիճարանութեանց: Սակայն, հազիւ 14–15 տարեկան, չէի համարձակեր միջամտելու խօսակցութեան, բնական երկչոտութեանս հետեւանքով: Երբեմն, կը փորձուէի կարծիք մը յայտնելու, կամ յայտնուած գաղափար մը հերքելու: Կարծէք, յեղուս կը բռնուէր, կոկորդս կը չորնար, եւ չէի կրնար բաւ մը անգամ արտաբերել:

... 1903ին, Գրիգոր Թորոսեան ծանօթ էր արդէն, իրբեւ երզնի-ծարան: Երբ փողոցէն կ'անցնէինք կը լսէինք աղջիկներ որոնք պարու: Նոյնը նաեւ, մեզի հանդիպող անցորդներէն:

տուհանէ պատուհան, «Բանագողն է, Բանագողն է», կ'ըսէին իրաբուտոյց, ինքնահաւան, ունայնամիտ չէր: Իր հասցէին ուղղուած հիացական արտայայտութիւնները անտարբեր կը թողէին գինքը: Երբեմն, կը նեղուէր նոյնիսկ, եւ կ'արագացնէր քայլերը, զիս ալ քաշկրտելով իրեն հետ: Պատճառը թերեւս իր տղեղութիւնն էր: Շատ վաղահասօրէն ճաղատ: Առաջին ակնարկով հակակրելի էր ան: Բայց, թուիս դէմք ունէր, ծաղկոտ երեսով, մէկ աչքը չիլ, դանկին զազաթը որքա՞ն հմայիչ կ'ըլլար երբ խօսիլ սկսէր: Սրամիտ, կատակախօս ու

(*) Կիսամետայ պարբերաթերթ, Մ. Սուլթանեանի եւ Մ. Ուղուրեանի կողմէ հրատարակուած:

(**) Շարաքաթերթ Տիգրան Արփիարեանի խմբագրապետութեամբ:

(***) Բողոքականներու կողմէ բացուած սրմարան՝ որուն անունը անբնօրէն Թանգարան դրած էին, գանազանիւս համար գայն սովորական գրօտայրերէն: Հոն կային կրօնական եւ բարոյական գիրքեր եւ լրագիրներ: Մուտքը ազատ էր: Այցելուները պարտաւոր չէին բան մը ուտելու կամ խմելու:

(****) Խմբագիրներ, ինչպէս Յակոբ Տէր Յակոբեան, Գրիգոր Թորոսեան, եւ գրասէրներ կամ գրողներ, Տոքթ. Ալլահվէրտի Որդի, Տիգրան Գասապեան եւ ուրիշներ: Գրիգորի հետ ես ալ կ'երթայի հոն, ամէն անգամ որ գարնիկիս տունը կը մնայի, իբրեւ հիւր:

պատրաստարան, ամենուհի համակրութիւնը գրաւած էր :

Բանագող Լուսթիւնեանի շնորհիւ է որ առաջին անգամ ճանչցած եմ խմբագրատուն մը եւ լրագրական կեանքը : Զարմիկս պատուիրած էր, որ իրենց հիւր գացած օրերս, Մանգումէի խմբագրատունը հանդիպիմ որ կը գտնուէր Պապը Ալիի պողոտան, 38 թիւը, հին նեղ շէնքի մը մէջ, աւելի ապրանքներու մթերանոցի նմանող, քան՝ խմբագրատունի :

Երկու երեք նեղ ու մութ սանդուխէ ելլելէ ետք, կը մտնէիր փոքրիկ սրահ մը, մէջտեղը երկայն ու լայն գրասեղան մը, որուն շուրջը նստած կըլլային Գրիգոր Թորոսեան, Յակոբ Տէր Յակոբեան կամ Վահան Թոշիկեան, լրագրին վերջին փորձերը սրբագրելու գրադած : Քիչ անգամ կը պատահէի խմբագրապետ Քասիմի (Միսաք Քոչունեան), որովհետեւ ընդհանրապէս կանուխ կը մեկնէր : Երբ բախտը ունենայի տեսնելու զայն, սենեակին անկիւնը, պատուհանին մօտ, գրասեղանին առջեւ նստած, չափ չէր ունենար ուրախութիւնս : Ինծի կը թուէր թէ Ողիմպոսի կատարէն իջած գերմարդկային արարած մըն էր այդ մարդը որուն խմբագրականները լափելով կը կարգային հազարաւոր ընթերցողներ :

Քասիմ հրատարակած էր արդէն ժողովրդական վէպեր, երբ Մանգումէի մէջ սկսաւ Կննոստ Հանգոյցը : Անիկա եղած է գլխաւոր նախաձեռնարկ վիպական թերթօններուն, նիւթ ունենալով տեղական բարձրը, ընդհանրապէս Պոլսահայ ընտանեկան կեանքը : Իրականին մէջ, ինք չէ որ եղած է վէպին ստեղծիչը, մեր մէջ : Իրմէ առաջ, այս ճիւղը առաւել կամ նուազ յաջողութեամբ մշակած էին Յովհաննէս Հիսարեան, Վարդան փաշա, Արմենակ Հայկունի, Յակոբ Հաճեան, Թերենց, Սրբուհի Տիւսար եւ ուրիշներ : Բայց, Քասիմ է որ գրական այս սեռը աւելի մատչելի ըրաւ անգրագէտ ընթերցողներուն : Իր տիպարները իսկապէս ապրող Հայեր եւ Հայուհիներ են . միջավայրը՝ Պոլսական . լեզուն՝ պարզ, առանց գրական յաւակնութեան :

Յոյց տալու համար որ, ինչ յարգանք ներշնչած է Քասիմ իր երիտասարդ աշխատակիցներուն, եւ ո՛րքան ազդեցութիւն գործած է անոնց վրայ, կուտամ հատուած մը — երգիծական, բայց պատկերալից —, Երուանդ Թօլայեանի (Կավոօ) մէկ գրութեանն :

Այս երգիծարանը, ըսելէ ետք սրամտօրէն թէ՛ ամէն մարդ հայր մը ունի միայն, մինչդեռ ինք, երեք.— Երկնաւոր Հայրը, երկրաւոր հայրը եւ գրչի հայրը (այս վերջինը՝ Քասիմ) որուն կը յայտնէ իր երախտագիտութիւնը, միակ պարբերութեան մը մէջ ճարտարօրէն կը գետեղէ քովէ քով ժողովրդական գրողին վէպերուն խորագիրները, ինչպէս եւ Նարեկի աշխարհաբար թարգմանութիւնը.—

«Ոսկիներու ճամբուն վրայ գրիր զիս, ո՛ սիրելի հայրիկդ իմ

Թիւ 3. քու շնորհիւդ կեանքս կննոտ Հանգոյց մը չեղաւ, Պարոնեանի ժառանգորդը ըրիր զիս, որ պարզ Բախտախնդիր մըն էի: Սրտոնցիւր որ չտիրեմ աշխարհիս ոչ մէկ օրհորդաւոր Ազջիկը, եւ երբ եկայ քեզի տրտնջալու որ բոլոր գրական կաճառը Վրէժխնդիր է ինծի դէմ... Նարեկ մը տուիր ձեռքս: Երբ տունէն փախայ Տունէն ներս խոթեցիր զիս»:

Գասիմ Ֆրիդբապէս ալ պատկառելի էր: Բարձրահասակ եւ բաւական մարմնեղ, խարտեաչ պեխերով եւ ոսկի ակնոցը աչքին, խիստ երեւոյթ մը ունէր, աշխատած միջոցին: Սակայն, երբ գրիչը վար դնէր, խօսելու համար իր երիտասարդ աշխատակիցներուն հետ, հայրական այնպիսի շեշտով մը կ'արտասանէր բառերը որ անկարելի կ'ըլլար չհամակրիլ իրեն:

Սմբազիրները, տակաւին գրելու գրալած, յանկարծ սենեակին գրան առջեւ կ'երեւէր գրաշար մը որ կուգար իմացնելու թէ՛ «Թերթը լեցուած է»: Յայտարարութիւն՝ որ խնդութեամբ կ'ողջունուէր խմբագիրներուն կողմէ: Երբեմն ալ, երբ կարելոր լուր մը ըլլար զոր հարկ էր վերջին պահուն գետեղել թերթին մէկ անկիւնը, անոնք կը սրտնեղէին, որովհետեւ հարկադրուած կ'ըլլային աւելի ուշ մեկնելու:

Պետական գրաքննիչին մեկնելէն եւ լրագրին մամուլի տակ գլորուելէն ետք, աւարտած կ'ըլլար խմբագիրներուն գործը: Գրիգոր եւ ես, ուշ ատեն, ժամը թրքական երեքի ատենները (մօտաւորապէս կէս գիշերին) ճամբայ կ'ելլէինք, հետիոտն երթալու համար զարմիկիս Գում Գարուի տունը: Յաճախ, մեզի կ'ընկերանար Յակոբ Տէր Յակոբեան որ նոյն թաղը կը բնակէր:

Դիշերային այդ վերագարձը անախորժ էր, չըսելու համար վախազու՝ Պոլիս, որքան գեղեցիկ՝ ցերեկը եւ ամառը, նոյնքան տխուր էր մութին եւ ձմրան եղանակին: Փողոցները անբաւական կերպով լուսաւորուած էին: Շատ տեղեր, քանի մը լապտեր միայն կ'արձակէին տկար լոյս մը: Մարդիկ չէին կրնար դուրս ելլել առանց լապտերի, պտտելու կամ այցելուութիւններ փոխանակելու համար: Այս փոքրիկ լապտերները, երբ մերթ ընդ մերթ տեսնուէին խաւար փողոցներուն մէջ, եւ անհետանային խորհրդաւոր մթնոլորտ մը ստեղծելէ ետք, կը նմանէին չըմոլիկ հուրերու (Փէօ Փօլէ), այսինքն՝ այն լոյսերուն, որոնք առաջ կուգան գերեզմանատուններու մէջ փոսփորի փայլէն: Հոն կը տեսնուէին միայն շուներ եւ գիշերապահներ: Նաեւ, պահակ զինուորներ, ձիաւոր կամ հետեւակ, որոնք Սուլթան Համիտի բռնակալութեան օրով, քաղաքին կուտային պաշարման վիճակի երեւոյթ: Եթէ ատենը գիշեր չըլլար, այդ գոբհներուն մէջ քալող մէն մի անցորդը պիտի նմանցնէի Դիոգինէսի որ, ցերեկը, փողոցներուն մէջ մարդ կը փնտուէր իր լապտերովը...:

ՀՐ. Ն. Թ.

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՒ ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. — ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Մարդը բնութեան թագաւորն է : Գէթ այդ յաւակնութիւնը ունի , անգիտանալով որ , իբրեւ անհատ , իր թագաւորութեան տարածութիւնը , ուղղութիւնն ու տեւողութիւնը հիմնովին կախում ունին իր ճակատագրէն :

Ճակատագիր^o . . .

Կարելի^o է միթէ ճակատագրի խօսքը ընել քսաներորդ դարուն , երբ գիտութիւնը հիմնովին փոխելու վրայ է թէ՛ կենդանի եւ թէ՛ անկենդան աշխարհին դիմադիծը եւ երբ մարդիկ կը պատրաստուին արշաւելու դէպի մոլորակները եւ աւելի հեռուն :

Հակառակ մարդուն քառորդ դարէ ի վեր կատարած աներեւակայելի գրաւումներուն , ճակատագիրը գոյութիւն ունի : Բայց ո՛չ իր սովորական , ժողովրդական իմաստով :

Սովորական իմաստով ճակատագիրը — հիներու ֆաթաւը կամ ֆաթալիքէն — այն հաւատքն է թէ մարդկային կեանքին բոլոր պատահարները եւ շրջապատող բոլոր երեւոյթներն ու դէպքերը , նախապէս եւ անդառնալիօրէն որոշուած , տնօրինուած են : Անոնք հարկադրաբար տեղի պիտի ունենան : Ոչ ոք կրնայ խուսափիլ այդ հարկադրութենէն , ճակատին վրայ դրուածքէն :

Այս ըմբռնումով անհատական ճակատագրի մը գոյութեան հաւատքը ծնունդ առած է անշուշտ մարդկային ցեղին կենդանական վիճակէն բարձրանալու սկզբնական շրջանին , երբ մարդ արարածը սկսած է զիտակից դառնալ իր անձի գոյութեան եւ զինք շրջապատող ահաւոր պայմաններուն :

Մէկ կողմէ ինքնապահպանումի խոր բնազդը , միւս կողմէ իր կեանքին մշտապէս սպառնացող բնական երեւոյթներու ազդած սարսափը , իր նախնական (բրիմիքիֆ) մտայնութիւնը եւ տակաւին տարրական հետաքրքրութիւնն ու երեւակայութիւնը մղեցին մարդը բնական տարրերուն եւ երեւոյթներուն ներքեւ թաքուն ուժերու կամ ոգիներու գոյութիւնը ենթադրելու , ոգիներ զորս մարմնաւորուած կը տեսնէր իր երազներուն մէջ :

Աստիճանաբար իր մէջ արմատացաւ այն հաւատքը թէ բնութեան տարրերը չէին կրնար շարժման մէջ մտնել եւ երեւոյթները չէին կըր-

նար տեղի ունենալ առանց այդ ոգիներու կամքին եւ միջամտութեան : Ինչ որ ցոյց կուտար անոնց ոյժն ու ամենակարողութիւնը : Հետեւաբար այդ բիւրաւոր եւ ամենակարող ոգիներու կամքէն միայն կրնար կախում ունենալ իր կեանքին ընթացքը, այսինքն ճակատագիրը : Անոնք միայն կարող էին փոխել զայն եւ բարենպաստ պայմաններ ստեղծել ապրելու համար : Անհրաժեշտ էր ուրեմն, կեանքի բոլոր պարագաներուն մէջ, անոնց դուրսը հայցել, անոնց բարեացակամութիւնը ապահովել եւ սիրաշահիլ զանոնք՝ բազմազան ծէսերով եւ մարդկային ու կենդանական զոհաբերութիւններով :

Արտաքին վարող ուժերու գոյութեան եւ մշտական ներկայութեան մասին այս հաւատքը, որ կրօնքներու մեկնակէտը կը կազմէ, զանազան ձեւերու տակ արմատացած է ժողովուրդներուն մէջ, սկիզբէն մինչեւ այսօր : Եւ անշուշտ՝ տակաւին երկար ժամանակ պիտի տեւէ :

Ներկայիս մարդկութեան մէկ երրորդը — հրեայ, քրիստոնեայ եւ իսլամ — արտաքին բիւրաւոր ոգիներու ուժերը կեդրոնացուցած է բարձրագոյն միակ էակի մը մէջ, ամենագոր եւ ամենակարող, որ, ըստ հաճոյս, կը բաշխէ բարիքներն ու չարիքները եւ կը պատժէ կամ կը վարձատրէ իւրաքանչիւրը իր արժանիքին համեմատ : Գէթ այդ հաւատքով կ'ապրի մարդը, թէ եւ իրեն համար անբարեկեցիկ յաճախ հակառակը կը պատահի : Ամէն պարագայի, մարդուն ծնունդն ու մահը, առողջութիւնն ու հիւանդութիւնը, երջանկութիւնն ու դժբախտութիւնը, յաջողութիւնն ու ճախողութիւնը եւ ընդհանրապէս կեանքի ընթացքն ու պատահարները, այսինքն ճակատագիրը, կախում ունին այդ բարձրագոյն էակի տնօրինութենէն : Ան միայն կրնայ փոխել ճակատագիրը : Այլթքը, այլազան ծէսերն ու արարողութիւնները, զոհաբերութիւնները այդ նպատակին կը ծառայեն :

Եւ սակայն, հակառակ բարձրագոյն եւ ամենակարող էակի մը կամքին ենթարկուած ըլլալու հաւատքին, կարգ մը կրօնքներ, մասնաւորաբար քրիստոնէութիւնը, մարդը ազատ կը նկատեն իր որոշումներուն մէջ (լիպոլը արպիթը), հետեւաբար պատասխանատու իր արարքներուն : Էական հակասութիւն մըն է մարդը նկատել թէ անկախ եւ պատասխանատու եւ թէ ենթակայ բարձրագոյն էակի մը կամքին, հակասութիւն մը, որուն բացատրութիւնը, քրիստոնէական վարդապետութեան համար բարդ եւ անլուծելի խնդիր մը կը կազմէ :

Մարդկութեան մնացեալ երկու երրորդը — մօտ երկու միլիարտ Զինացիներ, Հնդիկները, Ճարոնացիները, Հարաւ Ասիացիները, Ափրիկեցիներուն մեծ մասը, եւայլն, կախարդական-կոռպաչտական կամ կրօնափիլիսոփայական կարգ մը հաւատալիքներու եւ վարդապետութիւններու մէջ կը գտնեն իրենց ներկայ եւ ապագայ ճակատագիրներուն բացատրութիւնն ու գործօնները :

Այս կերպ ըմբռնուած արտաքին ճակատագիրը, որ շատ մը կրօնքներու տեսութեամբ ենթակայ է արտաքին զիտակից միակ ուժի մը կամ բազմաթիւ ուժերու կամքին եւ միջամտութեան, պարզապէս հաւատքի խնդիր է: Հետեւաբար միայն բնագանցական ուսումնասիրութիւններու եւ բիւզանդական վիճարանութիւններու նիւթ կրնայ հայթայթել:

Եթէ այս ըմբռնումով արտաքին ճակատագրութիւն մը գոյութիւն չունի, կամ ենթադրական է եւ անկարելի է զիտական տուեալներու վրայ հաստատել, կա՞յ արդեօք ներքին ճակատագիր մը, կամ բախտավիճակ մը (տէսքիմէ) կամ որոշադրականութիւն մը (տէքէրմի-նիզմ), որ թոյլ տայ բացատրելու մարդոց Փիղիքական եւ հոգեկան այլազան վարմունքը (ֆունկտրքըման):

Ամէն ոք կրնայ հաստատել թէ աշխարհի վրայ չկայ մէկը որ ուրիշին նմանի իր արտաքին, մարմնական ձեւով: Նաեւ կորովով, իմացական զօրութեամբ, բարոյական-հոգեկան ընդունակութիւններով, բնաւորութեամբ կամ նկարագրով եւ վարմունքով: Ոմանք ըմբռնի երեւոյթ ունին, ուրիշներ տխեղծ են. կան հանճարներ եւ թերամիտներ (Էմպէտիլ), ծոյլեր եւ գործունեաներ, բարեսիրտներ եւ չարագործներ, եւայլն: Այս երկու ծայրամասերուն միջեւ կարելի է երեւակայել բոլոր աստիճանները:

Իւրաքանչիւր էակ, ծնունդէն մինչեւ մահը, տառապանքի կամ հրճուանքի մէջ, հիւանդութեան կամ առողջութեան շրջանին, հակազդելու անհատական ձեւ մը, ինքնայատուկ ուղղութիւն մը (օրիաքաւիոն) մը ունի, որ իր ընդհանուր զիծերուն մէջ, զբեթէ անփոփոխ կը մնայ կեանքի տեւողութեան ընթացքին, կազմելով տեսակ մը ճակատագիր:

Արդ, կա՞ն արդեօք ներքին-մարմնական կամ արտաքին-բնական մնայուն եւ յատկանշական գործօններ, որոնք պարտադրաբար կը պայմանաւորեն մեզմէ իւրաքանչիւրին վարուելակերպը եւ որոշ ուղղութեամբ մը կ'առաջնորդեն կեանքի բոլոր պարագաներուն մէջ:

Եթէ այո՛, որո՞նք են այդ գործօնները:



Մարդկութեան թիւը ներկայիս երեք միլիառէն աւելի է: Իւրաքանչիւր մարդէ միայն մէկ օրինակ գոյութիւն ունի: Այսինքն չկայ մէկը որ ուրիշի մը յար եւ նման մարմնական կազմը եւ հոգեբնասական հակազդեցութիւնները ունենայ: Իսկական երկուորեակներն իսկ տարբերութիւններ ունին:

Մարդկային, ինչպէս նաեւ կենդանական ու բուսական պէսպի-

տուեթիւնը, Ֆիզիքական եւ հոգեմտային անհուն ալլազանութիւնն ու անհաւասարութիւնը հետեւանք եւն էազէս երկու հիմնական ազդակներու զուգադրութեան :

Այդ երկու ազդակներն եւն ժառանգականութիւնը եւ միջավայրը :

Ուրիշ առիթի մը վերապահելով միջավայրին կազապարող ազդեցութեան ուսումնասիրութիւնը, այս անգամ կ'ուզեմ ծանօթացնել ժառանգականութեան գաղանիքները : Գէթ անոնք որոնք քիչ-շատ յայտնաբերուած են :

Այս առթիւ տեղին է յիշել գիտունի մը խօսքը . «Գիտեմ թէ բան չեմ գիտեր եւ որքան աւելի գիտնամ, այնքան աւելի կը հաստատեմ թէ շատ բան չեմ գիտեր» :

Ժառանգականութեան դերը կը սկսի այն պահուն երբ իզական եւ արական սեռային բջիջները կը միանան, այսինքն անմիջապէս որ բեղմնաւորում տեղի կ'ունենայ :

Անցեալին մէջ սաղմնաբանութեան, ինչպէս նաեւ կեանքի էութեան եւ ծագումին մասին բնաղանցական հայեցողութիւններ միայն գոյութիւն ունէին :

Գիտական միջոցներէ եւ տուեալներէ զուրկ յունական գիտութիւնը բոլորովին անտեղեակ էր սաղմի կազմութեան պայմաններուն : Հիպոկրատէս, Արիստոտելէս եւ քանի մը դար յետոյ Գաղիանոս, կը կարծէին թէ նոր էակի մը կազմութեան մէջ մայրը նիւթը կը հայթայթէ, իսկ հայրը՝ ձեւը :

Միջին դարուն եւս այս մասին բոլորովին շփոթ գաղափարներ կը տիրէին :

Տասնութերորդ դարուն միայն, անգլիացի գիտուն մը, Հարվէ, որ արեան շրջանառութիւնը գտաւ, վերջապէս յաջողեցաւ հաստատել այն պարզ իրողութիւնը թէ իւրաքանչիւր էակ ձուէ մը սկիզբ կ'առնէ :

Հաղիւ երկու դար կ'ընէ որ ծանօթ ենք սեռային բջիջներու, այսինքն ձուիկի (օվիւլ) եւ սերմնակենդանի (սփերմաթոզոսոմ) գոյութեան, ինչպէս նաեւ բեղմնաւորումի փուլերուն :

Բայց մինչեւ դար մը առաջ, ձուիկին եւ սերմնակենդանին դերը լուրջ վէճերու առիթ կուտային :

Ոմանց կարծիքով բեղմնաւորման մէջ ձուիկին դերը հիմնական, իսկ սերմնակենդանին դերը երկրորդական էր : Որովհետեւ կը կարծուէր թէ ձուիկը կը պարունակէր աչքով անտեսանելի, մանրադիտական մարդուկ մը, որուն աստիճանական աճումով կը կազմուէր երախան :

Ուրիշներ կը կարծէին թէ սերմնակենդանը ինքն իսկ մարդուկի մը նախածեւն էր եւ կամ . անոր գլխուն մէջ կը գտնուէր այդ նախա-

ձեւը (Էպոչ), որուն աճումին կը ծառայէր ձուն, իբրեւ սնունդ :

Կային նաեւ դիտուեններ որոնք կ'ենթադրէին թէ ձուիկին եւ սերմնակենդանին միացումէն յետոյ միայն կը կազմուի մարդուկը, մանրանկար կամ ամբողջական : Զանց կ'առնեմ ուրիշ այլանդակ տեսութիւններ, ինչպէս ձուիկին մէջ բազմաթիւ մարդուկներու մէջ ընդ մէջ պարփակումը, նման ոռուսական պոլպրիկներուն... :

Այժմ ճշգրիտ տուեալներ ունինք իզական եւ արական սեռային բջիջներու կազմութեան, դերին, ինչպէս նաեւ բեղմնաւորման շրջանի երեւոյթներուն մասին :

Իզական կամ մայրական սեռային բջիջը ձուիկն է : Մօտաւորապէս զնդասեղի փոքր գլխու մը մեծութիւնը ունի եւ աչքով հազիւ կը տեսնուի : Զուիկը կորիզ մը ունի, որ շրջապատուած է նախահիւթով (փրոթոփլազմ) կամ բջջահիւթով (սիքոփլազմ), նման հակիթի ձերմկուցին : Կին մը, բնական պայմաններու մէջ, ամիսը միայն մէկ ձուիկ կ'արտադրէ, հետեւաբար իր սեռային կեանքի 30-35 տարուայ ընթացքին մօտ 400-500 հատ, որոնք ամբողջութեամբ նախատիպ վիճակի մը մէջ կը գտնուին էգ երախային ձուարաններուն մէջ : Արբունքի շրջանէն սկսեալ, ամէն ամիս, անոնցմէ հատ մը կը հասուննայ եւ դաշտանին հետ կ'արտաքսուի, եթէ չբեղմնաւորուի :

Արական կամ հայրական սեռային բջիջը սերմնակենդանն է : Գլուխ մը եւ պոչ մը ունի : Զուիկէն մօտ հինգէն տասը անգամ աւելի պզտիկ է, եւ աչքով անտեսանելի : Զուիկին պէս կորիզ մը ունի որ գլուխը կը կազմէ : Կաթիլ մը սերմի մէջ միլիոնաւոր սերմնակենդաններ կը վխտան եւ, իրենց պոչին շնորհիւ, մշտական շարժման մէջ են նման մանրաթելաւոր (ֆլամէլլէ) եւ յարաշարժ մանրադիտական էակներուն, որոնցմէ սերած է կենդանական աշխարհը հարիւրաւոր միլիոն տարիներ առաջ եւ որոնք այժմ եւս գոյութիւն ունին : Զուիկին վրայ խուժող միլիոնաւոր սերմնակենդաններէն մէկ հատը միայն, բախտի բերումով համ տակաւին անձանթ պատճառով մը, կը յաջողի ձուիկին մէջ մտցնել միայն գլուխը, որ կորիզն է, բեղմնաւորել զայն եւ կազմել ձուն (Էօֆ) :

Այդ պահուն իսկ բարբախտ կամ դժբախտ ժառանգականութիւն մը իր անճնճեւի դրոշմը կը դնէ պատահական միացումով կազմուած ձուին վրայ եւ կարելոր չափով մը կը պայմանաւորէ անկէ յառաջ գալիք երախային ապագան : Ինչպէ՞ս :

Ըսի թէ անցեալին մէջ, ի մէջ այլոց այն համոզումը կը տիրէր թէ ձուիկին եւ սերմնակենդանին միացումով ձուին մէջ անմիջապէս կը կազմուի կատարեալ, ամբողջական մարդու մը շատ փոքր, անտեսանելի մանրանկարը, որ աստիճանաբար զարգանալով, կը հասնի նորածինի եւ յետոյ չափահաս մարդու վիճակին :

Իրականին մէջ այդ մարդուկին հետքն իսկ զոյութիւն չունի: Ձուին մէջ ապագայ էակին ոչ մէկ մասը, ոչ մէկ զործարանը կամ անոր նախագիծը կը տեսնուի: Ամէն ինչ զօրութեանական (փոքրամիտ), ծածկազօր (1) վիճակի մէջ է եւ աստիճանաբար երեւան կուգայ:

Վերջին քանի մը տասնեակ տարիներու ընթացքին, մասնաւորաբար քանի մը տարիէ ի վեր, ժառանգականութեան ազդակները ճշտելու համար կատարուած հետազոտութիւնները աներեւակայելի զիւսերու յանդեցան:

Այդ հետազոտութիւնները երեւան բերին որ ձուիկին եւ սերմնակենդանին կորիզներուն մէջ շատ փոքր մարմիններ կը գտնուին, զոյգ զոյգ դասաւորուած: Աչքով անտեսանելի եւ մանրէի մեծութեամբ այդ մարմինները գունամարմին (frumotum) կը կոչուին, որովհետեւ կարգ մը ներկերով լաւ կը գունաւորուին եւ մանրադէտով տեսանելի կը դառնան:

Այժմ ստոյգ հաստատուած է որ աշխարհիս վրայ ապրող էակներու բոլոր բջիջները — մարդկային, կենդանական կամ բուսական — որոշ թիւով գունամարմիններ կը պարունակեն, որոնք ապրող, կենդանի էակը կը յատկանշեն: Անկենդան նիւթերը գունամարմին չունին:

Այդ գունամարմիններուն մէջն է որ կը գտնուին ժառանգական ազդակները, որոնց միջոցով էակ մը — մարդ, անասուն կամ բոյս — իրմէ յառաջացած սերունդին կը փախանցէ զինք յատկանշող բիւրաւոր գծերէն որոշ մաս մը:

Թէեւ մարմնի մը բոլոր բջիջները գունամարմիններու շարք մը կը պարունակեն, որ իւրաքանչիւր անհատի մէջ միշտ միեւնոյնն է, բայց ժառանգական փոխանցման կարողութիւնը վիճակուած է միայն արական եւ իգական բջիջներուն, այսինքն ձուիկին եւ սերմնակենդանին պարունակած գունամարմիններուն: Մարմնի մնացեալ բոլոր բջիջներուն գունամարմինները զուրկ են այդ կարողութենէն: Բոյսերու եւ բազմատեսակ ստորագաս կենդանիներու մէջ եւս սերմնակենդանին եւ ձուիկին համապատասխանող բջիջները միայն կրնան ժառանգական յատկանիշերը փոխանցել:

Կը հետեւի թէ՛ զուտ մարմնական, կամ ոչ-սեռային բջիջներու կրած նպատաւոր կամ վնասակար փոփոխութիւնները, այսինքն կեանքի ընթացքին ստացուած յատկանիշերը փոխանցելի կամ ժա-

(1) Ֆրանսերէնէ հայերէն բառարանները փոթանսիէլ զօրութեանական եւ փոթանսիալիթէն զօրութեանականութիւն քարգմանած են: Կը խորհիմ քէ ծածկազօր եւ ծածկազօրութիւն բառերը աւելի լաւ կ'արտայայտեն անոնց իմաստը:

ուանգական չեն: Օրինակ, եթէ մարդու մը թեւը կտրեն, անոր դա-
ւակը անթեւ չի ծնիր: Մինչդեռ սեռային բջիջներուն, հետեւաբար
անոնց դունամարմիններուն այս կամ այն պատճառով (դեղ, շոյ,
հիւանդութիւն) կրած լաւ կամ յաճախ գէշ փոփոխութիւնները ժա-
ռանգաբար փոխանցելի են:

Այս խնդիրն է որ, մօտ քսան տարի առաջ, սուր վիճարանու-
թեան նիւթ դարձաւ սովետական զիտուններու, մասնաւորաբար Լի-
սէնքոյի եւ Միչուրինի միջեւ, առանց փոխելու վերոյիշեալ տուեալ-
ները:

Հետեւաբար, ստացական յատկանիշերը ժառանգական չեն: Ժա-
ռանգականութիւնը կը փոխանցէ միայն այն արձանագրութիւնը որ
դրոշմուած է արդէն սեռային բջիջներուն մէջ: Նաեւ այդ արձանա-
գրութեան բնական հիմնափոփոխութիւնները (միւքսիոն), որոնք
հազուադէպ են, եւ կամ շոյերու, դեղերու եւ կարգ մը հիւանդու-
թիւններու ազդեցութեան տակ ստացական խաթարումները:

Ժառանգական կազմածը կամ արձանագրութիւնն է որ կը պայ-
մանաւորէ նախ տեսակը (էսքէս), որ բացարձակ է: Այսինքն մէկ տե-
սակէ մը ուրիշ տեսակ մը չի կրնար դուրս գալ: Մարդը՝ միայն մար-
դու, շունը՝ միայն շունի, վարդը՝ միայն վարդի ծնունդ կրնայ տալ:

Տեսակէն յետոյ ժառանգականութիւնը կ'որոշագրէ ցեղը (ռաս):
Յեղային ժառանգականութիւնը եւս բացարձակ է: Սպիտակամորթ
մը՝ միայն սպիտակամորթի մը, սեւամորթ մը՝ միայն սեւամորթի
մը ծնունդ կրնայ տալ, անշուշտ եթէ նախապէս խառնուրդ պատա-
հած չէ:

Ժառանգականութիւնը նաեւ անհատական է, բայց ոչ բացար-
ձակ: Այսինքն ենթական անպատճառ իր հօրը կամ մօրը չի նմանիր,
այլ նախորդող սերունդներէն իր ծնողքին փոխանցուած բիւրաւոր
յատկանիշերէն պատահական հաւաքածոյ մը կը ստանայ, ինչ որ
անհուն այլազանութիւն յառաջ կը բերէ միեւնոյն ցեղի անհատնե-
րուն մէջ:

Այսուհանդերձ, անհատական յատկանիշերու ժառանգական փո-
խանցումը ենթակայ է կարգ մը օրէնքներու: Դար մը առաջ դանոնք
երեւան բերող չէի կրօնաւորին անունով կոչուած այդ օրէնքները —
Մէնտէլեան օրէնքներ — թոյլ կուտան նախատեսելու այս կամ այն
բնականոն յատկանշի մը (օրինակ կապոյտ եւ սեւ աչք), կամ ախտա-
բանական խաթարումի մը (օրինակ՝ արեան դիւրահոսութիւն) դա-
ւակներուն փոխանցման հաւանականութիւնն ու համեմատութիւնը:

Գունամարմիններուն թիւը կը տարբերի կենդանիին կամ բոյսի
տեսակին համեմատ: Քաղաքի ճանճին բջիջները միայն չորս գոյգ
կը պարունակեն, վարդը՝ տասներկու գոյգ, հիւսիսային շմբանդէն

և մարդակապիկը, մարդուն ամէնէն մօտ կենդանիները 24 զոյգ : Իսկ մարդուն մարմնական բոլոր բջիջները միշտ 23 զոյգ — 46 հատ — ունին, բացի սեռային բջիջներէն որոնք 23 հատ կը պարունակեն երբ հասունցած են : Սերմնակենդանին և ձուիկին միացումով, երկու սեռային բջիջներուն համապատասխան գունամարմինները — մէկը՝ արական, միւսը՝ իգական — իրարու մօտ կուգան եւ 23 զոյգ կը կազմեն :

Միւկնոյն ցեղի անհատներուն բջիջները միշտ նոյն թուով գունամարմին կը պարունակեն : Այդ թիւը, բնականոն պայմաններու մէջ, անփոփոխ կը մնայ : Բայց իւրաքանչիւր անհատի գունամարմիններուն ժառանգական կազմածը հիմնովին կը տարբերի, քանի որ անոնց կէսը հօրենական եւ կէսը՝ մօրենական է, որոնք նախնիքներէն փոխանցուած անհաշուելի յատկանիշերու պատահական հաւաքածոյ մը կը կրեն :

Մարդկային բջիջներուն պարունակած 23 զոյգ գունամարմիններէն մէկ զոյգը սեռավար կամ սեռածին (կոնսոսմ) է, այսինքն ձուին մէջ ապագայ էակին սեռը կ'որոշազրէ եւ յետագային կը վարէ գայն : Միւս 22 զոյգերը մարմնավար (օթ-նոսմ) են, այսինքն ձուին մէջ մարմնին մնացեալ բոլոր մասերուն կառուցումը կը պայմանաւորեն եւ յետագային անոնց գործունէութիւնը կը վարեն :

Գունամարմիններու զոյգերը իրարմէ կը տարբերին իրենց ձևով, մեծութեամբ, կարգով, դիրքով եւ ժառանգական կազմածով : Կենսաբանները առայժմ թուանշաններով միայն կը զանազանեն գանոնք, 1էն մինչեւ 23 : Սեռային զոյգը 23րդն է : Միւս 22 զոյգերուն ժառանգական կազմածը տակաւին անծանօթ կը մնայ :

Իւրաքանչիւր զոյգի երկու գունամարմինները նմանակից են եւ պաշտօնով իրարու կը համապատասխանեն : Անոնց մէկը՝ մայրական է եւ ձուիկէն կուգայ, իսկ միւսը՝ հայրական է եւ սերմնակենդանէն կուգայ : Երկուքն ալ արտաքին երեւոյթով իրարու կը նմանին : Բացառութիւն կը կազմէ միայն արական սեռը սնօրինող զոյգը :

Արգարեւ իգական սեռային զոյգին երկու գունամարմիններն ալ երկու XX կը ձևացնեն . իսկ արական սեռային զոյգին մէկ կ'ունամարմինը՝ Xի, իսկ միւսը Yի ձևը ունին : Այս վերջինը (Y) նախորդէն (X) երեք անգամ աւելի փոքր է եւ կը թուի անոր ենթարկուած ըլլալ : Այնպէս որ, իրականին մէջ, տկար սեռը այրն է :

Ժառանգականութեան մէջ գունամարմիններուն կատարած հիմնական դերը ճշդելէ յետոյ, կենսաբանները յաջողեցան աւելի խորը թափանցել անոնց կազմին մէջ : Վերջին քանի մը տարիներու ընթացքին կատարուած հետազօտութիւնները երեսան բերին որ գունամարմիններէն իւրաքանչիւրը կը պարունակէ քանի մը հազար, թերեւս շատ աւելի, շատ փոքր մարմիններ, որոնք ծիւն (ժէն) կոչուած են :

Այնքան փոքր են որ մէկ միլիոն հատը հազիւ գնդասեղի գլխու մեծութիւն ունեցող գնդիկ մը կրնայ կազմել: Գունամարմիններու ամբողջ շարքը — 23 Կոյզ — 56էն 80,000, ոմանց կարծիքով քանի մը հարիւր հազար կամ մէկ միլիոն ծին կը պարունակէ:

Այժմ ստուգուած է որ ծիներն են ժառանգական յատկանիշերը կրող եւ փոխանցող իսկական ազգակները: Անոնք են որ զօրութենական վիճակի մէջ կը կրեն էակ մը բնորոշող բիւրաւոր գիծերը, նման ծածկազրութեան (form) մը, որոնք աստիճանաբար երեւան պիտի գան ապագայ էակին մէջ: Մերթ միակ ծին մը եւ մերթ քանի մը ծիներ միասին, իրենց տեղով, դիրքով եւ կարգ մը զուգարստանութիւններով կը պայմանաւորեն այս կամ այն յատկանիշը:

Ծիններու միջոցով է որ կը փոխանցուին ոչ միայն տեսակը, ցեղը եւ սեռը, այլեւ բազմաթիւ Ֆիզիքական յատկագծեր: Անոնց մէջ անջնջելիօրէն արձանագրուած է թէ ապագայ էակը մա՞րդ է, անասո՞ւն կամ բոյս պիտի ըլլայ: Եթէ մարդ է, է՞գ թէ արու, սպիտակամո՞րթ, սեւամորթ կամ դեղնամորթ, սեւաչուի՞ թէ կապտաչուի, թո՞ւի թէ խարտեաչ պիտի ըլլայ: Սե՞ւ, շագանակագո՞յն թէ խարտեաչ մազեր պիտի ունենայ: Գանկը երկա՞յն կամ կարճ, շրթունքները հա՞ստ թէ բարակ, մորթը՝ թա՞նճր թէ նուրբ, ծնօտը ցցուա՞ծ կամ ներս քաշուած, ատամները հաստատո՞ւն թէ խախտտ, ականջները՝ լա՞յն եւ մեծ կամ փոքր եւ նուրբ, քիթը՝ ուղի՞ղ, կոր կամ տափակ, տեսողութիւնը լա՞ւ թէ գէշ, հերաւո՞ր թէ հերաթափ, հիւանդութիւններու դէմ տոկո՞ւն թէ տկարակազմ պիտի ըլլայ, եւայլն: Հասակը, մորթին գոյնին շեշտաւորումը, աճումին արագութիւնը, այս կամ այն հիւանդութեան (աղեթափութիւն, լայներակութիւն, եւայլն) դիւրբնակալութիւնը արձանագրուած են ծիներուն մէջ: Բայց այս պարագաներուն մէջ ժառանգականութեան հետ միջավայրը եւս մեծ դեր կը կատարէ:

Մարմնական եւ բնախօսական էական բազմաթիւ յատկանիշերէն զատ, ժառանգականութիւնը կը պայմանաւորէ նաեւ մտային կարողութիւնները, ընդունակութիւնները, ձիրքերը (երաժշտական, նկարչական, ուսողական, եւայլն), ինչպէս նաեւ զգածական-հոգեկան ձգտումներն ու հակումները: Սակայն միջավայրը կրնայ նպաստաւորել, սանձել կամ բոլորովին արգիլել մտային թաքուն կարողութիւններուն եւ հոգեկան լաւ կամ վատ հակումներուն երեւումն ու լիովին իրականացումը:

Կարգ մը ախտաբանական վիճակներ եւ հիւանդութիւններ եւս, օրինակ տալթոնիզմը, որուն ենթական կը շփոթէ կանանչ եւ կարմիր գոյները, արեան դիւրահոսութիւնը (էմոֆիլի), մոնկուակերպութիւնը, թերեւս խլիրդը, եւայլն ծնական կամ սերնդական ծագում ունին, այսինքն արդիւնք են ծնողներէն խաթարեալ ծինի մը փոխան-

ցումին կամ քանի մը ծիներու անրնական համախմբումին :

Ժառանգականութեան զազտնիքները մինչեւ այստեղ լուսարանելէ յետոյ, զիտունները, շատեր Նոպելեան մրցանակին արժանացած, ուզեցին անշուշտ գիտնալ թէ ժառանգական յատկանիշերը ինչպէ՞ս կը գրոշմուին եւ կը մնան ծիներու մէջ :

Նորանոր գործիքներու, մասնաւորաբար ելեկտրոնիկ մանրադէտին շնորհիւ կարելի եղաւ երեւան բերել եւ հաստատել որ ծիները եւս բարդ մարմիններ են եւ թէ անոնցմէ իւրաքանչիւրը կը պարունակէ շղթայաձեւ եւ անհունորէն նուրբ քիմիական նիւթ մը, որ այժմ ծանօթ է ալիտ տեգոֆսիքիպոնիւֆիլէիֆ անուան տակ, կամ, համառոտ, Ա. Տ. Ն. :

Այս նիւթն է որ էսպէս կեանքին հիմը կը կազմէ, կեանքը կը պայմանաւորէ : Կենսաւոր բոլոր բջիջները — մարդկային, կենդանական եւ բուսական — այդ միեւնոյն նիւթը կը պարունակեն : Մարդը, անոր շուներ կամ կատուն, անոնց վրայ ցատկոզ լուն, ոտնակոխ ըրած խոտը, մանրէները եւ ժահրերը (վիրիւս) — մանրէներուն մանրէները — բոլորը այդ նիւթին կը պարտին իրենց կեանքը :

Շատ դժուար է Ա. Տ. Ն. ի անհունորէն բարդ բազազրութիւնը բացատրել, մանաւանդ որ բազմաթիւ կարեւոր կէտեր տակաւին լուսաբանուած չեն : Բայց անոր դերը այնքան էական է եւ ապշեցուցիչ որ պիտի փորձեմ այդ մասին վերիվերոյ գաղափար մը տալ, հակառակ հայերէն գիտական բառերու անբաւականութեան :

Երեւակայեցէք կեանքին հիմնանիւթը կազմող վերոյիշեալ Ա. Տ. Ն. ը որպէս ոլորուն ժապաւէն մը կամ պարուրածեւ սանդուխ մը : Ժապաւէնին երկու եզերքները կամ սանդուխին իւրաքանչիւր բազրիքը փոխն ի փոխ չաքարային եւ Փոսֆորային նիւթերու մասնիկներով բանուած են : Իսկ չորս բորակածնային (ազօքէ) ազատարբեր (պլազ) զոյգ զոյգ հորիզոնաբար կը միացնեն սանդուխին չաքարային մասերը, կազմելով հարիւր հազարաւոր կամ միլիոնաւոր աստիճաններ :

Բորակածնային երկու աստիճանները եւ զանոնք եզերող չաքարային եւ Փոսֆորային բազրիքները ամբողջութիւն մը, աներեւակայելիօրէն փոքրիկ հատիկ մը (նիւֆլէոքիտ) կը կազմեն, որ իրականին մէջ գրի մըն է կամ քանի մը գրի կը համապատասխանէ : Այս քիմիական գիրերով է որ բնութիւնը Ա. Տ. Ն. ի ժապաւէնին վրայ կ'արձանադրէ իւրաքանչիւր անհատի մանրամասն եւ ամբողջական յատկանիշերը :

Ա. Տ. Ն. ը իր տեսքով, ձեւով եւ շինանիւթի վեց տեսակներով — չաքարային, Փոսֆորային եւ չորս բորակածնային — նոյնն է թէ մարդուն, թէ անասուններուն, ամենամեծէն մինչեւ մանրէն, թէ բոյսերուն մէջ, ամենէն հսկայ ծառէն մինչեւ աննշան խոտը կամ բորբոսը :

Եւ սակայն անոր երկայնութիւնը, ոլորներու կամ պարոյրներու իրարմէ հեռաւորութիւնը, բորակածնային չորս ազատարբերուն քանակութիւնը, շարուածքը, յաջորդութիւնը հիմնովին կը տարբերին տեսակէ տեսակ, ցեղէ ցեղ եւ անհատէ անհատ: Իւրաքանչիւր էակ միայն իրեն յատուկ ժառանգական կազմած մը ունենալով, զայն բնորոշող անհաշուելի գիծերուն արձանագրութիւնը կը պահանջէ քիմիական «գիրերու» անհուն զուգախառնութիւններ, որոնց թիւը 250,000 միլիառի կրնայ հասնիլ, կ'ըսեն գիտունները:

Քիչ մը աւելի յտակ զազափար կազմելու համար երեւակայցէք աշխարհիս վրայ դարերէ ի վեր լոյս տեսած գրական, գիտական եւ այլ անհաշուելի եւ բազմատեսակ հրատարակութիւնները: Բոլորին շինանիւթը թուղթն է: Բայց իւրաքանչիւր հրատարակութեան նիւթը, հետեւաբար պարունակութիւնը բոլորովին տարբեր են, շնորհիւ այբուբենի երկու-երեք տասնեակ գիրերու բիւրաւոր զուգորդութիւններուն, որոնք թոյլ կուտան, բառեր կազմելով, մարդկային մտքին բոլոր արտայայտութիւնները արձանագրել:

Նոյնը կարելի է ըսել երաժշտական անհամար կտորներուն մասին, որոնք կը յօրինուին զծաշարին վրայ երաժշտական եօթը խաղերուն եւ անոնց եօթախաղերուն անվերջ յարակցութիւններով:

Հաշիւ եղած է — մի հարցնէք թէ ինչպէս — որ ժահրի մը պարունակած Ա. Տ. Ն.ի մօտ մէկ երրորդ միլիմեթր երկայնութիւնը ունի եւ թէ անոր բազմաթիւ մասնիկներէն իւրաքանչիւրը մօտ 450,000 քիմիական «գիր» ունի: Մանրէն՝ տասն անգամ աւելի:

Գալով մարդուն, Նոպելեան մրցանակաւոր գիտուն մը՝ Տոքթ. Պիտըր կը գրէ թէ մարդկային միայն մէկ բջիջի 23 զոյգ գունամարմիններու տասնեակ կամ հարիւր հազարաւոր ծիներու պարունակած Ա. Տ. Ն.ը ծայրէ ծայր դրուելով կրնայ մօտ 33 սանթիմեթր (ուրիշներ 90էն 150 սմ. կ'ենթադրեն) երկայնութեամբ ժապաւէն մը կազմել: (1): Եթէ կարելի ըլլայ կեանքի այդ ժապաւէնին վրայ արձանագրուած իւրաքանչիւր անհատի բիւրաւոր յատկանշերուն համապատասխանող ծածկագրութեան թափանցել եւ զանոնք բառերու վերածել, արձանագրութիւնը պիտի կրնար համայնագիտարանի մեծութեամբ քառասուն հատոր լեցնել:

Առայժմ միայն քացախի ճանճին չորս գունամարմիններուն ծածկագրութիւնը մասամբ լուսարանուած է եւ կարելի եղած է շատ մը ծիներու տեղերը եւ անոնց համապատասխանող յատկանիշերը ցոյց տուող գունամարմնային քարտէս մը պատրաստել: Իսկ մարդուն ժա-

(1) Ա. Տ. Ն.ը երեւակայական նիւթ մը չէ: Մեծ քանակութեամբ կը հանուի կարգ մը մարմիններէ, քանի որ բոլոր էակներու հիմնական մասը կը կազմէ, եւ շատ մը գորացուցիչ մասնադեղերու (սիւսիալիթէ) պատրաստութեան կը ծառայէ:

ուանդական ծածկազրութիւնը ցարդ զրեթէ անթափանցելի մնացած է : Գրտենք միայն որ բեզմնաւորումէն անմիջապէս յետոյ, այդ արձանազրութիւնները հրամաններու կը վերածուին, ինչպէս մազնիսաձայնի մը (մամետքոփոն) երիզին արձանազրութիւնը խօսքի կամ երգի, անմիջապէս որ մեքենան շարժման մէջ կը զրուի :

Ծրնեբու կենսանիւթէն — Ա. Տ. Ն. էն — մեկնող այդ հրամանները քիմիական սուբհանդակներու միջոցով բջիջին նախահիւթին մէջ գտնուող կարգ մը քիմիական նիւթեր շարժման մէջ կը դնեն եւ անոնց իրբեւ կազապար կը ծառայեն : Ասոնք ալ, անմիջապէս կը սկսին ճիշդ քսան տեսակ հիմնական թթուներ (ասիւս ամինէ) պատրաստել, որոնց բազակցութիւններէն յառաջ պիտի դան այլազան նախանիւթերը (փրոքէին) եւ թթիւսորները (անէզիմ) : Ասոնք հիմը պիտի կազմեն ապագայ էակին բազմատեսակ բջիջներէ բազկացած հիւսկէններուն եւ գործարաններուն եւ պիտի ապահովեն անոնց պաշտօնավարութիւնն ու հաւասարակչութիւնը : Անոնցմէ մէկ տեսակին պահասը անպատճառ մարմնական կամ մտային թերակազմութիւն մը յառաջ կը բերէ :

Բեզմնաւորումի վայրկեանէն սկսեալ, բջիջներուն անդադար բազմապատկումին բերումով, իւրաքանչիւր նորակազմ բջիջ գննամարմիններուն հետ կը ստանայ կենսավար նիւթի — Ա. Տ. Ն. ի — իր բաժինը, հետեւաբար ժառանգական մասնայատուկ ծածկազրութեան պատճէնը, որ ենթակային բջիջներուն մէջ կը մնայ մինչեւ անոր մահը : Այնպէս որ չափահաս մարդու մը 60,000 միլիառ բջիջներուն պարունակած Ա. Տ. Ն. ը ենթակային ամբողջ կեանքի ընթացքին իր հրամաններով կը վարէ այլազան բջիջներուն բազմացումն ու աճումը, նորոգութիւնն ու գործունէութիւնը, համաձայն ժառանգական սկզբնական եւ անհատական յատկազօր տուեալներուն :

Ամփոփենք :

Մարդկային, կենդանական եւ բուսական բոլոր էակները կազմուած են բջիջներէ, թիւով՝ մէկէն մինչեւ քանի մը տասնեակ հազար միլիառ : Իւրաքանչիւր բջիջ կորիզ մը ունի, որ շրջապատուած է նախահիւթով : Իւրաքանչիւր կորիզ քանի մը զոյգ գունամարմին ունի, որոնք կը կրեն եւ կը փոխանցեն ժառանգական բոլոր տուեալները : Անոնց թիւը կը տարբերի տեսակին եւ ցեղին համեմատ :

Մարդկային բջիջներուն կորիզները բնականոն պայմաններու մէջ միշտ 23 զոյգ գունամարմին կը պարունակեն, ձեւով եւ մեծութեամբ տարբեր, որոնց մէկ շարքը հայրական է, իսկ միւսը՝ մայրական : Իւրաքանչիւր էգ գունամարմին իր արու նմանակցին հետ գուգորդուած է : Քսաներէ գոյգերէն մէկը սեռավար է, միւսները՝ մարմնավար են :

Իւրաքանչիւր դունամարմին քանի մը հազար եւ աւելի ծին կը պարունակէ : Որոշ յատկանիշերու համապատասխանող ծիները միեւնոյն տեղը կը գրաւեն իւրաքանչիւր զոյգի էգ եւ արու նմանակից դունամարմիններուն վրայ :

Ծիները կը բաղկանան Ա . Տ . Ն . կոչուած շատ բարդ քիմիական նիւթէ մը որ կեանքին հիմնական յատկանիշն է եւ հիմնական կենսանիւթը ապրող բոլոր էակներուն :

Այս կենսածին նիւթին վրայ , քիմիական վեց տարրերու անհամար գոլգոլութիւններով անջնջելիօրէն եւ ծածկագիր արձանագրութեամբ են իւրաքանչիւր էակը բնորոշող ժառանգական բերւաւոր յատկանիշերը :

Քիմիական ծածկագրութեան համապատասխանող ժառանգական կազմածը կը փոխանցուի , կենդանական եւ բուսական քանի մը պարզաներու բացառութեամբ , միայն սեռային բջիջներու միացումով եւ անոնց բազմացումով :

Այժմ տեսնենք թէ ինչ փուլերէ կ'անցնի ձուլիկին եւ սերմնակենդանին միացումով կազմուած ձուն :

Բեղմնաւորումէն զրեթէ անմիջապէս յետոյ , ձուն երկուքի բաժնուելով երկու նոր բջիջներու ծնունդ կուտայ : Ասոնք ալ իրենց կարգին կը կիսուին եւ այսպէս անվերջ բազմանալով արագօրէն կը զոյացընեն այն բիւրաւոր բջիջները որոնք անհրաժեշտ են մարմնի մը շինութեան եւ վերանորոգման համար :

Երբորդ շարթուան վերջը սաղմիկին (անպրիոն) բջիջները , տակաւին անորոշ եւ շատ փոքր գնդիկ մը կը կազմեն , 2-3 միլիմէթր մեծութեամբ եւ մօտ 4 սանթիկրամ կշիռով : Այս շրջանին է որ կը սկսի անդամներուն եւ մարմնի այլ մասերուն զանազանումը եւ կազմութիւնը զորս դիւրաւ կրնան խաթարել այլ եւ այլ պատճառներ , ինչպէս ալքոլամոլութիւնը , հարգ մը հիւանդութիւններ եւ դեղեր :

Չորրորդ շարթէն սկսեալ սիրտը կը սկսի բարախել : Ութերորդ շարթուն վերջը սաղմիկը սաղմ (ֆէթիւս) կը կոչուի , 3-4 սմ . մեծութիւն ունի եւ 20-40 կրամ կը կշռէ , արդէն կազմուած անդամներով եւ պղտիկ մարդու մը երեւոյթով :

Հինգերորդ ամսուն վերջը ջղային դրութիւնը արդէն կազմուած է իր ամբողջ ջիօծներով (նէօրոն) , որոնք կը սկսին տարրական անդրադարձներ ունենալ եւ հակազդել մօրմէն ստացուած ուղղակի կամ անուղղակի գրգիռներուն :

Իններորդ ամսուն վերջը , նորածինը ձուէն 2500 անգամ աւելի մեծ կ'ըլլայ եւ 800 միլիոն անգամ աւելի կը կշռէ իր 50 սմ . հասակով եւ մօտ 25,000 միլիաոի հասած բջիջներով , որոնց բոլորն ալ

սկզբնական բջիջին — ձուին — գունամարմիններուն, ծիներուն եւ ժառանգական կազմածի նոյն բաժինը ունին :

Ի՞նչպէս :

Իւրաքանչիւր բջիջի կիսաբաժանման ատեն, սկսելով մայր բջիջէն, ձուէն, գունամարմինները եւ: Իրենց երկայնքին կը կիսուին եւ երկու շարք 23 գոյգ կը կազմեն, որոնք կ'անցնին նորակազմ երկու բջիջներուն մէջ: Այս կերպով մարդկային մարմինը կազմող բոլոր բջիջները միշտ 23 գոյգ գունամարմին կը ստանան: Եթէ խաթարում մը չպատահի, այս թիւը անփոփոխ կը մնայ մինչեւ ենթակային մահը, քանի որ բջիջները անդադար այս ձեւով կը բազմանան եւ այլապան հիւսկէնները կը վերանորոգեն: Նոյն երեւոյթը տեղի կ'ունենայ կենդանական եւ բուսական բջիջներուն մէջ:

Սեռային կամ սերնդածին բջիջները եւս — ձուիկը եւ սերմնակենդանը — երբ տակաւին հասուն չեն, մարմնի միւս բջիջներուն նման 23 գոյգ գունամարմին կը պարունակեն: Երբ արբունքի շրջանը կուզայ, կը սկսին հասուննալ, կիսաբաժնուիլ եւ բազմանալ: Բայց գունամարմինները, փոխանակ իրենց երկայնքին կիսուելու, ինչպէս տեղի կ'ունենայ մարմնավար բոլոր բջիջներուն մէջ, պարզապէս իւրարմէ կը զատուին, կը հեռանան եւ 23 հատ ունեցող երկու շարք կը կազմեն: Երկու շարքերը, որոնց մէկը արական է եւ միւսը՝ իգական, նորակազմ սերնդածին երկու բջիջներուն կը բաշխուին: Հետեւաբար սեռային հասուն բջիջները, էգ ըլլան թէ արու, փոխանակ 23 գոյգի, միայն 23 հատ գունամարմին կ'ունենան: Զուիկի եւ սերմակենդանին միացումով գոյգերը կը վերակազմուին:

Այստեղ երեւան կուզայ ժառանգականութեան գաղտնիքներէն մէկը, բախտորոշ առաջին վիճակահանութիւն մը:

Երբ սեռային-ճննդական հասուն բջիջ մը կը կիսաբաժնուի, եւ 23 գոյգ գունամարմինները 23 հատնոց երկու շարքերու կը վերածուին, նորակազմ երկու բջիջներէն իւրաքանչիւրը արական կամ իգական ամբողջական շարքը չի ստանար, այլ մաս մը հայրական եւ մաս մըն ալ մայրական գունամարմին կը վիճակի անոր, ընդամէնը միշտ 23 հատ:

Ի՞նչ համեմատութեամբ կը կատարուի այդ բաշխումը:

Համեմատութիւնը կախում ունի միայն պատահականութենէն: Բնութիւնը կարծէք վիճակ կը քաջ է, ըստ բախտի, իւրաքանչիւր սեռի գունամարմիններէն — հայրական եւ մայրական — մաս մը կը բաշխէ մէկ բջիջին, մաս մըն ալ միւս բջիջին: Օրինակ, 8 մայրական եւ 15 հայրական մէկկին, իսկ 15 մայրական եւ 8 հայրական միւսին: Ինչ որ էական կարեւորութիւն ունի ժառանգական տեսակէտէն, քանի որ իւրաքանչիւր գոյգի երկու գունամարմինները միեւնոյն պաշ-

տօնը ունենալով հանդերձ, հիմնովին կը տարբերին իրենց ծիներու քիմիական արձանագրութեամբ, հետեւաբար ժառանգական յատկանիշերով: Հետեւաբար նորակազմ իւրաքանչիւր սեռային բջիջի ստացած հայրական եւ մայրական գոնամարմիններու համեմատութիւնն է որ պիտի պայմանաւորէ, եթէ բեղմնաւորուի, անոր ժառանգական կազմածը եւ անկէ յառաջ դալիք երախային մէջ հայրական կամ մայրական յատկազօծերու գիտակցութիւնը:

Այդ է պատճառը որ ընտանիքի մը մէջ, այս կամ այն զաւակը աւելի հօրը կամ մօրը, կամ անոնց նախնիքներէն մէկուն կը նմանի եւ թէ աղջիկ կամ մանչ զաւակները կրնան քիչ-շատ իրարու նմանիլ կամ բոլորովին աննման ըլլալ Ֆիզիքսպէս, մտաւորապէս եւ նկարագրով:

Կը պատմեն թէ Պէրնար Ծօի սիրուհին, որ ծանօթ եւ գեղեցիկ գերասանուհի մըն էր, օր մը ըսեք է Ծօին, որ տղեղ էր: «Ի՞նչ լաւ պիտի ըլլար, եթէ աղջիկ մը ունենայինք, անշուշտ քեզի պէս խելացի եւ ինծի պէս գեղեցիկ պիտի ըլլար»: «Ինչ գիտենք որ քո՛ւ խելքդ եւ իմ գեղեցիկութիւնս չպիտի ունենար», պատասխաններ է սրամիտ գրագէտը իրաւամբ, քանի որ բնութիւնը միայն կը խաղայ գոնամարմիններուն հետ եւ կը կատարէ անոնց բաշխումը:

Այսպէս ուրեմն գոնամարմիններուն եւ անոնց պարունակած տասնեակ հազարաւոր ծիներուն պատահական բաշխումի պարագաները, ինչպէս նաեւ անոնց անհամար խառնուրդներն ու զուգադրութիւններն են որ նախ եւ առաջ կը պայմանաւորեն անհատներու Ֆիզիքական եւ հոգեմտային վիճակը, հետեւաբար անոնց բախտադրութիւնը: Անոնք են որ անհուն զանազանութիւն կը դնեն աշխարհի երեք միլիառ մարդոց, նոյնիսկ միեւնոյն ծնողքէն սերած զաւակներուն միջեւ: Ահա թէ ինչու աշխարհիս վրայ ոչ մէկ մարդ մարմնական, բնախօսական եւ հոգեմտային նմանութիւն ունի ուրիշ մարդու մը հետ: Իւրաքանչիւր մարդէ միայն մէկ օրինակ կայ եւ միշտ այդպէս պիտի ըլլայ, նոյնիսկ եթէ մարդկութեան ներկայ թիւը հազարապատկուի:

Այս է պատճառը որ տակաւին անկարելի է այրած մորթի մը տեղ ուրիշի մը առողջ մորթը պատուաստել, նոյնիսկ եթէ ենթակաները միեւնոյն ծնողքէն սերած են: Որովհետեւ իւրաքանչիւր մարմին միայն իրեն յատուկ կենսաքիմիական կազմ մը ունի, որ կը մերժէ, իբրեւ օտար, ամէն ինչ որ նոյն կազմը չունի:

Բացառութիւն կը կազմեն միայն իսկական երկուորեակները: Ասոնց գոյութիւնը, յատկանիշերը եւ հակազդեցութիւնները բնական փորձարկութիւն մը կարելի է նկատել, որ կը հաստատէ այն հիմնական դերը զոր ժառանգականութիւնը կը կատարէ Ֆիզիքական, բնախօսական եւ յատկազօծերու փոխանցման մէջ:


Արդարեւ իսկական երկուորեակներ կը կազմուին երբ, տակա-

ւին անծանօթ պատճառով մը, ձու մը կը կիսուի եւ երկու կէսերը առանձինն կը զարգանան իրենց 23 զոյգ գունամարմիններով: Միայն ձուն կրնայ երբեմն երեքի, չորսի կամ հինգի բաժնուիլ եւ կազմել երկուորեակներ, ինչպէս Քանատայի Տիոն քոյրերը: Իսկական երկուորեակները միշտ նոյն սեռը ունին, քանի որ միեւնոյն ձուին կիսաբաժանումէն յառաջ կուզան: Իսկ կեղծ երկուորեակները, միեւնոյն շրջանին բեղմնաւորուած երկու կամ աւելի ձուիկներէ յառաջ կուզան, երբ կին մը փոխանակ մէկի, երկու կամ աւելի ձուիկներ կ'արտադրէ միեւնոյն ամսուն մէջ: Անոնք կրնան տարբեր սեռ ունենալ, բայց միշտ տարբեր ժառանգական կազմած ունին եւ ամէն տեսակէտով իրարմէ կը տարբերին այնքան որքան իրարու յաջորդող զաւակները: Մինչդեռ իսկական երկուորեակները միեւնոյն ժառանգական կազմածը ունին, հետեւաբար զրեթէ միշտ յար եւ նման են սեռով, մատներու զրոշմով, Փրիդքական այլազան մանրամասնութիւններով, հոգեբանական կառոյցով, ձգտումներով եւ հակումներով, ինչպէս նաեւ այս կամ այն ախտաբանական վիճակին ենթարկուելու ընդունողականութեամբ: Անոնք յաճախ միեւնոյն ձիւրքերը կ'ունենան եւ միեւնոյն արհեստը կ'ընտրեն: Անոնցմէ մէկը եթէ տկարամիտ, խաբերայ, չարագործ ըլլայ կամ մոլութիւն մը ունենայ, միւսն ալ յաճախ նոյն հակումները կ'ունենայ, նոյնիսկ եթէ միւսէն հեռու ապրի: Նոյնը հիւանդութիւններու համար: Այսուհանդերձ տարիներու ընթացքին մարմնական եւ հոգեմտային որոշ տարբերութիւններ կրնան երեւան գալ, միջավայրին ազդեցութեան տակ եւ կամ ձուին կիսուելու շրջանին պատահած աննշան անհաւասարութեան կամ խանգարումի մը հետեւանքով:

Պատահականութիւնը կը կանխորոշէ նաեւ սեռը: Այդ որոշադրութիւնը տեղի կ'ունենայ այն վայրկեանին իսկ երբ ձուն կը կազմուի: Ահա թէ ինչպէս:

Ըսի արգէն թէ մայրական սերնդական (ժերմիւնաթիւ) կամ սեռային հասուն բջիջը — այսինքն ձուիկը — միայն մէկ սեռային գունամարմին կամ X մը ունի, որ միշտ էք է, քանի որ սեռային մայր բջիջի մը երկու էգ գունամարմիններուն XXերուն — բաժանումին հետեւանքն է: Իսկ հայրական սեռային հասուն բջիջը — սերմնակենդանը — կամ էգ (X) կամ արու (Y) գունամարմին ունի, քանի որ հասունցող մայր բջիջին մէջ սեռային զոյգ գունամարմիններէն մէկը էգ (X) եւ միւսը արու (Y) է: Անոնց բաժանումով, միլիոնաւոր սերմնակենդաններուն կէսը՝ էգ եւ միւս կէսը՝ արու գունամարմին կ'ունենան:

Արդ, բեղմնաւորումի պահուն, եթէ էք (X) գունամարմին ու-



GISELE BAZAN

(Extrait d'une conférence faite à Paris, 1965)

GRÉGOIRE DE NAREK POÈTE DE L'AN MIL

Je voudrais essayer de vous parler de celui que l'on a appelé « le poète de l'An Mil ». De celui qui fut un grand saint : **Grégoire de Narek**. Pour réparer une injustice, car, cet homme admirable est encore inconnu pratiquement en Occident. La crainte de lettrés Arméniens, intimidés par les conventions de notre langue écrite, ont hésité à l'exposer dans une aventure. Mais, un jeune poète Luc-André Marcel a tenté et réussi, à nous rendre des textes dans toute leur beauté, traduits directement de l'arménien ancien, du grapar, il s'est assuré le concours de l'érudit H. Berbérian et les « **Cahiers du Sud** » ont contribué à l'édition de

l'ouvrage sur Grégoire de Narek. C'est à ceux-ci que je dois d'avoir et voulu vous faire aimer Narek; car aimer est plus difficile qu'admirer et si l'on peut admirer et aimer, je crois que Grégoire de Narek est de ceux-là.



Arménie signifie : route de Dieu, en conséquence : 'chemin des tempêtes. Les menaces bibliques s'y exécutent, les épreuves semblent, sur ce sol, tre gratuitement infligées. Mais parce qu'elle est terre de pillage et de dévastation, elle entend bien, en regard de la mort, l'être aussi de résurrection. Que l'Arménie se soit éprise de l'Occident, restera toujours, aux yeux de l'Asie comme un crime.

La poésie s'enrichit aux catastrophes. Elle fait son pain quotidien de cendres pour une plus vivace et insolente beauté, l'Arménie par ses malheurs ne peut qu'enfanter encore et toujours des poètes.

C'est en 1953 que l'on situe le millénaire de la mort de Grégoire de Narek. Nul plus que lui n'exigea de soi-même une justice de vivre. Nulle parole ne réclama plus impérieusement l'incarnation. Mais dans l'inachèvement de ce monde, il lui fallait naître tout céleste et, pour cela, s'infliger le difficile exercice d'une poésie de sainteté.

C'est sous le règne du roi Achot le Charitable, en 951 qu'il naquit à Narek en cette Arménie, qui, par miracle, était tranquille. Ani, la capitale prestigieuse flamboie de mille églises et palais. Les érudits se penchent sur la littérature grecque et syriaque. Ces prospérités lui semblent suspectes, il sait que tout salut est individuel et que la vertu d'un peuple importe davantage que son bonheur. Un seul vrai problème, la rédemption des hommes, il faut forger la grâce pour obtenir la Rédemption.

Son père l'evêque Khosrov Antsévatzi, selon la coutume, l'avait mis dès l'adolescence au monastère de Narek. Il y fut élevé en sagesse et en sainteté et y demeura jusqu'à son martyre.

On dit que la Vierge, tenant le Christ dans ses bras lui apparut au-dessus de l'île d'Akhtamar qu'il est monté vivant au ciel et y demeure. On le nomma l'Angélique et il fut canonisé par... l'église catholique.

Les occidentaux, le plus souvent, tendent à une séparation de l'âme et du corps. Ils méprisent ce dernier. C'est une infirmité dont l'âme ne devrait n'avoir que faire. Dieu ne les habite point sous les espèces de la Chair, des Os, du Sang, du Souffle, mais seulement pur Esprit. Or, Grégoire de Narek, le moins intellectuel des saints, entend ne pas

désunir le corps de l'âme, non plus l'essence divine de la substance divine. Le péché est pour lui cette désunion même. Il ne se macère que pour obtenir le droit de faire alliance avec son corps, en justice et en éternité. Son sang doit être, lui aussi, un réceptacle de la divinité. De là, cette ardeur à concrétiser les attributs de l'Indivisible même à se vider de soi pour mieux les incarner. De là, en conséquence, le merveilleux relief de sa poésie. Nous ne savons, à la fin, si les corps glorieux dont témoigne l'Annonce sont d'une chair et d'une âme enfin unies et incorruptibles, mais nous savons qu'à peler la terre de toute présence réelle de la divinité et à abstraire celle-ci jusqu'à n'en faire qu'un concept de l'inconcevable, toute religion se ruine et accroît, dans les âmes, la réalité du démon — ou du mal — de tous celles que l'on ôte à la divinité. La Terre devient alors inhabitable aux esprits religieux, à cause de l'accroissement des complexes d'échec que la volonté ne parvient pas à vaincre. De là, aujourd'hui, chez certains le désir de se soustraire à ce grave compromis, par un retour assez naïf, au culte de l'Homme. C'est sous-entendre qu'il puisse atteindre l'unité; et, par cela, lui conférer les attributs mêmes du Divin. Cette tentative de transfert de celui-ci en l'Homme Type se borne donc à un jeu de mots. En fait, rien ne change dans l'inconscient collectif. Les deux conceptions du devenir posent d'identiques problèmes.

L'ascèse de Grégoire de Narek n'est conditionné que par le besoin de conquérir la perfection d'être. A cela près, qu'il ne la peut réaliser sans l'aide de ce juge intérieur qu'il lui importe de sentir d'une extrême intransigeance. Mais, plus sa préhension de la justice grandira, plus l'évidence de sa faillibilité apparaîtra.

Cette épreuve de la dualité du bien et du mal, il se dit qu'il ne la passera point seul. Il s'est trop exacerbé à ces contraires. Il ne peut plus en prendre son parti. Il s'ensuivrait une chute irrémédiable. De plus, on ne revient pas de la sublimité d'une Présence dans le secret de soi, sans un sentiment d'affreuse culpabilité; et comme il est impossible d'abolir jusqu'au souvenir de cette pure jouissance, et que l'on ne peut arrêter le mouvement de la vie, puisqu'elle est éternelle, il faut donc aller plus en avant encore. Il faut passer les déserts de la nuit de l'âme; aller à la quête de cette splendeur intérieure qui reste la seule humaine. Et si elle se dérobe, il faut pleurer, et si les larmes même se tarissent, il faut interminablement se donner avis et épreuves jusqu'à ce qu'elles sourdent à nouveau. Il faut trouver des mots qui forcent l'âme et l'approchent de la véritable Réalité. Il faut changer de vie.

C'est dans son livre des Lamentations que l'on décèle l'âme de Grégoire de Narek :

Isabelle A. J. de la Roche

« N'apporte pas prématurément, ô Miséricordieux, un jour inopportun dans ma courte vie, afin que je ne m'engage pas sans préparation sur une route inachevée. N'approche pas de moi le calice de l'amertume à l'heure de la soif. O Clément, ne permets pas que soit barrée la voie ou s'accomplit mon âme. Que la nuit de ma mort ne fonde pas sur moi comme une brusque armée dévastatrice. Que l'ardente touffeur ne dessèche pas inopinément mes racines; que les influences de la lune ne me soient pas néfastes en leur secrète approche; et que le gel du péché ne se perpétue en moi.

Que le repos ne m'apporte point le trépas !

Que les torrents de cette vie sur moi ne débordent !

Que le sommeil ne me guide pas vers la mort !

Que le sommeil ne me perde pas !

Que le sommeil ne me souille pas !

Qu'une brusque fin sur moi ne s'abatte, et que l'élan de mon souffle vers la Hauteur, brisé soudain, ne croule en bas. » (★)


Prière qu'ont dû reprendre, voici cinquante ans, en 1915, les Arméniens victimes des Turcs. Une population décimée systématiquement, et si l'Occident se voile la face devant nos frères chrétiens morts-oubliés, si la Turquie vénère celui dont Hitler ne fut que le disciple mais qui ne s'attaqua qu'à des chrétiens ce qui lui évite les « honneurs » depuis cinquante ans, alors que chaque jour depuis vingt ans on répète les atrocités hitlériennes, il faut connaître son nom, il faut le crier ce nom qui raya un peuple érudit, un peuple martyr.

G. B.



(★) Traduction de L.-A. Marcel.

ART ANCIEN EN ARMENIE










ԲԻՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԸ



Իւրականի աստղադիտարանը Հայկական հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի գիտահետազոտական հիմնարկներից մէկն է: Իրա շինարարութիւնն սկսուել է 1946 թուականին Արաբաժ լեռան լանջին, ծովի մակերեւոյթից շուրջ 1500 մետր բարձրութեան վրայ (Նրեւանից հիւսիս-արեւմուտք): 1956 թուականին շինարարութեան առաջին հերթի աւարտից յետոյ, տեղի է ունեցել Աստղադիտարանի պաշտօնական բացումը: Սակայն դրանից շատ առաջ Բիւրականի աստղադիտարանի անունը լայնօրէն յայտնի էր գիտութեան աշխարհում՝ շնորհիւ նրա գիտական լուրջ յաջողութիւններին:

Աստղադիտարանի անիոփոխ գիրեկտորը եւ գիտական ղեկավարը ակադեմիկոս Վիկտոր Համբարձումեանն է, որի անունն հետ անխզելիօրէն կապուած է տեսական աստրոֆիզիայի եւ աստղաբաշխութեան բուռն զարգացումը Սովետական Միութիւնում, իսկ այդ գիտութիւնների մի շարք բաժինները՝ նաեւ ամբողջ աշխարհում: Նա ստեղծել է գիտական մի դպրոց, որի ներկայացուցիչները ներկայումս համաշխարհային աստղադիտութեան առաջին շարքերում են:

Վիկտոր Համբարձումեանի գիտական ծառայութիւնները համընդհանուր ճանաչում եւ արժանի գնահատութիւն են ստացել: Նա Բազմիցս արժանացել է կառավարական պարգեւների, պետական մրցանակների: Ակադեմիկոս Համբարձումեանը Հայկական հանրապետութեան Գիտութիւնների Ակադեմիայի պրեզիտենտն է (1947 թ. Սովետ. Միութեան Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ, մի շարք երկրների (Աւստրիա, Բելգիա, ԱՄՆ, Գերմանիա, Փրանսիա) գիտութիւնների ակադեմիաների պատուաւոր կամ օտարեր-



Վ. Համբարձումյան

կրեայ անդամ, արտասահմանեան աստղազիտական ընկերութիւններէ — Սաղազ ուկրանոսեան, Ամերիկեան, Անգլիական, Կանադայի պատուաւոր անդամ, Կանբերայի (Աւստրալիա) եւ Սորբոնի (Ֆրանսիա) համալսարաններէ պատուաւոր դոկտոր: Գիտական աչքի ընկնող ծառայութիւններէ հա-

մար նա պարզեցատրուել է Ժանսենի (Փրանսիա), Պաղպղ ուղիւնոսեան ու անդլիական թագաւորական աստղազիտական ընկերութիւնների ոսկէ մեղալներով :

Վիկտոր Համբարձումեանն ընտրուել է Միջազգային Աստղազիտական Միութեան փոխ-նախագահ (1948-1955 թ.) եւ նախագահ (1961-1964 թ.) : Նա հասարակական գործիչ է եւ խաղաղութեան մարտիկ : Մասնակցել է Պաղպղութեան համաշխարհային եւ միջազգային գրեթէ բոլոր հաւաքներին :

Վիկտոր Համբարձումեանի ղեկավարութեամբ Բիւրականի աստղազիտարանում կատարուել են մի շարք հետազոտութիւններ, որոնց զգալի ներդրում են համաշխարհային գիտութեան մէջ եւ հիմք են հանդիսացել ժամանակակից աստրոֆիզիկայում նոր ուղղութիւնների ստեղծման համար :

Նոր տեսակի աստղային համակարգութիւնների՝ աստղափիւռների յայտնագործումը եւ նրանց ուսումնասիրութիւնից ստացուած կարեւոր եզրակացութիւնները աստղագոյացման երեւոյթների վերաբերեալ, երիտասարդ անկայուն աստղերի մօտ դիտուող եւ նիւթի առաջմ գիտութեանն անյայտ վիճակներով պայմանաւորուած երեւոյթների խոր տեսական վերլուծութիւնը, ռադիոզայակտիկաների բնոյթի, զայակտիկաների էվոլյուցիայի եւ նրանց միջուկների կոամպոնիական ակտիվութեան վերաբերեալ կարեւորագոյն արդիւնքները, զայակտիկաների ուսումնասիրութեան, աստղերի եւ միգամածութիւնների Ֆիզիկայի գծով արժէքաւոր հետազոտութիւնները, նիւթի հնարաւոր գերխիտ վիճակների տեսութիւնը՝ աստղազիտարանի անցած բեզմնաւոր ուղու կարեւոր փուլերն են :

Աստղազիտարանում զգալի աշխատանքներ են կատարուել նաեւ ռադիոաստղազիտութեան գծով, յատկապէս տիեզերական ռադիոճառագայթման կէտային ազբիւրների ուսումնասիրութեան ուղղութեամբ :

Անցեալ տարիներին Բիւրականի աստղազիտարանը դիտուել է դիտողական եւ յարորատոր ժամանակակից սարքերով : Յատկապէս պէտք է նշել, 1950 թ. աշնանը տեղակայուած Շմիդի սիստեմի մետրանոց (հայելու տրամագիծը 1,3 մ.) աստղազիտակր՝ իր յուսուածով ամենահորր խոչորագոյն աստղազիտակների մէջ, որն օժտուած է աշխարհում ամենախոշոր օբյեկտիւ պրիզմաներով՝ թոյլ տիեզերական գոյացումների սպեկտրների լուսանկարման համար :

Լուրջ յաջողութիւնների է հասել օպտիկա-մեխանիկական յարորատորիան հետազոտութիւնների համար անհրաժեշտ նուրբ սարքերի նախագծման եւ պատրաստման գործում :

Աճել է աստղազիտարանի գիտական կուլեկտիվը՝ հիմ-

նականում, Երեւանի Համալսարանում ստեղծուած աստղա-
գիտական բաժնի շրջանաւարտների հաշուին: Եթէ 1946 թ.
հիմնադրման պահին աստղագիտարանում աշխատում էին
ընդամէնը եօթ գիտական եւ գիտա-տեխնիկական աշխատա-
կիցներ, ապա ներկայումս նրանց թիւն աճել է շուրջ տասն
անդամ (այդ թւում 15 գիտութեան դոկտորներ եւ թեկնա-
ծուներ):

Լայնացել է աստղագիտարանի գիտական թեմատիկան:
Հետազոտութիւններ են կատարուում հետեւեալ հիմնական
պրոբլեմների գծով՝ գալակտիկաներ, անկայուն աստղեր,
գաղափին միզամածութիւններ եւ ռադիո ճառագայթման տի-
եզերական աղբւրներ:

Բիւրականի աստղագիտարանը գիտական կապեր ունի
սովետական եւ արտասահմանեան գիտա-հետազոտական շատ
հիմնարկների հետ: Համատեղ գիտական աշխատանքներ են
կատարուել սովետական եւ արտասահմանեան մի քանի աստ-
ղագիտարանների հետ: Մի շարք սովետական եւ արտասահ-
մանեան Համալսարանների նա օգնում է մասնագէտների
պատրաստման գործում:

Գիտական աշխատանքի, գիտումների եւ կատարելա-
գործման, գիտական քննարկումների եւ օգնութեան, ինչպէս
նաեւ Աստղագիտարանում կատարուող գիտական հետազո-
տութիւնների հետ ծանօթանալու նպատակով Բիւրականում
եղել են Սովետական Միութեան եւ արտասահմանեան եր-
կիրների (Անգլիա, Աւստրիա, Աւստրալիա, ԱՄՆ, ԳԴՌ, Ի-
տալիա, Իռլանդիա, Կանադա, ԿԺՌԴ, Լեհաստան, Մեքսի-
կա, Հարաւսլաւիա, Հունգարիա, Հարա-Ասիերիկեան միութե-
թիւն, Ռումինիա, ՉԺՌ, Չեխոսլովակիա, Շվեդիա, Փրանս-
սիա, Ճապոնիա) գիտնականները:

Իրենց հերթին, Աստղագիտարանի աշխատակիցները
գիտական աշխատանքի, դասախօսութիւններ կարդալու, գի-
տական կոնսուլտացիաների, գիտահետազոտական աշխա-
տանքի դրուածքի հետ ծանօթանալու, ինչպէս նաեւ գիտա-
կան տարբեր հաւաքների աշխատանքներին մասնակցելու
նպատակով եղել են Աւստրալիայում, Աւստրիայում, Անգ-
լիայում, ԱՄՆ-ում, Բելգիայում, Բուլղարիայում, ԳԴՌ-
ում, ԳՅՌ-ում, Ինդոնեզիայում, Իտալիայում, Հարաւսլա-
ւիայում, Հնդկաստանում, Հոլանդիայում, Հունգարիայում,
Ռումինիայում, Շվեդիայում, Շվեյցարիայում, Չեխոսլո-
վակիայում:

Բիւրականի Աստղագիտարանում տեղի են ունեցել մի
շարք գիտական հաւաքներ նուիրուած ժամանակակից աստրո-
ֆիզիկայի հրատապ հարցերին՝ սովետական եւ արտասահ-
մանեան գիտնականների մասնակցութեամբ: Քննարկուել են
աստղասփեռների (1951 թ.) աստղերի եւ միզամածութիւն-
ների ֆիզիկայի (1955 թ. եւ 1960 թ.) անկայուն աստղերի

(1956 թ.) ուսումնասիրութեան հետ կապուած հարցերը :

Յիշեալ հաւաքները, գիտական քննարկումները եւ զրոյցները նշանակալից երեւոյթներ էին ոչ միայն Աստղագիտարանի կեանքում : Նրանք կարեւոր դեր խաղացին ինչպէս քննարկուող հարցերի մշակման եւ տարբեր երկրներում այդ ուղղութիւններով կատարուող հետազոտութիւնների յետագայ ծաւալման տեսակէտից, այնպէս էլ աստղագէտների միջազգային կապերի ամրապնդման եւ զարգացման գործում :

Հայ աստղագէտները գործուն մասնակցութիւն ունեն Միջազգային աստղագիտական միութեան (ՄԱՄ) աշխատանքներում : 1962 թ. սեպտեմբերին Հայաստանում տեղի է ունեցել ՄԱՄ-ի գործկումի նստաչրջանը, որի մասնակիցները գիտական ղեկավարումներով հանդէս եկան Աստղագիտարանի գիտական սեմինարում :

Անցեալ տարիներին Աստղագիտարանը լոյս է ընծայել իր «Հաղորդումներին» 36 պրակ : Նրանցում, ինչպէս նաեւ գիտական այլ հանդէսներում հրատարակուել են աստղագիտարանի աշխատակիցները աւելի քան 300 աշխատանք :

«Բիւրականի Աստղագիտարանի հաղորդումներին» հասցէատէքերի ցուցակում կան շուրջ 50 երկրի 315 աստղագիտարաններ, գրադարաններ եւ գիտահետազոտական հիմնարկներ եւ 156 գիտնականներ :

Աստղագիտարանը մեծ աշխատանք է կատարել գիտութեան նուաճումների եւ աստղագիտական գիտելիքների տարածման գծով : Հրատարակուել են հարիւրից աւելի գիտահանրամատչելի գրքոյկներ եւ յօդուածներ, ինչպէս սովետական այնպէս էլ արտասահմանեան մամուլում : Կարդացուել են բազմաթիւ հրատարակային դասախօսութիւններ Աստղագիտարանի նուաճումների, Ժամանակակից աստրոֆիզիկայի խնդիրների եւ յաջողութիւնների, Տիեզերքի նրւածման ու ուսումնասիրութեան գործում Սովետական Միութեան յաջողութիւնների մասին՝ Հայաստանում, Մոսկուայում, Լենինգրադում եւ արտասահմանում : Աստղագիտարան այցելած մի քանի հազար էքսկուրսիաների համար կազմակերպուել են զրոյցներ եւ դասախօսութիւններ :

Աստղագիտարանի գործունէութեան հետ ծանօթացել են տարբեր երկրների պետական եւ քաղաքական աչքի ընկնող գործիչներ, գիտնականներ, գրականութեան եւ արուեստի աշխատողներ, տարբեր մասնագիտութիւնների ներկայացուցիչներ, Մոսկուայում հաւատարմագրուած գիւլանագիտական կորպուսը, բարեկամութեան ընկերութեանց, հա-

սարակական – քաղաքական եւ մշակութային պատուիրակութիւններ :

Իր աշխատանքներով Բիւրականի աստղադիտարանը զգալի տեղ է զբաւել ժամանակակից աստղաշխտութեան մի քանի բաժիններում : Ներկայումս ամէն ինչ արւում է Աստղադիտարանի տեսակարար կշիռը ապագայում եւս այդ բարձրութեան վրայ պահելու համար :

Մասնաւորապէս, Աստղադիտարանը ծրագրել է դասական սիստեմի նոր 2,6 մ. տրամադծով հայելի ունեցող խոշոր աստղադիտակի տեղակայումը :

Հանրապետութեան կառավարութեան աջակցութեան շնորհիւ այս աստղադիտակը պատուիրուած է Լենինգրադի օպտիկա-մեխանիկական գործարանին : Ներկայումս արդէն սկսուած են այդ աստղադիտակի կառուցման եւ նրա դիտողական աշտարակի շինարարութեան աշխատանքները :

Նոր աստղադիտակը զգալիօրէն կ'ընդարձակի Աստղադիտարանի գործիքային հնարաւորութիւնները՝ թոյլ աստղերի եւ դալակտիկաների խոր ուսումնասիրութեան գործում :









Գ Ի Ր Ք Ե Ր

«ՆԻ ԵՂՆԻ ՄԱՐԿ», Զարեհ Սիրունի, Փարիզ, 1965,
Տպարան «Արաբս»:

2. Որբունիի այս երկը իրականութեան մէջ, այսինքն բառին խոսկական եւ ընթացիկ խաստով վէպ մը չէ, քանի որ պատմութիւնը «արտաքին» ըլլալէ աւելի «ներքին» է, իսկ գործողութիւնը, որ վէպի մը հիմնական կառոյցն է, խեղդուած է խորհրդածական պատկերներու մէջ:

Որբունիի այս դործը հոգեբանութեան մը ներկայացումն է: Տաք երակներէ հոսող զգայութիւններու հոսանք մըն է, որ երթալով աւելի մեծ կերպարանք կ'առնէ, աւելի շօշափելի եւ ցայտուն կը դառնայ, հանդարտ, զուլալ շուրի մը մէջ նետուած փոքրիկ խիճի մը պէս, որ միակեզրոն շրջանակ մը կը ստեղծէ նախ, յետոյ, անմիջապէս, երկրորդ մը, ապա՝ երրորդ մը, բոլորն ալ իրարու հետ շագկապուած եւ իրարմով պայմանաւորուած: Այսպէս ալ զբաղէտը մէկը միւսին ետեւէն կը ցուցադրէ հոգեկան տաղանայի մը բոլոր ծալքերը, ողբերգութեան մը ներքին երեսները եւ անոնց զրգապատճառները:

Մեր առջեւ մարդն է, գլխազիր մարդը, այն որ ունի մարդկային զգացումներու խոր դիտակցութիւն եւ իբրեւ արդիւնք այդ դիտակցութեան՝ կը տառապի իր փոքր ու մեծ «մեղքերը» տեսնելով: Եւ այս է պատճառը, ապահովաբար, որ զբաղէտին հոգեկան դալարումները, վշտազին ազաղակները, տառապանքի բովանդակ գատակնիքը ներկայացնող խորհրդածութիւններն ու եզրակացութիւնները կը յուզեն մեզ:

Միւս կողմէ «Եւ եղեւ մարդ»ը անկեղծ եւ զգայուն հաղորդականութիւն մը ունի, շնորհիւ այն իրողութեան, որ զբաղէտը՝ ամուր եւ ջրուտ ոճով մը, հոգեբանական պատկերաւորումներու մէջ կը ցուցադրէ արտակարգ ճիւղնութիւն:

Այս արտահայտչներուն վրայ հարկ է աւելցնել նաեւ Որբունիի պատմելու շնորհքը, որ իմացական եւ հոգեկան բարեշրջումին հետ գոյգ կը քալէ:

Դժբախտաբար, զբաղէտին լեզուն կը մասնէ անվութութիւն մը:

*

«ՀԱՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ», պատմուածքներ վահրամ Մավեանի,
Տպ. Երուսաղէմ, 1965:

Արուեստի հանդերձանքներէ զուրկ չեն այն քսան պատմուածքները, որոնք տեղ գտած են Վահրամ Մավեանի վերոյիշեալ գիրքին մէջ: Թէեւ, այս պարագային հարկ է ճշդել, թէ այնքան ալ ճիշտ պիտի չըլլար պատմուածքի պատմուածան հագցնել հատորով ներկայացուած գրութիւններուն, որովհետեւ, անոնցմէ գրեթէ ո՛չ մէկը ունի այդ տարագր բնորոշող յատկանիշը: Իրականութեան մէջ օրագրութեան եւ ակնարկին միջեւ տարուբերող սեռ մըն է, գոր մշակած է հեղինակը:

Սեռ մը, որ յամենայն դէպս շահեկան եւ հետաքրքրական է:

Ձանազան առիթներով եւ այլազան վայրերու մէջ գրուած գրութիւնները՝ տիպարներու եւ երեւոյթներու ընդմէջէն կը պատկերացընեն արասասմանի չորս ծագերուն տարողնուած տարազիր բեկորներուն ապրումները, օրուան հնահուքները:

Լոնտոնի թէ Լիզպոնի, Տրալինի թէ Նոր Զուգայի մէջ հեղինակը հանդիպած է տարագրութեան կեանքը ապրող Հայերու, այսինքն մարդոց, որոնց հուգեկան ապրումները, մտասեւեռումները, յոյզերը անտեսանելի թելով մը կը նոյնանան եւ կը կազմեն ամբողջութիւն մը: Անշուշտ, անոնցմէ ամէն մէկը ունի իր իւրայատուկ դիմադիժը, իր ինքնատիպ հոգեբանութիւնը, կեանքը ըմբռնելու եւ դատելու իւրատիպ ձեւը: Ունի նաեւ առանձին անուն եւ պատմութիւն: Դրական կամ բացասական դիժ: Սակայն բոլորն ալ կ'արտայայտեն հայեցի նկարագիր, կը մտածեն հայօրէն:

Մէկ խօսքով անոնց համագումարը կը կազմէ արտերկրի Հայութիւնը՝ արեւելքէն արեւմուտք:

Վ. Մավեան վրձինի արագ հարուածներով կը բնութագրէ հոգեվիճակներ, առանց սակայն խորանալու անոնց պատճառներուն մէջ: Առանց երբեք մեկնաբանութեան փորձեր կատարելու: Ինք կ'ուզէ ըլլալ առարկայական, ներկայացնել միայն պատահարը, դէպքը, պատմութիւնը՝ խօսակցութեան կամ հանդիպումի մը ձեւին տակ:

Հեղինակին գրելու ձեւը հաճելի է: Կոկիկ եւ խնամուած ոճ, տեղ տեղ գրական հանդերձանք կրող լեզու:

*

«ՀԱՅՐԵՆԻ ԳԻՒԿ» Ծառուր Պէրպէրեանի, Տպ. Փարիզ, 1965:

Գիւղի ծնունդ եւ գիւղի տղայ՝ Ծառուր Պէրպէրեան իր այս նոր գործով յիշատակներու եւ ապրումներու փունջ մըն է որ կը ներկայացնէ: Չարաչուք թուականը եւ տասնեակ տարիներու աստանդական կեանքը չեն յաջողած խամբել հեղինակին սրտին մէջ հայրենի գիւղին յիշատակը: Գիւղը, մանաւանդ հայրենի գիւղը, հէքեաթի այն իշխանուհին է, որուն համար օրն ի բուն տաղեր կը հիւսեն իր սիրականները:

Գիւղագրութեան կարգ մը պայմանները լրացնող հեղինակ մըն է ան, որ մարդերէն աւելի կը սիրէ պատկերացնել իրերը, չըջապատը,

ատորեայ կեանքը, գիւղական անց ու դարձը, սովորութիւններն ու բարքերը :

Գիւղի եզրին նստած այն նկարիչն է, որ վրձինի խատուտիկ հարուածներով եւ գոյներու խտացումով պատասառին վրայ ցայտուն կը դարձնէ գիւղի մը համայնապատկերը :

Մարդերն ու անոնց հողերանութիւնները քիչ տեղ կը բռնեն Պէրպէրեանի պատասառին վրայ : Արզարեւ, հեղինակը քիչ անդամ կանգ կ'առնէ դէմքերու վրայ :

«Հայրենի գիւղ»ին մէջ հողեվիճակներ, մտորումներ, գիւղի մարդոց խօսակցութիւններ երկրորդական դժի վրայ կուգան եթէ ոչ բանակով, առնուազն իրենց պարունակով :

Պէրպէրեանի գրեւակերպը հաճելի է : Ոճը՝ հակիրճ եւ տարողունակ, թէեւ ո՛չ բազմերանդ :

*

«ԸՆՏԻՐ ԷՋՆՐ», Զորայր Միրզոյեանի, Թեհրան 1965 :

Մազազ գլխաւորութեան տէր գրիչ մըն էր Զորայր Միրզոյեան, որուն գործերուն հատընտիր էջերը — բանաստեղծութիւններ եւ պատմուածքներ — իր անակնկալ մահուան առիթով, լոյս տեսան վերջերս հատորով մը, Թեհրանի մէջ :

Մօտաւորապէս 120 էջերու մէջ ընտրովի հաւաքուած եւ ներկայացուած արձակ եւ չափածոյ գործերը ցայտուն կը դարձնեն գրագէտին զիմագիծը ու կը ճշդեն անոր տեղն ու գիրքը մեր գրական անդաստանին մէջ :

Առաջին առթիւ նշմարելի է, որ բանաստեղծ Զորայր կը սիրէ ինքնարուխ գլխաւորութիւններուն միացնել մտածումի շիթեր : Դրժբախտաբար, միշտ է՛ որ կը յաջողի ինքնատիպ դառնալ եւ, մանաւանդ, ջերմիկ հոգեխօսութիւն մը երեւան հանել :

Իրան ծնած եւ հասակ նստած գրագէտը ազդուած է պարսկական արուեստի շունչէն, թէեւ, միեւնոյն ատեն, կը կրէ նաեւ արեւմտեան, մանաւանդ անգլիական ժամանակակից բանաստեղծութեան տիրապետութիւնը : Երկու բոլորովին ներհակ ազդեցութիւններու կնիքը եթէ մէկ կողմէ ինքնատպուլթեան գրոյժ մը կուտայ Միրզոյեանի արուեստին, միւս կողմէ պատճառ կը դառնայ խորքի եւ ձեւի անհամաչափութեան մը :

Անհատական գորաւոր կնիք մը եւ ինքզինք չկրկնելու ճիգ մը մեծապէս պիտի բարձրացնէր անոր չափածոյ արուեստին արժէքը :

*

«ԱՐԵՒԵՆԱՆՍՏԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ», Սիմոն Սիմոնեանի, Պէյրութ, 1965 :

Հայ գրականութեան նուիրուած հրատարակելի հինգհատորեակի մը առաջին ձեռնարկն է այս : Պատկառանք ազդող հաստափոր գիրք մը, որ կը բազկանայ ութ հարիւր մեծագիր եւ երկսիւն էջերէ, մատենագիտական եւ բառագիտական բաժիններէ, ինչպէս նաեւ գրողներու լուսանկարներէ :

Այս շահեկան աշխատութեան հեղինակը՝ Սիմոն Սիմոնեան, ծրագրած է յաջորդաբար լոյս ընծայել չորս մեծազիր հատորներ, ամէն մէկը նուիրուած ժամանակաշրջանի մը եւ զրական հայերէնի բաժանումի մը:

Արեւելահայ զրականութեան եւ զրագէտներու մասին բաւական թիւով արժէքաւոր հատորներ հրատարակ ելած են անցեալին: Լեւոն Մանուէլեան եւ Լէօ, օրինակ, ներկայացուցին ուսուսչայ զրականութեան պատմութիւնը, իսկ Սուրբաթեանի «Հայ Գրականութիւնը» եւ Ղ. Աղապեանի, Աւ. Ահարոնեանի, Յ. Թումանեանի, Վրթ. Փափաղեանի համատեղ ջանքերով 1909ին Թիֆլիզի մէջ հրատարակ ելած «Ռուսահայ Գրողներ» հատորը կը պարունակէին ընտիր էջեր եւ կենսագրական բաժիններ:

Այս հատորին առանցքը կամ ամէնէն հարուստ բաժինը ընտիր էջերուն յատկացուած զլուխներն են: Նիւթերու ընտրութիւնը կատարուած է ճշակով, զրագատի մը ըմբռնումով: Աւելցնենք, որ այս էջերը, իբրեւ նկարագիր եւ զրոշմ ունին հայեցիութիւնը, հայկականութիւնը:

Կարելի ամբողջութիւն մը կը կազմեն զրագէտներուն կենսագրական գիծերը: Զեոնհաս աշխատանքի մը հաւաստիքը կուտան այդ բաժինները: Կենսագրական գիծերուն կը յաջորդեն գրողներուն գործերուն ցուցակները:

Այս հատորը յաւելեալ շահ մը պիտի արձանագրէր, եթէ հեղինակը փոխանակ զոհանալու սեղմ եւ շատ անդամ զարմանալի կերպով համոտոտադրուած դատումներու, փորձէր աւելի հանդամանօրէն խօսիլ իւրաքանչիւր զրագէտին զրական ուղղութիւններուն, արժէքներուն եւ որակին մասին:

Շահեկան բաժիններ են մատենագիտութեան եւ բառագիտութեան յատկացուած զլուխները:

Այս աշխատութեան մասին կարելի է դեռ զրբի երկար, օրինակ, մատնանշել, որ գործին արժէքներէն մէկն ալ արեւելահայ զիւղագիրներու յատկացուած զլուխն է, ուր ներկայացուած են անձանօթ մնացած տասր դէմքեր, սակայն, պիտի բաւականանանք հեղինակին հետ հաստատելով, թէ «Ներկայ աշխատութիւնը ընտիր էջերու յոկ ժողովածու մը չէ, այլ մեծարանք մը, սիրոյ սրտազին ծանր տուրք մը, թափանցելու եւ վերընծայելու ճիւղ մը՝ Արեւելահայ Գրականութեան, որ դարաւոր հայ զրականութեան փառահեղ հինգ շրջաններէն մէկն է»:

*

«ԿԵԱՆՔԸ – ԲՈՅՐԱ», բանաստեղծութիւններ Ռ. Գագանեանի, տպ. Փարիզ 1966:

Այս փոքրիկ հատորին հեղինակը՝ Ռուբէն Գաղանճեան նոր շունչ եւ թարմութիւն կը բերէ մեր քիչ մը միօրինակ, քիչ մը աւանդական ուղիներով բարդ չափածոյ արուեստին մէջ:

Նոր մրն է, ո՛ր միայն իր մուտքով, այլեւ իր հոգեբանութեամբ, տրամադրութիւններով եւ նոյնիսկ զլայնութիւններով:

Կեանքը, որ իր քոյրն է, դառնութիւններ միայն պատճառած է իրեն: Եւ, վշտադին ու ջիջ մըն ալ ըմբոսա, խարոյկի հանդէս կը սարքէ, ուր առանց դոյզն տատանումի կրակի կուտայ «կտոր թուղթի մը նման» իր սէրը, տունը, ամբողջ քաղաքը: Եւ դեռ պատրաստ է զոհելու նաեւ իր կեանքը:

Այսուհանդերձ, երիտասարդին հոգին անհաղորդ չէ կեանքին: Կապուած անոր՝ կը սիրէ դայն: Կ'ուզէ թեւը մտնել՝ քնքշօրէն, եղբօր մը պէս եւ իր բովանդակ սէրն ու ամբողջական գուրգուրանքը սփռել անոր (կեանքին – քոյրին) վրայ, որ «բող» մըն է կամ անոր նման բան մը այլեւս իրեն համար: Եւ ապահովարար այս է պատճառը, որ սիրելէ, գիրկնդիխառնուելէ անմիջապէս ետք կ'ուզէ խեղդել դայն, հող չէ թէ «իր մահէն ետք, դիակիմ դէմ այնքան փափուկ, այնքան անուշ ու ձիւնափայլ, ծուկիկ եկած՝ լայի երկար...»:

Անձնակերտն ապրումներու յորձանուտին մէջ խոհն ու դգայնութիւնը գոյգ կ'ընթանան: Թէեւ քերթուածներէն ոմանց մէջ խոհերը — հարցումի ձեւին տակ ներկայացուած առաւելարար — կը մնան չամբողջացած: Աւելի լաւ պիտի ըլլար, որ խօսէր աւելի շատ իր սիրար՝ թէկուզ խորտակուած:

Երաժշտականութիւնը կը յորդի բազմաթիւ քերթուածներու մէջ: Նոր յունչ եւ երանդ ունեցող երիտասարդ բանաստեղծը իր այս հատորով ներկայութիւն մը կը դառնայ մեր դրական անդաստանին մէջ: Ժամանակի ընթացքին, անչույտ, պիտի լայննայ եւ ամբողջանայ անոր մտահորիզոնը, զգայնութիւններուն տարողութիւնը:

Ժ. Միրիքեան



«ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁ ՀՆՁԻՒՆՆԵՐ»

Ժողովածու երկու հատոր՝ նուիրուած սփիւռքահայ երաժշտութեան, Կոմիտասազէտ երաժիշտ եւ տեսարան Յիցիլիա Բրուտեանի պատրաստութեամբ, յոյս տեսած Երեւանի Հայպետհրատէն:

Ա. հատորը (1962) կը պարունակէ արտասահմանի հայ երգահաններէն 28 մեներգ եւ 12 խմբերգ, իսկ երկրորդը՝ (1964) կը մէկտեղէ դաշնամուրային 27 երկ, համախմբելով աշխարհի չորս ծագերուն ցրիւ եկած (մեռած ու ողջ) մեր հետեւեալ երգահանները. — Ալեմշահ Գուրգէն, Ալմուխեան Ժան, Բալթայեան Սարգիս, Գալանդարեան Նիկոլ, Թաթեան Առաքել, Կարապետեան Կարօ, Յակոբեան Եղուարդ, Յարութիւնեան Կարապետ, Ղազարոսեան Գոհարիկ, Մանաս Էտկար, Պատմադրեան Աշոտ, Պարթեւեան Արա, Պէրպէրեան Համբարձում, Սամուէլեան Յարութիւն, Սարգիսեան Վարդան, Սիւնի Գրիգոր, Սրուանձտեան Վաղարշակ, Տարէնտէլեան Միհրան, Միկուլի Կարլ (Պլոտիկեան), Չուխաճեան Տիգրան, Սուրէնեան Ստեփան, Պէրպէրեան Օննիկ, Էլմաս Ստեփան, Սինանեան Յարութիւն, Սվածեան Վահրամ, Ալան Յովհաննէս, Նազարեան Աւետիս, Եարտումեան Ռիշար, Մուրատեան Վաղգէն, Քնաճեան Արա, Թէրգեան

Ալիս, Ոսկեան Պետրոս, Բարոնեան Վարդգէս եւ Ճզնաւորեան Լորիս :

Ներկայ ցանկէն կարգ մը անուններ, բացի երիտասարդներէն, անծանօթ էին ցարգ, ինչպէս Միկուլի Կարլ (1821-1897), Սուրէնեան Ստեփան (1853-1899) եւ Էլմաս Ստեփան (1864-1937) :

Հատորները տալէ զատ հեղինակներէն գործեր եւ կենսագրականներ, ժամադրաւայր կը հանդիսանան զանոնք իրարու ճանչցնելու :

Վտարանդի հեղինակներու կենսագրական սեղմ տողերը կը յայտնաբերեն այն տիւրը գիծերը, որոնք կ'ալեկոծեն մեր գեղարուեստական կեանքն ու անոնց բարգաւաճումը : Տակաւին նոյնիսկ մեր օրերուն, դժբախտաբար, երաժշտական ուսումներու համար երբ երիտասարդ մը դիմում կատարէ հայկական օրեւէ հաստատութեան՝ կը մերժուի, կարեւոր չնկատուելով իր ընտրած ճիւղը : Կենսագրական տողերէն կը ցոլան օտար ափերու վրայ շնչող հայ սրտերու ջերմ տրոփը դէպի հայրենիք . Յիցիլիա Բրուտեան իր յառաջաբանին մէջ կը գրէ . «... Իւրաքանչիւր ստեղծող... իր ստեղծադորձական ոգեչնչման պահին երեսը դարձրել է դէպի հայրենի աշխարհ, ըմպել է հայ երաժշտութեան ակունքներից...» :

Յարգ գոյութիւն չունէր սփիւռքահայ երգահաններու գործերու հաւաքածոն (պատճառները քննել փորձել աւելորդ է ու դառն), իսկ անտեսուած կը նկատուէր հայրենիքէն :

Յիցիլիա Բրուտեան տարիներու համբերատար աշխատանքով, թղթակցութեամբ, Արարատաշունչ մայրաքաղաքէն փնտռած, գտած, հաւաքած, ուսումնասիրած, ընտրած եւ գուրգուրանքով դասաւորած է նիւթերը : Այս նուիրական աշխատանքը կը գօտեպնդէ նժդեհ հայ երգահանը, կուտայ եռանդ ու կորով եւ նոյն երկով կը պատրաստուի հայ երաժշտութեան ամբողջական պատմութիւնը եւ ինչպէս հեղինակուհին կը գրէ . «Մեր ուսումնասիրութիւններից հետեւող քամենախական եզրակացութիւններից մէկն է, որ առանց սփիւռքահայ երաժշտական արուեստի մեր ազգային երաժշտական մշակոյթը շատ հեռու կը լինէր ամբողջական ու լրիւ լինելուց, իր էութեան բազմազանութիւնից» :

«Հայրենաբաղձ հնչիւններ» ժողովածուի շարքը չէ աւարտած . տակաւին Յ. Բրուտեան կը փնտռէ, կ'ուսումնասիրէ իր մաքուր հոգածութեամբ արուեստագէտներ եւ հեղինակութիւններ ամբողջացնելու իր բեղմնաւոր աշխատութիւնը :

«Հայրենաբաղձ հնչիւններ» հրատարակութիւնը ունի նաեւ շատ կարեւոր նպատակ մը՝ ժողովրդականացում մեր երաժշտութեան :

Վ. Երանգեան

“ LA POÉSIE MODERNE ET LE SACRÉ ”

Հեղինակ՝ Jules Monneret.

Ուսումնասիրելով մանաւանդ նախնական մարդը, Ժիւլ Մոնրոէ կը յանգի այն եզրակացութեան որ նախնական կամ այսպէս ըսած «վայրենի» մարդը այն չէ ինչ որ մեզի կը ներկայացնեն ազգաբարձական գիտութիւնները իբրեւ յեղաշրջութեան սկզբնական մարդը կամ անոր մնացորդները: Նախնական մարդը այն մարդն է, որ կ'ապրի կեանքը երկու բլաններու վրայ, անսովոր եւ սովորական, ուրիշ խօսքով՝ անտեսանելին եւ տեսանելին միասնաբար: Քաղաքակիրթ մարդը հետզհետէ մխրճուած սովորականին հրամայականներուն մէջ, առօրեային իրաւազուրկ մարդը կորսնցուցած է իսկական ազատութիւնը, կորսնցնելով անսովորին այն մեծ լուսանցքը՝ ուրկէ մեզի կուզայ երազելու, ճախրելու թօւիչքը:

Վերաւոր այս մարդուն ազատութիւնը վերադարձնելու բունն, անընկրկելի, կատաղի պայքարը եղաւ դերիւրապաշտութիւնը, որ ծնունդ առաւ առաջին աշխարհամարտի ստեղծած հոգեկան եւ բարոյական աւերակներէն: Այդ առիթը օգտագործեցին դերիւրապաշտները ծաղրով, հարուածով, մտածումի եւ բարոյական բոլոր մարդեբու վրայ անդադրում կուրով: Այսպէսով անոնք մարդուն կ'ուզէին տալ իր կորսուած մասը, անսովորը, անտեսանելիին ներկայութիւնը տեսանելիին մէջ, երազը, նուիրականը դարձնելով առօրեային իրաւունքը, որմէ զրկուած է այն քաղաքակիրթութիւնը, որ կը ներկայանայ տիրող քաղքենի դասակարգին պատկերովը: Երազելու իրաւունքէն զրկուած մարդը աւելի դիւրին ըլլալով անոր շահագործման նպատակներուն համար, դերիւրապաշտները դաշնակցեցան բոլոր այն ուժերուն հետ որ կը կռուէին մարդը խաթարող ուժերուն դէմ, ինչպէս Փրէտտականութեան, Փէթիշիզմի, մարքսիզմի հետ:

Ըստ Մոնրոէի, դերիւրապաշտներու նպատակին խոտոր կը համեմատէին իր կատարած դաշնակցութիւնները, որոնք պատճառ եղան անոր մեկուսացման, աւելի քան թշնամիին հարուածներէն, եւ ի վերջոյ պարտութեան:

Պարտութիւն մը որ եթէ չկրցաւ դերիւրական բանաստեղծութիւնը իրականացնել, եղաւ սակայն յաղթանակ մը՝ ուրկէ ծնաւ մեր ժամանակներու բանաստեղծութիւնը, որ այլեւս երբեք վերադարձ չի կրնար ունենալ:

Մոնրոէի այս գործը ի հարկէ կը կարօտի աւելի խտացումի, աւելի ընդլայնումի, բայց այնպէս ինչպէս որ է, մեզի կ'երեւայ այն դիւցազնական մարտնչումը զոր մղեց այս բանաստեղծական շարժու-

մը, ընկերային, իմաստասիրական եւ բարոյական յեղափոխական առաջադրութիւններու :

Գերիրապաշտութիւնը եղաւ թերեւս բանաստեղծական շարժումներու ամենախոր, ամենարուն շարժումը, ոչ միայն բանաստեղծական դպրոց մը հիմնելու համար, այլ մարդուն ամբողջական ազատագրութեան պայքարը շահելու արուեստի ուղիով : Զ. Ո .

*

ՀԱՅՄԻԴՕ ՖՈՆ ՏՈՏԷՐԷՐ, «ԴԵՒԵՐԸ»


Դեւերը 1200 սեզմ էջերով հսկայ վէպ մըն է : Մուչիլի հետ Ֆօն Տոտէրէր յետպատերազմեան երկու մեծ յայտնութիւններն են եւրոպական վիպասանութեան : Երկուքն ալ Վիէննացի : Ֆօն Տոտէրէր կղզի մըն է արագութեան այս ժամանակաշրջանին մէջ, ուր վէպերը առառուելն մէկ տարուան մէջ կը գրուին : Դեւերը գրուած է երեսուն տարուայ ընթացքին, դանդաղ, հանգիստ, մէկ հոգէն միւսը հասունցող պտուղի մը պէս, որուն ամէն մէկ պատառը հրաշալիք մըն է համի ու ճաշակի :

Ոմանք գայն մօտեցուցին Բրուստին : Արդարեւ, հոն ուր Տոտէրէր կը սուղուի յիշողութեան միջամտութեամբ անցեալին մէջ, ինչպէս էր տիկին Ֆրետերիք Ռիւթմայէր օփերայի մէջ կամ հեղինակը Կոսպլընի վրայէն քալած ատեն, իրապէս կը դռնուինք այն միջավայրին մէջ՝ ուր ժամանակը իր անսովորութեամբ կը հասնի բանաստեղծական կատարեալ զեղեցկութեան :

Վէպը պարզ քրոնիքն է 1926-1927ի մէկ տարուան եւ կը յանդի Վիէննայի աշխատաւորութեան Արդարադատութեան Պալատին հըրդեհումին, կատարեալ պատերազմական վիճակ մը, որ մէկ անգամէն եւ յանկարծ կը փոխէ վիէննական ընկերութեան դիմադրիծը : Այդ օրը Աւստրիան, որ առաջին աշխարհամարտին միապետական հասարակակարգը ժողովրդավարութեան փոխած էր, բայց դեռ անհաստատ, վտիտ, փոխանակ սակայն աւելի հիմնաւորուելու, երկիրը կը յանձնուի աւելի մութ ուժերու ձեռքերուն :

Վէպը կ'ընդգրկէ Աւստրիոյ բոլոր ընկերային խաւերը պատերազմէն նոր դուրս եկած, հասարակակարգ փոխած երկրի մը խառնարանին մէջ, որ յանկարծ մորթ կը փոխէ, կատարուած անարդարութեան մը դէմ ցցուած աշխատաւորական ընդվզումով :

Եւ սակայն Դեւերը իր ծանր ու դանդաղ գնացքով ժողովրդական ընթերցանութիւն մը չէ : Անոնք որ ունին բարձր արուեստի դործ մը ըմբռնանելու ստամոքս, անոնց համար կատարեալ վայելք մըն է :




CARZOU

ԳԱՌԳՈՒ



ԳԱՌՑՈՒԻ

CARZOU




CARZOU


ԳԱՆՈՒԳՈՒԻ

CARZOU

9400-9.00h



1110
55
1110
55



DARIA GAMSARAGAN

ՏԱՐԻԱ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ



SONIA TOPALIAN

ՍՈՆԱ ԹՕՓԱԼԵԱՆ



MUTAFIAN

Զ. ՄՈՒԹԱՅԵԱՆ




P. TOPALIAN

Բ. ԹՕՓԱԼԵԱՆ



P. TOPALIAN

Բ. ԹՕՓԱԼԵԱՆ



SHIRT


ՇԱՐԹ

Fonds A.R.A.M



JERANIAN

ՃԵՐԱՆԵԱՆ




JERANIAN

ՋԵՐԱՆԵԱՆ



B. ORFA

Պ. ՕՐՖԱ



KOTCHAR

ԵՐ. ՔՈՉԱՐ

GIRACO



0411190



MEHDERIAN

Է. ՄԷՀՏԵՐԵԱՆ



ՔՐՈՐՈՍՅԱՆ

TOROSSIAN

Ն ՈՐ Գ Ի Ր Ք Ե Ր

(Շար. Էջ 152Էն)

ՄԱՏԵԱՆ ՅԱԻԻ ԵՒ ՀԱՏՈՒՅՄԱՆ: Քերթուած: Հեղինակ՝ Գառնիկ Աղղարեան:

Երկար քերթուած մըն է այս հատորը, երկար ոգեկոչում մը հաս-
յութեան մօտաւոր անցեալի մեծ տոմարն, նաեւ հաւատքի երգ մը
անոր փայլուն ապագային նուիրուած: Տեղ տեղ սուր հարուածներ կը
խարազանեն աշխարհացրիւ մեր ժողովուրդին տկարութիւնները եւ
մոլութիւնները:

Այս ընդարձակ եւ զրեթէ միակտուր բանաստեղծութիւնը պիտի
խօսի բոլոր հայրենասէր հայերուն սիրտին որոնք պիտի սիրեն զայն:
Որովհետեւ գրուած է խնամուած եւ ճոխ լեզուով մը, լուսաւորուած
է փայլակնացայտ պատկերներով, դաշնաւորուած է ապաւորիչ կըշ-
ուոյթով եւ շափով: Առանց հռետորութեան եւ առանց պոռոտ զար-
դերու, այս հատորը վկայութիւնն է հարագատ ներշնչումի մը եւ
վաւերական տաղանդի մը: Գ. Ֆ.

*

ԲԱՐՆՀՈՒՍՈ ՀՐՎԱՆԳԱՆ, Ա. Ալիքեան, քերթուած, «Հայաս-
տան» հրատարակչութիւն, Երեւան 1965.— Խանաստեղծական հզօր
էջերով ոգեկոչած է հայ հոգեւոր մշակոյթի գանձերն ու զրիչները
ու հայ ժողովուրդի անասման գորովն ու սէրը անոնց հանդէպ,
որոնք այսօր Մատենադարանի մէջ պահպանուած հիացման աւարկայ
դարձած են ամբողջ աշխարհի: Պերճ լեզուով մը գրուած՝ հայոց մշա-
կոյթի լաւագոյն փառարանումն է այս քերթուածը: Ա.

*

ՄԵՆՔ ԱԼ ՀԱՅՐԵՆԻՔ ՈՒՆԻՒՔ: Թատերախաղ. հեղինակ՝ Պետ-
րոս Զարոյեան:

Թատերգութեան մը ձեւին տակ ներկայացուած այս զրքոյկը
աւելի դրուատիքի եւ ջատագովութեան էջ մըն է նուիրուած մեր
հայրենիքին, պանծացումը եւ պատկերազարդումն է բոլոր այն ան-
խոցելի փաստերուն եւ վսեմ զգացումներուն որոնք պէտք է այսօր իր
հայրենիքին կապեն Հայը, ուր որ ալ ըլլայ:

Ընտրելով այս ձեւը, հաւանաբար Պետրոս Զարոյեան ուզած է
աւելի կենդանի եւ առարկայական արտայայտութիւն մը տալ իր
խորհրդածութիւններուն: Չենք կարծեր որ հեղինակը, որուն զրա-
կան հասկացողութիւնը եւ հմտութիւնը հանրածանօթ են, ուզած ըլ-
լայ բեմադրութեան համար ստեղծել իր երկը, որ կը սկսի սիրային
էնձիւով մը, շուտով լուծուած եւ հարթուած ի մեծ գոհունակութիւն
երկու կողմերուն, եւ որ կը շարունակուի դերակատարներուն աշխոյժ
եւ ամբակուռ բացատրութիւններովն ու մեկնութիւններովը, հայու-
թեան ներկային եւ ապագային մասին: Գ. Ֆ.

*

ՁՆՀԱԼԻՑ ՀԵՏՈՒ, բանաստեղծութիւններ Մարօ Մարգարեանի,
«Հայաստան» հրատարակչութիւն, Երեւան 1965:

Քնարական քնքշութեամբ էջեր: Մարօ Մարգարեանի բանաստեղծութիւնը բարութեան ծիածանով մը կը պարուրէ մարդկութիւնը: Իր սիրտը ափերուն մէջ՝ կը շողշողայ աստղի մը պէս, որովհետեւ:

Մարդկանցով է մարդը միայն
Երջանկանում,
Նւ կարօտի կախարդանքով
Վիշտ ու ցաւեր ողջը տանում:

Հայ ժողովուրդի տառապանքով շաղախուած բանաստեղծի հոգին կ'արտայայտէ իր երգերը որոշ փիլիսոփայութեամբ, որ սրտառու է ու անկեղծ:

Ա.

*

ԱԻՆՏԱԲԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ: Գրեց՝ Կ. Զրբաշեան:

Հեղինակը այս գրքոյկին մէջ կը հաղորդէ Հայաստանի ճամբորդութեան իր տպաւորութիւնները: Հայրենասիրական ջերմ եւ տրոփուն զգացում մը կը լեցնէ այս էջերը մէկ ծայրէն միւսը: Բայց զգացում մը որ չարտայայտուի որ ուղեցիկ շեշտերով եւ ճարտասանական հնարքներով, այլ սնունդ կ'առնէ ազգային հարագտականութիւններէն եւ դատողութեան անխոցելի տուեալներէն:

Պրանսա ծնած եւ մեծցած, հեղինակը գիտէ թէ հայ ըլլալ դժբնգալ եւ դերպանց առանձնաշնորհում մըն է: Այդ գիտակցութիւնը կը տիրապետէ իր հոգիին եւ մտաւոր աշխարհին անընկճելի քաջողութեամբ մը: Ազատ եւ անկախ, դերձ ամէն տեսակ գաղափարական կապանքներէ, ան կը տեսնէ համարձակ հետաքրքրութեամբ եւ կը գրէ անկաշկանդ արտայայտութեամբ: Նւ ինչ որ կը տեսնէ, ինչ որ կը հաստատէ, ըլլան անոնք մութ անկիւններ կամ ոգեւորիչ պատկերներ, աւելի կ'ամրապնդեն գինքը իր համոզումներուն մէջ Հայաստանի փրկարար ներկային եւ հայ ժողովուրդի փայլուն ապագային մասին:

Հեղինակը գրական յաւակնութիւններ չունի: Բայց ունի աւելի բան մը քան ինչ որ կը տեսնենք յաճախ գրական կարծեցեալ կոչումով գարգարուած շատ շատերու մօտ: Գիտէ արտայայտուիլ զուսպ գրքուածքով, դանել յատկանշական գիծը եւ գիտողութիւնը, եւ երբ կը կարգանք այս հակիրճ էջերը, կը ցաւինք որ այնքան շուտ կ'աւարտին անոնք:

Գ. Ֆ.

*

ՎԵՐՁԻՆ ԲԱԶՈՒՆԻՆ, վեպ. Տոբո. Գ. Կիւլպէնկեան,
Փարիզ 1965:

Սաչակիրներու ժամանակաշրջանի կրիտիկեան կեանքէ
առնուած այս ընդարձակ վէպը կը նկարագրէ վերջին հայ իշ-
խաններու պայքարներն ու սէրերը, շարժապատկերի մը
նման: Դաւազրութիւն ու պատերազմ, պարտութիւն եւ յաղ-
թանակ կը տողանցեն մեր աչքին առջեւ, այն ատենուան ժո-
ղովրդական շարժումներով եւ տառապանքներով:

*

L'ANNEAU DE FEU, par Anne Sarag, «Les Editeurs Français Réunis»,
Paris, 1965.

Անն Սարակ գրական ծածկանունն է արձանագործ Տիկ. Տարիա
Կամսարականի (*): Ֆրանսերէն այս հատորը՝ իր երբորդ զիրքն է՝
հրատարակուած Փարիզի մէջ:

Սերային վէպ, թէ՛ ժամանակաշրջանի մը բարացուցական
բրոնիկը, — դժուար է ընտրել պիտակը: Իր պատանեկան շրջանի յու-
շերով ու ապրումներով առաջնորդուած՝ հեղինակը մեզի կուտայ
կեանքը Եգիպտոսի ունեւոր ու այլասերած դասակարգին՝ երկու մեծ
պատերազմներու միջեւ: Ա.

(*) Ծնած է Ադեքասնդրիա, երբորդջիկն է Տիգրան Կամսարա-
կանի. Փարիզ հաստատուած է 1927էն ի վեր, գրականութեան հետե-
ւելու համար: Ի վերջոյ աչակերտած է մեծանուն արձանագործ
Պուրտէլի: Անկէ ի վեր մասնակցած է կարեւոր ցուցահանդէսներու՝
բազմաթիւ արժէքաւոր քանդակներով: Արուեստի քննադատներն ու
մամուլը միշտ ջերմօրէն ողջունած են իր մէջ մեծ արուեստագիտու-
հին:





*

ԳՍՈՁՈՒ

Գառգուրի Յամեայ նկարչական դործունեության մէկ համադրութիւնն է Նիսի Միջերկրական Պալատի Ներկայ ցուցահանդէսը: Համաշխարհային համբաւի հասած մեր հայրենակիցի արուեստին մասին հետեւեալ սողերով կ'արտայայտուի արուեստի քննադատ Փիէռ Լամպէրթէն՝ անոր արուեստին նուիրած իր մէկ ուսումնասիրութեան մէջ. —

«On pourrait observer un phénomène assez comparable après la dernière guerre. Carzou a, comme tous ceux de sa génération, littéralement baigné dans l'atmosphère de la guerre et de l'après-guerre. Il fut, plus que la majorité de ses semblables, sensible à l'angoissant mouvement glissant que provoquait, sur sa peau, la masse de l'humanité partant doucement à la dérive dans les eaux d'universel désastre et à travers les espaces désertiques de ses toiles. Il fut, enfin, le premier à donner dans son œuvre une place aussi obsédante, aussi envahissante au flot montant de l'angoisse moderne.»

On reconnaît au contact de l'œuvre de Carzou la fraternité du cheminement des hommes à travers des recherches, des occupations fort différentes les unes des autres. Comment s'expliquerait autrement l'affection et l'intimité dans laquelle on se sent avec l'auteur que l'on aime, peintre, poète, romancier ou dramaturge ?

Carzou a parfaitement conscience de l'identité de son expérience spirituelle avec d'autres réussites humaines dont il a la curiosité et l'instinct. Il y a en lui une permanente tentation d'expériences interchangeables et de tous les « phares » que Baudelaire désigne à l'humanité flottante, sa référence dernière serait sans doute la rayonnante polyvalence d'un Léonard de Vinci.

*

Ե. ՔՈՉԱՐԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Ե. Քոչարի առաջին շրջանի գործերուն նուիրուած ցուցահանդէսը, որ տեղի ունեցաւ փետրուար 21ին, Կալըրի Փերսիէի մէջ, իր Փարիզը Լէելէն երեսուն տարի յետոյ, առաջին կարեւոր փորձն է՝ Քոչարի գործերը ծանօթացնելու եւրոպակ. շրջանակի մը մէջ: Թէեւ ան իր Փարիզ գտնուած շրջանին՝ 1922-1934, արդէն ծանօթ անուն մը եղած է որպէս աւանկարտ մը, երեսունական թուականներու մեծագոյն անուններու կողքին, ինչպէս ցուցահանդէսին առիթով Վալտեմար Ժորժի գրած գիրքը կը հաստատէ ու կը դրուատէ Ե. Քոչարի բերած նորութիւնը արզի նկարչութեան:

Երուանդ Քոչարի առաջին շրջանի գործերը կը պատկանին իր փարիզեան գործունէութեան (1919-1934): Բասնական թուականներու առաջաւոր արուեստագէտներու կողքին, օգտուելով խորանարդապաշտ ձգտումներէն, կը դանէ իր անհատական ուղին, յղանալով «միջոցին մէջ նկարելու» գաղափարը: Իր առեւնին քիչեր կարեւորութիւն ցոյց տուած են կերպարուեստի այդ նոր լեզուին նկատմամբ, սակայն Քոչար յաջողած է ուշագրութիւնը գրաւել կարգ մը արուեստի քննադատներու:

Քոչար կը ցուցադրէ խմբական ցուցահանդէսներուն մէջ՝ ժամանակի մեծագոյն անուններու կողքին: Իսկ անձնական ցուցահանդէսներ կուտայ Փարիզ եւ Լոնտոն: Ապրիլ 1934ին կը լքէ Փարիզը, վերադառնալու համար իր հայրենի երկիրը՝ Հայաստան, ուր կ'ապրի եւ կը ստեղծագործէ: Սակայն տաղանդաւոր արուեստագէտի մը համար, իրապաշտ կամ վերացական ըմբռնումները իրարմէ բնաւ չեն անջատուիր բանի որ խորքը ստեղծագործական կիրքը կը հանդիսանայ բոյոր արուեստի ըմբռնումներուն: Արդ, երեսուն տարի յետոյ, Փարիզի մէջ կը սկսի հետաքրքրութիւն մը Քոչարի անձրպետային նկարչութեան նկատմամբ ու այս ցուցահանդէսը կուզայ արդար դատաստան մը պահանջելու ու Վալտեմար Ժորժի ներածականը, որ մեծապէս շահեկան է, կը բանայ գաղափարութիւնը: Կը թարգմանենք հանրածանօթ քննադատին տողերը.—

«Քոչարի անձրպետին մէջ նկարչութիւնը արդի արուեստի չափահաս յաղթանակներէն մէկը կը հանդիսանայ այն հեղինակութիւններու կողքին, ինչպէս են Պրանքիսիի բիւրեղացած Ֆորմերը, եւն.»:

Քոչարի անձրպետի մէջ նկարչութիւնը քոչարուի մը չէ բնաւ, այլ ինքնավար արուեստ մը, որ ունի իր քերականութիւնն ու բառամթերքը»:

Այնուհետեւ Վալտեմար Ժորժ մանրամասն կը ներկայացնէ Քոչարի արուեստին զանազան թափերը, կատարած ցուցահանդէսները, ծանօթութիւններն ու արկածախնդիր արուեստագէտի փնտառումներն ու դժուարութիւնները: Գրքին ընթերցումէն ետք հպարտութեան զգացում մը կ'ունենայ ընթերցողը, տեսնելով Քոչարի անունը ժամանակակից արուեստի վարպետներու անուններուն ջով:



Զ. ՄՈՒԹԱՅԵԱՆ

Մուլթաֆեանի ցուցադրած վերջին գործերը լաւագոյն կերպով կը միանան երազի եւ իրականութեան ճանապարհին վրայ: Իրապաշտ նկարիչը իր ոյժը, իր գոյներուն զօրաւոր ազդեցութիւնը դրած է իր կտաւներուն: Մանաւանդ հայ կնոջ դիմանկարները խօսուն են, իրենց ներքին մտածումներուն զօրաւոր արտայայտութեամբ: Իր տեսարանները ծովին, երկինքին եւ արեւին միաճուլումով՝ երազային եւ հեռաւոր մթնոլորտ մը կը ստեղծեն:

Իր նկարները կը սիրենք, այն համոզումով որ նկարիչ Մուլթաֆեան տարիներու ընթացքին, յարատեւութեամբ, տպաւորապաշտ դպրոցին հետեւելով կըրցած է տիրանալ լաւագոյն թէքնիքի մը:

S.

*

ԺԻՐԱԳՕ

Նկարիչ Ժիրազօ, Փարիզի Ժերար Մուրկ պատկերաւորահին մէջ ցուցադրեց իր առաջին ջրանկարները: Լիբանանահայ նկարիչը քանի մը տարի է ի վեր կը հետեւի Փարիզի նկարչական շարժումին: Իր գործերը թէեւ փոքր չափերու վրայ՝ բայց իրենց բանաստեղծական, զգայուն եւ միատիկ մթնոլորտով կը տպաւորեն: Ջրաներկի աշխատելու կերպը, իր եւ հանրութեան միջեւ լաւագոյն հաղորդակցութեան միջոցն է, բնորոշելու իր մտածումները, զգացումները, երազները: Ժիրազօ արուեստի մզլ դտած է արդէն իր ճամբան եւ միջոցներէն մէկը՝ ջրաներկը՝ հասցնելով պարզութեան եւ լաւագոյն կերպով արտայայտութեան:

S.



ԱՅՍ ՀԱՏՈՐԻՆ ՄԷՁ



ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ - Նախերգանք, Տապանագիր	1
ՀՐԱԶ ԶԱՐԳԱՐԵԱՆ - Գուպար խորհրդաւոր	5-6
ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ - Կեանքին մտախուզին մէջէն	7
Զ. ՈՐԹՈՒՆԻ - Ես ինծի հետ	12
ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԷՍՍԵԱՆ - Հատուած մը անտիպ վէպէն	17
ՎԱՀՐԱՄ ՄԱՎԵԱՆ - Կարօտ	28
ԶԱՐԵՀ ՄՈՒԹՍՖԵԱՆ - Նկարչութեան արդի ճգնումները	29
ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ - Մտակոծում ծովուն դիմաց	38
ՀՐԱԶ ԶԱՐԳԱՐԵԱՆ - Ռիվիերայի պարիկը	41
Թ. ԹՈՐԱՆԵԱՆ - Բանաստեղծութիւններ	53
ԵՂԻՇԷ ԱՅՎԱԶԵԱՆ - Սուղամական հրքիռներ	54
ՆԱԶԱՐԷԹ ԹՕՓԱԼԵԱՆ - Մարդ մը Միջերկրականի վրայ	58
ԱԻ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ - Երջանկութեան մասին	66
ՎԱՀԷ ԿՈՏԷԼ - Դանիէլ վարուժան, Արմէնի (<i>Ֆրանսերէն</i>)	73
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ - Աշխարհս մի փաննարա է...	76-77
ԺԱՆ ԿՐՈՖԻԷ - Փիլիսոփայութիւն եւ Բանաստեղծութիւն	78
ԺԱՔ ՓՐԵՎԵՐ - Պատերազմ, Արիւն եւ փետուր	82
ՖՐԱՆՍՈՒԱ ՎԻՂՈՆ - Բալլադ	82
ՀՐ. Ն. ԹՈՐՈՍԵԱՆ - Անձեր, Գէպքեր եւ Տպաւորութիւններ	81
ՏՔԹ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ - Ճակատագիր եւ Ժառանգականութիւն	97
ՌՈՒԲԷՆ ԶԱՐԵԱՆ - Շէֆապիրը հայ իրականութեան մէջ	119
ԳԵՂԱՄ ՔԵՐԷՍԹԷՃԵԱՆ - Աւանդութիւն եւ էրաժշտութիւն	123
Ժ. ՊԱԶԱՆ - Գրիգոր Նարեկացի (<i>Ֆրանսերէն</i>)	129
Լ. ՄԻՐԶՈՅԵԱՆ - Բիւրականի Աստղադիտարանը	137

ՔՐՈՆԻԿ - ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Ժ. Միրիմեան, Գ. Ք., Գ. Ֆէնէրմեան, Վ. Երանգեան, Զ. Ռ.,
Է. Մեհտէրեան, Ս. Թօփալեան, X.

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Հ Ա Ն Գ Է Ս

*



ԱՆԴԱՍՏԱՆ-ի այս հատորին
սպագորուի իւնը աւարտեցաւ
1966 Մարտին, Արաքս
սպարանին մէջ, իմ ջագրու-
թեամբ Բ. Քոփալեանի.
Փարիզ:

Directeur : P. TOPALIAN

Imprimerie Araxes
46, Rue Richer
PARIS - 9^e

ANDASTAN

ARTS et LETTRES

Revue arménienne

Directeur : PUZANT TOPALIAN

46, RUE RICHER :: PARIS (9^e)

Téléphone : PRO. 05-73

•

Compte Ch. Post. Paris 5 195 59

ԳԻՆ՝ 20 ՖԲ.

Imp. 'Araxes', 46, Rue Richer Paris-9^e

Fonds A.R.A.M